Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
շաբաթօրյա դպրոցի համար

2015 թվականի չորրորդ եռամսյակ

ԵՐԵՄԻԱ

Իմրե Տոկիկս

Բովանդակություն

Դաս 1. 26.09-02.10 ԵՐԵՄԻԱՅԻ ԿԱՆՉՎԵԼԸ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 6
Դաս 2. 03.10-09.10 ՃԳՆԱԺԱՄԸ 14
Դաս 3. 10.10-16.10 ԻՍՐԱՅԵԼԻ ՎԵՐՋԻՆ ՀԻՆԳ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ 23
Դաս 4. 17.10-23.10 ՀԱՆԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄ 32
Դաս 5. 24.10-30.10 ՄԱՐԳԱՐԵԻ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 41
Դաս 6. 31.10-06.11 ԽՈՐՀՐԴԱՆԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 50
Դաս 7. 07.11-13.11 ՃԳՆԱԺԱՄԸ ԾԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 59
Դաս 8. 14.11-20.11 ՀՈՎՍԻԱՅԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ 67
Դաս 9. 21.11-27.11 ԵՐԵՄԻԱՅԻ ԼՈՒԾԸ 76
Դաս 10. 28.11-04.12 ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՎԵՐՈՒՄԸ 85
Դաս 11. 05.12-11.12 ՈՒԽՏԸ 94
Դաս 12. 12.12-18.12 ՀԵՏ՝ ԴԵՊԻ ԵԳԻՊՏՈՍ 102
Դաս 13. 19.12-25.12 ԵՐԵՄԻԱՅԻ ԴԱՍԵՐԸ 111

ԵՐԵՎԱՆ
2015

ԱՂՈԹՔԻ ՇԱԲԱԹ
2015 թվականի դեկտեմբերի 19-26

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ»

«Բարձր փչեցե՛ք, փչեցե՛ք փողերը: Ծուտով Տերը մեր գալիս է»: Այս քաջածանոթ օրհներգի բառերը արձագանք են գտնում Յոթերորդ օրվա ադվենտիստների սրտերում, ովքեր անհամբերությամբ սպասում են այդ փառավոր օրվան:

«Վերածնունդը և Յիսուսի երկրորդ գալուստը» շատ արդիական նյութ է այս տարվա աղոթքի շաբաթվա համար: Այն ցույց է տալիս երեք հրեշտակների պատգամի հռչակման կարևորությունը, օգնում է վստահություն ձեռք բերել աստվածաշնչյան մարգարեությունների և առաջին և երկրորդ գալստյան իրական բնույթի հարցում:

Ի՞նչ դեր է խաղում երեք հրեշտակների պատգամը եկեղեցու վերածննդի և մեր կյանքի համար: Ինչպե՞ս են կապված սրբարանն ու այդ կարևոր լուրը: Ո՞րն է Քրիստոսի երկրորդ գալստյան նշանների, վերածննդի և առաքելությանը մասնակցության կապը: Որքանո՞վ կարող ենք վստահ լինել երկրորդ գալստյան և հարության հույսի հարցում: Ո՞րն է հազարամյակի և երկրորդ հարության նշանակությունը մեծ պայքարի համատեքստում: Այս և այլ հարցերը կքննարկվեն այս ոգևորիչ աղոթքի ընթերցումներում:

Հրավիրում եմ ձեզ՝ միանալու ինձ և աղոթքով մտորելու այս կարևոր հարցերի շուրջ, որպեսզի միասին տեսնենք վերածննդի և վերափոխման վերջնական արդյունքը՝ հավիտենական կյանքը Աստծո հետ...

Թո՛ղ Տերն օրհնի համատեղ հավաքված համաշխարհային եկեղեցին, որ ուսումնասիրենք այդ առանձնահատուկ աղոթքի շաբաթվա ընթացքում:

Թեդ Ուիլսոն

Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր: Տարեվերջյան աղոթքի շաբաթը առանձնահատուկ օրհնություն է Աստծո ժողովրդի համար: Այդ շրջանի համար նախապատրաստված ընթերցումներն օգնում են գիտակցելու և Աստծո առջև խոստովանելու սեփական մեղքերը և հաշտվել մերձավորների հետ, եկեղեցու անդամներին դրդում են նոր կյանքի: Աղոթքի շաբաթը եկեղեցու անդամների միջև փոխհարաբերությունների նորոգման ժամանակ է, սեփական դերի գիտակցում՝ մարդկանց փրկության գործում: Թո՛ղ 2015 թվականի աղոթքի շաբաթը նպաստի հոգևոր միաբանությանը և եկեղեցու բոլոր անդամների առավել եռանդուն ավետարանչական գործունեությանը:

ԵԱԲ
աղոթքի
ծառայություն

ՄԻ-ՅԻՏԱՆ

(MI-YITTAN)

Աստվածաշնչյան եբրայերենը, ինչպես և լեզուների մեծ մասը, ունի դարձվածքներ, բառեր կամ արտահայտություններ, որոնց իմաստն անհամեմատ ավելի լայն է, քան այդ բառերի նշանակությունը: Որպես օրինակ կարող է ծառայել Մի-Յիտան արտահայտությունը: Հին եբրայերեն լեզվում դա երկու բառ է. մի (mi)՝ «ո՞վ» և յիտան (yittan)՝ «կտա»: Այսպիսով, մենք ունենք «ո՞վ կտա» արտահայտությունը:

Աստվածաշնչում այս արտահայտությունը եբրայերենով արտահայտում է ինչ-որ բան ստանալու ցանկության, մաղթանքի, փափագի (ձգտման) միտքը:

Օրինակ, եգիպտական ստրկությունից ազատվելուց հետո Իսրայելի որդիները, անապատում խնդիրների բախվելով, բացականչում էին. «Երանի թե Եհովայի ձեռքովը մեռած լինեինք Եգիպտոսի երկրում» (Ելից 16.3): «Երանի» թարգմանված դարձվածքը mi-yittan բառակապակցությունն է: 14.7 սաղմոսում Դավիթը բացականչում է. «Ո՜հ թե Սիոնից գար Իսրայելի փրկությունը. երբ որ Տերն իր ժողովրդի գերությունը դարձնի՝ Հակոբը կցնծա, և Իսրայելն ուրախ կլինի». եբրայերենում այս արտահայտությունն սկսվում է «Mi-yittan» խոսքով: Հոբի 6.8-ում Հոբը բացականչում է. «Երանի թե ուզածս կատարվե՜ր, և իմ ակնկալածը տա՜ր Աստված», և կրկին «երանին» «mi-yittan»-ն է:

Սուրբ Գրքում ևս մի հատված կա, որը գրի է առնված Երկրորդ Օրինաց 5.29-ում: Իսրայելի ժողովրդին հիշեցնելով Աստծո նախախնամության մասին անցյալում՝ Մովսեսը մատնացույց է անում Աստծո հետ իր միջոցով, այլ ոչ թե ուղղակիորեն խոսելու նրանց ցանկությունը, որպեսզի չմահանան: Տերը, բավարարված լինելով նրանց խնդրանքով, ասում է. «Երանի թե նորանց սիրտն էլ այնպես լիներ, որ ինձանից վախենալով իմ բոլոր պատվիրանքները պահեին ամեն ժամանակ, որպեսզի իրենց համար բարի լիներ և իրենց որդիներին էլ՝ հավիտյան»: «Երանի» թարգմանված բառը «mi-yitan»-ն է:

Անհավատալի՜ է: Տերը՝ Արարիչ Աստված, Նա, Ով ստեղծել է տարածությունը, ժամանակն ու նյութը, Նա, Ով Ադամի մեջ կենդանության շունչ փչեց, արտասանում է դարձվածք, որը սովորաբար արտահայտում է մարդկային թուլությունն ու սահմանափակությունը:

Խոսքը վերաբերում է ընտրության ազատության իրական բնույթին, այն սահմանափակումներին, որ Աստված կամավոր կերպով ընդունել է մեծ պայքարի ամենաթեժ պահին: «Mi-yittan»-ի այս օգտագործումը ցույց է տալիս, որ Աստված Իրեն թույլ չի տա ոտնահարել ընտրության ազատությունը (եթե դա տեղի ունենար, ազատությունը կանհետանար):

Եթե երբևէ Հին Կտակարանի որևէ գիրք բացահայտել է՝ Իր ժողովրդի հնազանդությունը տեսնելու՝ Աստծո ցանկության իրական լինելը, ապա այդպիսի գիրք կարելի է անվանել Երեմիա մարգարեի գիրքը, որ մենք ուսումնասիրելու ենք ողջ եռամսյակ: Հին Մերձավոր Արևելքում խոշոր աշխարհաքաղաքական փոփոխությունների ֆոնին Երեմիա մարգարեի գիրքը պատմում է մարգարեի ծառայության և ուղերձների մասին, այն մասին, թե ինչպես էր նա ջանադիր կերպով և հաստատակամորեն Աստծո Խոսքը քարոզում ժողովրդին, որի մեծամասնությունը չէր ցանկանում լսել իրեն:

Սկսած մարգարեի կանչվելուց՝ Երեմիա մարգարեի գիրքը պատմում է աստվածաշնչյան պատմության տասնամյակների մասին, թե ինչպես էր Տերն օգտագործում այդ երիտասարդին (իսկ հետագայում՝ տարեց մարդուն) այն հիմնական ճշմարտությունները հռչակելու համար, որոնք ամենասկզբից աստվածաշնչյան ուսմունքի հիմքն էին: Եվ գրքում շարադրված բոլոր հոգևոր ճշմարտություններից հետևյալ բառերն արտահայտում են այն բանի էությունը, ինչ Տերն ակնկալում է Իր ժողովրդից. «Այսպես է ասում Տերը. Իմաստունը իր իմաստությունով չպարծենա, և զորավորը իր զորությունով չպարծենա, հարուստը իր հարստությունով չպարծենա. Այլ սրանով պարծենա, ով որ պարծենում է, թե հասկանում և ճանաչում է ինձ, որ ես եմ Տերը, որ երկրի վրա ողորմություն, իրավունք և արդարություն եմ անում, որ ես սրանց եմ հավանում, ասում է Տերը» (Երեմիա 9.23,24):

Երեմիայի գիրքը կարդալ՝ նշանակում է կատարել ճանապարհորդություն, հոգևոր ուղևորություն՝ դեպի մարդկային արատավորության խորքերը և դեպի Տեր Աստծո մեծության և զորության խորքերը, Ով այն բարձունքներից կանչում է մեզ՝ անգամ ընկած վիճակում գտնվողներիս. «Mi-yittan՝ եթե ձեր սիրտն այդպիսին լիներ»:

Իմրե Տոկիկսը փիլիսոփայության դոկտոր է, Հին Կտակարանի ամբիոնի վարիչը Հունգարիայի Պեսել քաղաքի ադվենտիստական աստվածաբանական քոլեջում, Հին Կտակարանի և հրեական կրոնական գիտությունների պրոֆեսոր, ունի իրավագիտության դոկտորի գիտական աստիճան:

ԴԱՍ 1

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26 – ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2

ԵՐԵՄԻԱՅԻ ԿԱՆՉՎԵԼԸ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եսայիա 1.19, Երեմիա 7.5-7, Գ Թագավորաց 2.26, Երեմիա 1.1-5, Եսայիա 6.5, Երեմիա 1.6-19, Մատթեոս 28.20:

Հիշելու համարը.

«Քեզ որովայնում չստեղծած՝ ես քեզ գիտեի, և արգանդից դեռ դու դուրս չեկած ես քեզ սրբեցի, ես քեզ ազգերի մարգարե եմ դրել» (Երեմիա 1.5):

Երեմիայի կյանքի մասին մենք ավելի շատ բան գիտենք, քան ցանկացած այլ հինկտակարանյան մարգարեի: Նրա գրքում շարադրված կենսագրական փաստերը մեզ օգնում են՝ ավելի լավ հասկանալու նրա ծառայությունը: Երեմիան այնպիսի հսկայական ազդեցություն է գործել պատմության վրա, որ անգամ Հիսուսի ժամանակներում ուսումնական գրականությունը և մարգարեական դպրոցների ծրագիրը հիմնված էին Երեմիայի մարգարեական ծառայության վրա:

Միևնույն ժամանակ, եթե դատենք մարդկային չափանիշներով, ապա կարելի է ասել, որ մարգարեի առաքելությունը մեծ հաջողություն չի ունեցել: Չնայած բոցավառ նախազգուշացումների և հայտարարությունների տասնամյակներին՝ ժողովրդի մեծամասնությունը չէր ցանկանում ականջալուր լինել Տիրոջ կողմից իրենց ուղարկված լուրին:

Բայց, չնայած դիմադրությանը, Երեմիան մնում էր անկաշառ, նա մնում էր որպես «ամուր քաղաք և երկաթի սյուն և պղնձի պարիսպներ» (Երեմիա 1.18)՝ հենվելով ոչ թե իր, այլ Աստծո զորության վրա:

Երեմիայի կյանքը շատ առումներով երջանիկ չէր: Նրա կանչվածությունը նրան ցավ, տառապանք, մերժվածություն, անգամ բանտարկություն բերեց: Ողբերգությունն այն է, որ այդ աղետներից շատերը բխում էին այն մարդկանցից, ում ինքը ցանկանում էր օգ-

նել՝ նրանց հայացքն ուղղելով Աստծուն: Այդպիսով, Երեմիան յուրովի կանխագործեց այն, ինչին հարյուրավոր տարիներ անց այս երկրի վրա բախվեց Ինքը՝ Հիսուսը:

Միաշաբթի սեպտեմբերի 27

Մարգարեներ

Մարգարեները, ըստ իրենց կանչվածության, Աստծո օրենքի պաշտպաններն էին: Նրանց լուրը հիմնված էր ուխտի և Տասը պատվիրանների վրա (Երեմիա 11.2-6): Միքիա մարգարեն իր գրքում տալիս է մարգարեի առաքելության սահմանումը. «իմացնեմ Յակոբին իր հանցանքը, և Իսրայելին՝ իր մեղքը» (Միքիա 3.8): Իսկ մեղքը կարելի է սահմանել միայն օրենքի լույսի ներքո (տե՛ս Հռոմեացիս 7.7):

Ո՞րն էր ժողովրդին ուղղված մարգարեական լուրը: Ի՞նչ իմաստով է այդ լուրն այսօր արդիական մեզ համար: Եսայիա 1.19, Երեմիա 7.5-7, Եզեկիել 18.23: (Տե՛ս նաև Մատթեոս 3.7-11-ը): _____

_____

Աստծո դատաստանն անխուսափելի իրադարձություն չէ, բայց այն կգա, եթե մարդիկ դարձի չգան իրենց չար ճանապարհներից: Սակայն այնքան էլ հեշտ չէ փոխվելը, հատկապես՝ եթե մարդիկ վարժվել են չարիք գործելուն: Մեզանից ո՞վ չի նկատել, թե որքան արագ են մարդիկ վարժվում չարիքին, որը մի ժամանակ գարշելի էր իրենց համար: Մարգարեների նպատակն էր՝ ցույց տալ մարդկանց, թե որքան սոսկալի է մեղքը, և անխուսափելի՝ հետևանքները: Այդ լուրն, անշուշտ, նրանց անձնականը չէր, այն բխում էր Տիրոջից:

Մարգարեները չեն պատմում այն մասին, թե ինչ կերպ է Աստծո խոսքը բացվել իրենց, կամ էլ այն մասին, թե ինչպես են իրենք լսել այն: Երբեմն Աստված նրանց հետ խոսում էր ուղղակիորեն, այլ դեպքերում Սուրբ Հոգին լուրը նրանց բացում էր երազի մեջ կամ տեսիլքում, կամ էլ «մեղմ ու բարակ ձայնի» միջոցով (Գ Թագավորաց 19.12): Սակայն ստանալով լուրը՝ մարգարեներն Աստծո կամքը փոխանցում էին ոչ միայն հասարակ մարդկանց, այլ նաև, անհրաժեշտության դեպքում, թագավորներին, կայսրերին և զորապետներին:

Այս խնդրի կատարումը մեծ պատասխանատվություն էր դնում նրանց վրա. եթե նրանք ասեն ճշմարտությունը, իշխանություն ունեցող

մարդիկ կարող են սպանել իրենց, իսկ եթե ոչ, ապա նրանց կհասնի Աստծո դատաստանը: Հիմնվելով աստվածաշնչյան մարգարեության վրա՝ կարելի է ասել, որ մարգարեները լրջորեն էին վերաբերվում իրենց կոչման իրականացմանը:

Մենք կարող ենք ուրախանալ, որ նրանք կատարել են իրենց առաքելությունն ու իրենց լուրը մեզ են թողել Աստվածաշնչում: Հարց է ծագում՝ նման այն հարցին, որ հնչում էր Երեմիա մարգարեի կյանքի օրոք. կհնազանդվե՞նք արդյոք մենք:

Այսքան տարի անց ինչի՞ մասին են շարունակում խոսել մարգարեները: Ըստ էության, ի՞նչն է միշտ եղել Աստծո ժողովրդի համար հիմնական լուրը:

Երկուշաբթի սեպտեմբերի 28

Երեմիայի ընտանիքը

Կարդացե՛ք Գ Թագավորաց 1 և Գ Թագավորաց 2.26-ը: Ինչո՞ւ Սողոմոն թագավորը պաշտոնից հեռացրեց Աբիաթար քահանայապետին և նրան ուղարկեց Անաթովթում գտնվող կալվածքը: _____

_____

_____

Իր գահը հաստատելով՝ Սողոմոնը ժառանգության համար Ադոնիայի դեմ պայքարի ընթացքում Աբիաթար քահանայապետին ազատեց զբաղեցրած պաշտոնից և նրան արտաքսեց իր հայրենի քաղաքը՝ Անաթովթ, որը գտնվում էր Երուսաղեմից մոտավորապես երեք մղոն դեպի հյուսիս-արևելք: Երեմիայի հայրը՝ Քեղկիան, Անաթովթում բնակվող քահանաների ընտանիքի սերնդից էր: Ոմանք համարում են, որ Երեմիան, հնարավոր է, Աբիաթարի ժառանգն էր: Բոլոր դեպքերում, մենք Երեմիա 1.1-ից գիտենք, որ երիտասարդը սերում էր ազնվատոհմ ընտանիքից: Այդպիսով, մենք տեսնում ենք, որ Տերը տարբեր դասակարգերի պատկանող մարդկանց էր կանչում մարգարեական ծառայության, այն է՝ հովիվների, ռաբբիների, ձկնորսների և քահանաների:

«Պատկանելով ղևտացիների քահանայությանը՝ Երեմիան մանկուց դաստիարակվել էր քահանայական ծառայության համար: Այն երջանիկ տարիներին, երբ նա պատրաստվում էր ծառայելու, նա չէր էլ մտածում այն մասին, որ դեռ ծննդյան օրվանից ինքը կանչված է

եղել՝ դառնալու «ազգերի մարգարե», և երբ հետևեց Աստծո կոչը, անարժան լինելու զգացողությունը հարվածեց նրան: «Ո՜հ, ով Տեր Եհովա, ահա ես խոսել չգիտեմ, որովհետև ես մանուկ եմ» (Երեմիա 1.5,6)» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 407):

Քահանաները պետք է լինեն ազգի բարոյական և հոգևոր ղեկավարները. նրանց վրա էր դրված պետության մեջ հոգևորությունը և բարոյականությունը պահպանելու պարտականությունը: Նրանցից ոմանք հավատարիմ էին այդ խնդրին, ուրիշները չարաշահում էին իրենց դիրքն ու խախտում էին օրենքը: Ինչպես մենք շուտով կտեսնենք Երեմիայի գրքում, մարգարեն հանդես եկավ այդ անհավատարիմ քահանաների դեմ, ովքեր իրենց գործողություններով ցույց տվեցին, որ իրենք արժանի չեն սուրբ կոչումին ու կանչվածությանը:

Որո՞նք են ձեր հոգևոր պարտականությունները տանը, եկեղեցում կամ աշխատանքի վայրում: Եթե մարգարեն այսօր դիմեր ձեզ, նա ի՞նչ կասեր ձեզ:

Երեքշաբթի սեպտեմբերի 29

Երեմիայի կանչվելը՝ որպես մարգարե

Կարդացե՛ք Երեմիա 1.1-ը: Այս հատվածը մեզ ի՞նչ է ասում Երեմիայի կանչվելու մասին: _____

_____

_____

Մյուս մարգարեների նման՝ Երեմիան էլ հարց չէր տալիս, թե Ո՞վ է կանչում իրեն: Իր գրքում նա հստակ կերպով ասում է, որ իրեն եղավ «Տիրոջ խոսքը»: Կասկած չկա, որ այս անկեղծ համոզվածությունը դրդեց նրան՝ շարժվելու առաջ՝ չնայելով դժնդակ դիմակայությանը, դժվարին աշխատանքին, տառապանքներին ու փորձություններին:

Երեմիայի կանչվելը տեղի ունեցավ Հովսիայի թագավորության տասներեքերորդ տարում, այսինքն՝ մոտավորապես ՔԱ 627/626 թվականներին: Մենք չգիտենք մարգարեի ծննդյան ճշգրիտ տարեթիվը կամ նրա ճշգրիտ տարիքը, երբ նա սկսեց իր ծառայությունը: Թեև նա, ինչպես կտեսնենք, իրեն մանուկ էր համարում, չափազանց երիտասարդ՝ նման առաջադրանքը կատարելու համար:

Կարդացե՛ք Երեմիա 1.4,5-ը: Մխիթարության և քաջալերանքի ի՞նչ խոսքեր նա ստացավ: _____

_____

Երեմիայի՝ որպես մարգարե կանչվելը տեղի էր ունեցել դեռևս նախքան նրա ծնունդը: Աստված նրան նախատեսել էր մարգարեական ծառայության համար՝ նրա սաղմնավորման պահից: «Ես քեզ սրբեցի» թարգմանված բառերը ծագում են «սրբվել», «սուրբ լինել» և «առանձնացվել, անձեռնմխելի լինել» բառերից: Այստեղ, անշուշտ, սրբազան և կրոնական նշանակություն է դրված՝ կապված հենց սրբարանում ծառայության հետ: Իսկապես, «սրբարան» և «սրբեցի» բառերը նույնարմատ են: Հին եբրայերենում այս բայի նշանակությունն է՝ սուրբ նպատակի համար առանձնացված: Սրանում էր Աստծո ծրագիրը Երեմիայի համար՝ նրա ծննդից դեռ շատ առաջ: Այս տեքստերը չեն խոսում կանխորոշվածության մասին, դրանք խոսում են Աստծո նախախնամության մասին:

Աստված ի սկզբանե գիտի վերջը: Այս բանի ըմբռնումն ինչպե՞ս կարող է մխիթարել մեզ փորձությունների օրերին, որ ունի յուրաքանչյուր մարդ:

Չորեքշաբթի սեպտեմբերի 30

Իրենց ծառայությունը դժկամությամբ սկսած մարգարեները

Չնայած Տիրոջ հավաստիացումներին, որ Երեմիան Աստծո կողմից ընտրված էր տվյալ խնդրի իրագործման համար՝ երիտասարդը վախենում էր այդ դերից և իրեն պատրաստ չէր զգում դրա համար: Հնարավոր է՝ իմանալով այն ժամանակվա մարդկանց թույլ հոգևոր վիճակը և գիտակցելով աշխատանքի վեհությունը՝ Երեմիան չէր ցանկանում կատարել այն:

Համեմատե՛ք Երեմիա 1.6-ը Եսայիա 6.5-ի և Ելից 4.10-15-ի հետ: Ի՞նչ ընդհանուր բան կա այս տեքստերի միջև: _____

_____

_____

_____

Այս մարդկանցից ոչ մեկը, տարբեր պատճառներով, իրեն ընդունակ չէր համարում՝ կատարելու իր վրա դրվող խնդիրը: Հնարավոր է՝ այս պայմանը, մասնավորապես՝ Աստծո բանբերը լինելու նման սկզբունքային և կարևոր խնդիրը կատարելու հարցում, սեփական թուլության զգացողությունն էր մարգարեի առաքելության կատարման կարևորագույն նախադրյալը: Զարմանալի չէ, որ սկզբնական

շրջանում նրանք առհասարակ խուսափում էին այս խնդիրը կատարելուց:

Նաև ուշադրությո՛ւն դարձրեք Երեմիայի առաջին արձագանքին՝ իր կանչվելուց հետո: Նա անմիջապես, Մովսեսի նման, հայտարարեց, որ ինքը խոսել չգիտի: Եսայիան նույնպես իր պատասխանում հիշատակում էր իր բերանն ու շրթունքները: Բոլոր դեպքերում նրանք հաստատ գիտեին. բացի մնացած ամեն բանից, որ իրենք պետք է անեին որպես մարգարեներ, իրենց առաքելությունը կապված է լինելու տեղեկատվության խոսքային փոխանցման հետ: Նրանք պետք է լուրն ստանային Աստծուց և այն փոխանցեին ուրիշ մարդկանց: Ի տարբերություն հաղորդակցության ժամանակակից միջոցների, երբ կարելի է ստեղծել կայքէջ կամ ուղարկել տեքստային հաղորդագրություն, այն ժամանակներում տեղեկատվության փոխանցումն իրականացվում էր դեմ առ դեմ: Պատկերացրե՛ք, որ դուք կանգնած եք թշնամաբար տրամադրված ղեկավարի կամ անհնազանդ ժողովրդի առջև ու հանդիմանության և նախազգուշացման խիստ խոսքեր եք փոխանցում: Այդ առաքելությունը կատարելու՝ նրանց դժկամությունը լիովին հասկանալի է:

Կարդացե՛ք Երեմիա 1.7-10-ը: Ո՞րն էր Աստծո պատասխանը Երեմիային: Ուշադրությո՛ւն դարձրեք, որ այդ պատասխանը մեզ ևս աջակցություն է խոստանում այն առաքելության մեջ, որի կատարմանը կանչված ենք մենք Աստծո կողմից:

Հինգշաբթի հոկտեմբերի 1

Նշենու փայտից գավազանը

Մարգարեն Աստծո վկան է. նրա առաքելությունն է՝ խոսել ոչ թե իր կողմից, այլ Աստծո անունից: Երեմիան կանչված էր ոչ թե այն բանի համար, որ գտնի ազգի խնդիրների լուծումը կամ հանրաճանաչ մարդ դառնա կամ դյուրաշարժ ղեկավար, ում կհետևեն մարդիկ: Երեմիան կանչված էր առանձնահատուկ առաքելություն կատարելու համար՝ Աստծո խոսքը փոխանցելու ժողովրդին և ղեկավարներին: Ծեշտն այստեղ դրվում է ոչ թե մարդու կամ մարդկային հնարավորության, այլ Աստծո կառավարման և իշխանության վրա, Ով բոլոր խնդիրների միակ լուծումն է: Իհարկե՛, այդ նույն պայմանը ճշմարիտ է նաև այսօր:

Ինչի՞ մասին էր Երեմիայի առաջին տեսիլքը: (Տե՛ս Երեմիա 1.11-19): _____

_____

_____

Աստվածաշնչի թարգմանությունների մեծ մասը 11-րդ համարի բառը թարգմանում է որպես «նշենի գավազան»: Այդ թարգմանությունները, սակայն, չեն արտացոլում եբրայերեն բառախաղը: «Նշենի» թարգմանված բառը նույն արմատն ունի, ինչ և 12-րդ համարում օգտագործված «հսկել (ուշադիր հետևել)» բայը, որտեղ Տերը հավաստիացնում է մարգարեին, որ Ինքը «հսկելու» է, որ Իր խոսքը կատարվի:

Կարելի է պնդել, որ Երեմիա մարգարեի ողջ գրքի հիմնական գաղափարը դրված է 11 և 12-րդ համարներում: Աստված շնորհի և ներման Աստված է: Եթե Նրա ժողովուրդը երես դարձնի մեղքից, Նա, հավատարիմ լինելով, կների և կվերականգնի նրանց, իսկ եթե ոչ, ապա Նա կիրագործի դատապարտման և պատժի Իր խոսքը:

Ինչպես տեսնում ենք, Աստծո խոսքերը նախատեսված էին ոչ միայն ժողովրդի համար: Տերն անմիջապես դիմեց Երեմիային՝ նրան նախազգուշացնելով պատրաստ լինել այն դիմադրությանը, որին ինքը հանդիպելու է: Անկախ տեղի ունեցող իրադարձություններից՝ Երեմիան կարող էր վստահ լինել Աստծո ներկայության մեջ: Նա, ինչպես մենք կտեսնենք, դրա կարիքն ուներ:

Իսկ մենք ունե՞նք դրա կարիքը:

Կարդացե՛ք Մատթեոս 28.20-ը: Մենք ի՞նչ վստահություն կարող ենք ձեռք բերել այդ բառերից, որն անհրաժեշտ է մեզ՝ վերջին ժամանակներում ապրողներիս:

Ուրբաթ հոկտեմբերի 2

Հետագա ուսումնասիրության համար

Երեմիա մարգարեի գրքի մեկնություններում Մարտին Լյութերը մարգարեի մասին գրում էր հետևյալը. «Երեմիան թախծոտ մարգարե էր, որ ապրում էր ողբերգական ու դժնդակ ժամանակներում և, ավելին, նրա ծառայությունը բարդանում էր նրանով, որ նա դիմում էր անհնազանդ ու համառ մի ժողովրդի: Ըստ երևույթին, նա մեծ հաջողությունների չհասավ, որովհետև բախվեց իր թշնամիների դաժանությանը: Նրանք մի քանի անգամ փորձեցին նրան զրկել

կյանքից: Նրանց դիմադրությունը խիստ էր, նրանք մի քանի անգամ ծեծել էին նրան: Սակայն մարգարեն ողջ մնաց, որպեսզի սեփական աչքով տեսնի իր երկրի ամայացումն ու ժողովրդի գերությունը»:

«Քառասուն տարի Երեմիան պետք է ճշմարտության և արդարության վկա լիներ ժողովրդի համար: Չտեսնված նահանջի տարիներին նա դատապարտված էր՝ ծառայության օրինակ լինելու ճշմարիտ Աստծուն: Երուսաղեմի սոսկալի պաշարման ժամանակ նա Եհովայի մունետիկն էր: Նրան բաժին ընկավ կանխագուշակել Դավթի տան անկումն ու Սողոմոնի կառուցած հիասքանչ տաճարի ավերումը: Բանտ նետվելով իր խիզախ խոսքերի համար՝ նա շարունակում էր հանդիմանել բարձր խավերում տիրող մեղքերը: Ծաղրված, ատելի ու մարդկանցից մերժված լինելով՝ նա, վերջիվերջո, պետք է դառնար վկան՝ վերահաս դատաստանի մասին իր սեփական կանխագուշակությունների ճշգրիտ իրագործման և ժողովրդի հետ միասին տաներ այն ողջ ցավն ու տառապանքները, որ հաջորդելու էր դատապարտված քաղաքի ավերմանը» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 408):

Հարցեր քննարկման համար

Աստված նախազգուշացնում է Երեմիային՝ նրա ժողովրդի ներկայացուցիչների կողմից լուրջ դիմադրության մասին: Դա մեզ՝ ժամանակակից Յոթերորդ օրվա ադվենտիստներիս համար ամենատխուր փաստն է: Երեմիա 1.17-19-ը կարդացե՛ք ևս մեկ անգամ: Ո՞վ է հանդես գալու նրա դեմ: Մենք ի՞նչ լուրջ դաս պետք է քաղենք այս պատմությունից: Ինչպիսի՞ն է մեր վերաբերմունքը մարգարեական խոսքի հանդեպ, հատկապես՝ եթե մենք տհաճ լուրեր ենք լսում: Էլեն Ուայթից վերը բերված մեջբերումն ինչպե՞ս է օգնում՝ գիտակցելու այն սոսկալի ճշմարտությունը, որ այն մարդիկ, ովքեր պետք է աշխարհի համար բացահայտեին ճշմարիտ Աստծուն, ընդդիմանում էին Նրա պատգամաբերին և պայքարում էին նրա դեմ: (Տե՛ս Ժողովող 1.9):

ԴԱՍ 2

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-9

ԾԳՆԱԺԱՄԸ (ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ)

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Դատավորաց 2.1-15, Գ Թագավորաց 12.26-31, Բ Մնացորդաց 33.9,10, Երեմիա 2.1-28, 5.2,3:

Հիշելու համարը.

«Սուրբ էր Իսրայելը Տիրոջ համար, նրա արդյունքի առաջնեկը, բոլոր նրան ուտողները հանցավոր էին լինում, չարիք էր գալիս նրանց վրա, ասում է Տերը» (Երեմիա 2.3):

Եթե մենք կարողանայինք մեկ բառով նկարագրել մարդու վիճակը մեղանչումից հետո, այդ բառը կլիներ «ծգնաժամը», որի աստիճանը ամենից հեշտ է հասկանալ՝ գիտակցելով, որ ծգնաժամից ազատվելու համար անհրաժեշտ էր Հիսուսի մահը խաչի վրա: Ծգնաժամը ծանր էր, ինչի մասին խոսում են դրա հաղթահարման համար ձեռնարկված ծայրահեղ միջոցները:

Աստվածաշնչում տարբեր պատմություններ են նկարագրված, որոնք տեղի էին ունենում այս կամ այն ծգնաժամի ֆոնի վրա: Այդ պատճառով, ըստ էության, Երեմիա մարգարեի ծառայության ժամանակ ծագած իրավիճակը ոչնչով չէր տարբերվում մյուսներից:

Աստծո ժողովուրդը շատ խնդիրների էր բախվում՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին: Բայց, ցավոք, չնայած այլ տերությունների կողմից սոսկալի ռազմական սպառնալիքներին, հիմնական ծգնաժամը ներքին էր: Ներքին ծգնաժամը ոչ թե պարզապես կոռումպացված ղեկավարների ու քահանաների պատճառով էր, ինչն ինքնին բավականաչափ վատ է, այլ մարդկանց պատճառով, ում սրտերն այնքան խստացած ու մեղքից խաթարված էին, որ նրանք հրաժարվեցին ունկնդրել Աստծո ուղարկած նախազգուշացումներին, նախազգուշացումներ, որ կարող էին ծգնաժամից փրկել նրանց:

Մեղքը բավականաչափ վատ բան է, բայց երբ դուք հրաժարվում եք երես թեքել դրանից, կարելի է խոսել ծգնաժամի առկայության մասին:

Միաշաբթի **հոկտեմբերի 4**

Համառոտ պատմություն

Համարյա այն բանից անմիջապես հետո, երբ իսրայելացիները վերջապես մտան ավետյաց երկիր, սկսվեցին նրանց խնդիրները: Ի հայտ եկավ նոր սերունդ, որը չէր ճանաչում Տիրոջը (տե՛ս Դատավորաց 2.10), և այդ ժամանակ սկսված հոգևոր ճգնաժամը շարունակում էր ազգի վրա ազդել նրա ողջ պատմության ընթացքում: Ավելին, տվյալ խնդիրը ժառանգաբար անցավ նաև քրիստոնեական եկեղեցուն:

Կարդացե՛ք Դատավորաց 2.1-15-ը: Ի՞նչը դարձավ ճգնաժամի պատճառ, և ինչպե՞ս էր դրսևորվում այն: _____

_____

_____

_____

Համար 11-ն ասում է. «Եվ Իսրայելի որդիները Տիրոջ առաջ չարություն արին և Բահաղիմին պաշտեցին»: Յուրաքանչյուր հաջորդ սերունդ մեկ քայլով ավելի էր հեռանում Աստծուց, մինչև որ ժողովուրդն սկսեց անել հենց այն, ինչ իրենց արգելել էր Տերը: Սեփական մեղքի պատճառով նրանք տարատեսակ ճգնաժամեր էին վերապրում, բայց նույնիսկ այդ ժամանակ Տերը չէր լքում նրանց: Նա դատավորներ էր ուղարկում (Դատավորաց 2.16), ովքեր նրանց ազատում էին աղետից:

Դատավորների դարաշրջանից հետո երկիրը թևակոխեց հարաբերական խաղաղության ժամանակաշրջանը՝ այսպես կոչված «միացյալ միապետության» ղեկավարությամբ, որի ներկայացուցիչներն էին Սավուղը, Դավիթն ու Սողոմոնը, և որը տևեց մոտավորապես հարյուր տարի: Դավթի, իսկ հետո նաև Սողոմոնի ղեկավարությամբ ազգը վերածվեց տարածաշրջանային ազդեցիկ տերության:

«Բարօրության» ժամանակները, սակայն, երկար չտևեցին: Սողոմոնի մահից հետո (մոտավորապես ՔԱ 931 թվականին) երկիրը բաժանվեց երկու մասի. Իսրայելը հյուսիսում և Հուդան՝ հարավում: Սրա հիմնական պատասխանատվությունը կարելի է դնել Սողոմոնի վրա, ով, իր ողջ իմաստությամբ հանդերձ, բազում սխալներ էր գործել: «Երկար ժամանակ Իսրայելի ցեղերը տնքում էին նախկին թագավորի ծանր լծի ներքո: Անկման տարիներին վատնող դառնալով՝ Սողոմոնը ժողովրդի վրա խոշոր հարկեր էր դրել՝ մարդկանց ստիպելով տանջալից աշխատանք կատարել, որպեսզի հարստացնեն իրեն» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 88, 89): Աստծո

ընտրյալ ժողովուրդը մերժեց Տիրոջ բոլոր նախազգուշացումները և արդյունքում տխուր հետևանքներ քաղեց:

Խորհեցե՛ք արժեքների և հավատի բացակայությամբ մեծացող գալիք սերնդի հիմնախնդրի մասին: Մեր Եկեղեցին ինչպե՞ս է լուծում այս հարցը: Ինչպե՞ս կարելի է սովորել սեփական արժեքները գալիք սերունդներին փոխանցելը:

Երկուշաբթի հոկտեմբերի 5

Երկու թագավորություն

Թագավորության բաժանումից հետո իրավիճակը միայն վատթարացավ: Յյուսիսային թագավորությունում Յերոբովամն արեց այն, ինչ բացասական և երկարատև ազդեցություն գործեց իր ժողովրդի վրա:

Կարդացե՛ք Գ Թագավորաց 12.26-31-ը: Սա մեզ ի՞նչ է ասում այն մասին, թե որպեսական հանգամանքներն ինչպես կարող են խոչընդոտել, որ մենք տեսնենք ողջ պատկերը: _____

_____

Կռապաշտության ներմուծումը աղետալի հետևանքներ ունեցավ երկրի համար: «Յերոբովամի թագավորության տարիներին սկսված ուրացությունը հասավ այն աստիճանի, որ կատարյալ անկման հասցրեց Իսրայելի թագավորությունը» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 107): ՔԱ 722 թվականին Ասորեստանի Սալմանասար թագավորը վերջնականապես սնանկացրեց երկիրն ու նրա բնակիչներին վերաբնակեցրեց իր կայսրության տարբեր մասերում (տե՛ս Դ Թագավորաց 17.1-7): Այս աքսորից հետդարձի ճանապարհ չկար: Ինչ-որ ժամանակով Իսրայելը վերացավ պատմության թատերաբեմից:

Յարավային թագավորությունում գործերի վիճակը մի փոքր ավելի լավ էր, գոնե՝ որոշ ժամանակ: Սակայն այնտեղ նույնպես ամեն բան չէ, որ անթերի էր, և, Յյուսիսային թագավորության նման, Տերը ձգտում էր ժողովրդին ազատել աղետից, որը ի հայտ էր եկել այս անգամ բաբելոնացիների կողմից: Ցավոք, բացի հազվագյուտ բացառություններից, Յուդայի թագավորության գահին նստում էին թագավորներ, ովքեր շարունակում էին ազգը տանել դեպի խորը ուրացություն:

Այս համարներն ի՞նչ են ասում Հուդայի որոշ թագավորների մասին: Բ Մնացորդաց 33.9,10,21-23, Դ Թագավորաց 24.8,9,18,19:

Չնայած երկրի ապաշնորհ կառավարմանը՝ Աստվածաշնչի շատ մարգարեական գրքեր, այդ թվում Երեմիա մարգարեի գիրքը, բովանդակում են մարգարեների խոսքեր, ում Աստված ուղարկում էր Իր ժողովրդի մոտ՝ փորձելով նրան հետ դարձնել մեղքից և ուրացությունից, որ ազգը ուտում էին ներսից: Տերը չի հրաժարվում Իր ժողովրդից՝ նրան բավարար ժամանակ և հնարավորություն տրամադրելով՝ իր չար ճանապարհներից հետ դառնալու և խուսափելու այն աղետից, որին անխուսափելիորեն կհանգեցնի մեղքը:

Շատ դժվար է դուրս գալ սեփական շրջապատից և օբյեկտիվորեն նայել ինքդ քեզ: Իրականում դա նույնիսկ անհնար է: Այդ դեպքում ինչո՞ւ է անհրաժեշտ սեփական կյանքը մշտապես համեմատել աստվածաշնչյան չափորոշիչների հետ: Ուրիշ ի՞նչ չափանիշներ ունենք մենք:

Երեքշաբթի **հոկտեմբերի 6**

Երկու չարիք

Այսպիսին էր երիտասարդ Երեմիայի մարգարեական ծառայության պատմական ֆոնը: Նրան եղել էր «Տիրոջ խոսքը», և նա հռչակում էր այն՝ հուսալով, որ ժողովուրդը ականջալուր կլինի այդ խոսքերին և կխուսափի կանխագուշակված աղետից:

Կարդացե՛ք Երեմիա 2.1-28-ը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

Ի՞նչ խոստումներ էին տրվել ժողովրդին՝ հնազանդության պայմանով (տե՛ս համար 2,3-ը): _____

_____

Ի՞նչ մեղքեր էին գործում որոշ քահանաներ, ուսուցիչներ և մարգարեներ (տե՛ս համար 8-ը): _____

_____

Որքանո՞վ կարող են մոլորվել մարդիկ իրենց հոգևոր վիճակի առումով (տե՛ս համար 23,24-ը): _____

_____

Թեպետև Եզեկիայի ու Հովսիայի ղեկավարությամբ որոշ հոգևոր բարեփոխումներ կատարվեցին, ժողովուրդը հետ դարձավ հնին և

ընկավ է՛լ ավելի վատթար կռապաշտության մեջ: Իր ծառայության ժամանակ Երեմիա մարգարեն ուղղակիորեն խոսում էր այն մասին, ինչ կատարվում էր:

Հատկապես հետաքրքիր են Երեմիա 2.13-ում գրի առնված նրա խոսքերը: Ժողովուրդը երկու չարիք էր գործել. թողել էր Տիրոջը՝ կենդանի ջրի Աղբյուրին, և, որպես դրա հետևանք, տարբեր ջրհորներ էր փորել, որոնք, անշուշտ, չէին կարող ջուրը պահել: Այլ կերպ ասած՝ հրաժարվելով Տիրոջից՝ նրանք ամեն ինչ կորցրեցին: Այս բառերը է՛լ ավելի նշանակալից են դառնում այն բանի լույսի ներքո, ինչ Հիսուսն ասաց Հովհաննեսի Ավետարանի 4.10-ում:

Երեմիա 2.5-ում Տերն ասում է, որ մարդիկ գնացին «ունայնության հետևից» և «ունայնացան»: Այստեղ օգտագործված եբրայերեն բառը ծագում է այն նույն եբրայերեն բառից (hbl), որ մենք հանդիպում ենք Ժողովող գրքում որպես «ունայնություն»: Այն նաև նշանակում է «գոլորշի (շոգի)» կամ «շունչ»: Ինչպե՞ս կարելի է ունայնանալ՝ «ունայնությանը» հետևելով: Ի՞նչ է դա նշանակում: Այս հայեցակարգն ինչպե՞ս կարող է օգնել մեզ՝ հասկանալու այն մարդկանց, ում երբեմն թվում է, թե իրենց կյանքն իմաստ չունի կամ անօգուտ է: Մենք ի՞նչ պատասխան կարող ենք առաջարկել նրանց:

Չորեքշաբթի հոկտեմբերի 7

Բաբելոնյան գերության սպառնալիքը

Երեմիայի ծառայության վրա ազդեցություն գործող քաղաքական իրադարձությունները որոշ չափով կորսված են պատմության համար: Այսինքն՝ շատ մանրամասներ բացակայում են: Սակայն Աստվածաշնչի (և հնագիտական գտածոների) շնորհիվ մենք բավարար տեղեկատվություն ունենք, որպեսզի պատկերացնենք տեղի ունեցող իրադարձությունների ընդհանուր ֆոնը: Թեև մարդկային տեսակետից թվում էր, թե ոչ ոք չի կառավարում ժողովրդին, երբ նրանք պայքարում էին երկրի, իշխանության և տիրակալության համար, Աստվածաշունչը մեզ հակառակն է սովորեցնում:

Կարդացե՛ք Երեմիա 27.6-ը: Մենք ի՞նչ եզրակացություն կարող ենք անել այս հատվածից:

Ոչ մեծ Հուդայի թագավորությունը Երեմիայի ծառայության վաղ տարիներին հայտնվել էր Բաբելոնի, Եգիպտոսի և դեպի մայրամուտ գնացող Ասորեստանի զինված ընդհարումների կիզակետում: Մեր թվարկությունից առաջ յոթերորդ դարում ասորական պետության անկման հետ Եգիպտոսը ձգտում էր իրեն վերադարձնել իշխանությունն ու գերակայությունը տարածաշրջանում: Սակայն ՔԱ 605 թվականին Կարքեմիշի ճակատամարտում եգիպտական բանակը ջախջախվեց, և Բաբելոնը դարձավ նոր համաշխարհային գերտերությունը:

Այս նոր իշխանությունը Հուդան իրենից կախյալ դարձրեց: Հուդայի թագավոր Հովակիմը երկրի իրավիճակը կարող էր կայունացնել միայն բաբելոնյան արքային հավատարմության երդում տալով: Երկրում շատերը դա չէին ցանկանում, նրանք ուզում էին պայքարել և ազատագրվել բաբելոնացիներից, թեև դա դեմ էր Աստծո կամքին: Աստված օգտագործեց Բաբելոնը, որպեսզի պատժի ժողովրդին՝ իր անհնազանդության համար:

Կարդացե՛ք Երեմիա 25.8-12-ը: Ո՞րն էր Հուդայի ժողովրդին ուղղված՝ Երեմիա մարգարեի լուրը: _____

_____

_____

_____

Նորից ու նորից Երեմիան մարդկանց նախազգուշացնում էր այն մասին, թե ինչ տեղի կունենա իրենց մեղքի արդյունքում, սակայն քաղաքական ու կրոնական առաջնորդները հրաժարվում էին ունկնդրել նախազգուշացումներին՝ գերադասելով հավատալ այն բանին, որ Տերը ներում է իրենց. չէ՞ որ իրենք ընտրված են Աստծո կողմից:

Ե՞րբ եք վերջին անգամ հավատացել մի բանի, ինչին ցանկանում էիք հավատալ, չնայած, որ այդ հավատը անհիմն է եղել: Դուք ի՞նչ դասեր եք քաղել՝ այլևս նման բան չկրկնելու համար:

Հինգշաբթի **հոկտեմբերի 8**

Սուտ երդում

Երեմիա 5.1-ում Տերը մարդկանց ասում է. «Մա՛ն եկեք Երուսաղեմի փողոցներում և մի տեսե՛ք ու իմացե՛ք, և որոնեցե՛ք նրա

հրապարակներում. եթե մի մարդ կգտնեք, եթե լինի մի իրավունք անող և ճշմարտություն խնդրող, ես այն քաղաքին կներեմ»: Վերն ասվածի համատեքստում կարելի է երկու պատմություն մտաբերել: Դրանցից մեկը պատմում է ՔԱ չորրորդ դարի հին հույն փիլիսոփա Դիոգենեսի մասին, ով, համաձայն առասպելի, առևտրի հրապարակով ցերեկը քայլում էր լապտերով՝ ջանալով ազնիվ մարդ գտնել: Մյուս պատմությունը, իհարկե՝ իրական, պատմում է Աբրահամի հետ Աստծո զրույցի և Աստծո խոստման մասին՝ չավերել քաղաքը, եթե նրանում հիսուն արդար գտնվի (փոքրանալով՝ շուտով թիվը հասավ տասի):

Այս դեպքում Տերը Երեմիա մարգարեի միջոցով ցանկանում էր ցույց տալ, թե ինչ մեծ չափով էին ուրացությունն ու մեղքը տարածվել Իր ժողովրդի մեջ: Մի՞թե չկային այնպիսի մարդիկ, ովքեր արդարացի էին վարվում և ճշմարտությունն էին որոնում: Անգամ եթե լինեին էլ այդպիսի մարդիկ, նրանք աննշան թիվ կկազմեին:

Կարդացե՛ք Երեմիա 5.2,3-ը: Այս հատվածում ի՞նչն է վկայում սոսկալի իրավիճակի մասին: (Տե՛ս Ղևտացոց 19.12-ը): _____

_____

_____

Այս համարները բացահայտում են ողջ գրքում շարադրված հիմնախնդիրը: Անկախ ողջ ժողովրդի անկման խորությունից՝ շատ մարդիկ հավատում էին, որ հավատարմորեն ծառայում են Տիրոջը: Նրանք արտասանում էին Նրա անունը, բայց դա անում էին «սուտ», ոչ թե «ճշմարտությամբ, արդարությամբ և ուղղությամբ» (Երեմիա 4.2), այնպես, ինչպես դա պատվիրել էր Տերը: Նրանք ականջ չէին դնում Աստծուց բխող նախազգուշացումներին, այլ ապրում էին այնպես և կրոնական ծեսերը կատարում էին այնպես, ասես Աստծո հետ իրենց փոխհարաբերությունները մտերիմ էին և ճիշտ:

Նրանց խաբվածության խորությունը կարելի է տեսնել Երեմիա 7.4-ում, երբ մարդիկ ապավինել էին հետևյալ բառերի կեղծ մխիթարությանը՝ *hekhal yhwh hekhal yhwh hekhal yhwh hemma!* («Տիրոջ տաճարը, Տիրոջ տաճարը, Տիրոջ տաճարն են սրանք»), այնպես, կարծես տաճարի առկայությունն է այն պայմանը, որն անվտանգության երաշխիք է տալիս: Մի բան է՝ իմանալ, որ ճգնաժամ է սկսվել, և միանգամայն այլ բան է խաբուսիկ անգիտության մեջ ապրելը:

Մենք՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներս, որ ունենք եզակի, հրաշալի ճշմարտություն, ինչպե՞ս կարող ենք չընկնել խաբեության նման ծուղակը՝ համարելով, թե մեր եզակիությունը բավարար է փրկության համար:

Ուրբաթ հոկտեմբերի 9

Հետագա ուսումնասիրության համար

«Մի՛ անեք այն ամենի համեմատ, որ մենք անում ենք այստեղ, այսինքն՝ ամեն ինչ որ մարդու աչքերին հաճո է» (Երկրորդ Օրինաց 12.8), «Եթե քո Եհովա Աստծո ձայնին լսես նրա այն բոլոր պատվիրանքները պահելու, որոնք ես այսօր քեզ պատվիրում եմ, և Եհովա Աստծո առաջ ուղիղ եղածը անես» (Երկրորդ Օրինաց 13.18), «Այն օրերին Իսրայելի մեջ թագավոր չկար. ամեն մարդ իր աչքերի հաճելի եղածն անում էր» (Դատավորաց 17.6, 21.25):

Վերը բերված համարներում մի կարևոր հակադրություն է ներկայացված, որը հատկապես արդիական է ներկայումս, երբ շատ մարդիկ ապստամբում են արտաքին հեղինակությանը հնազանդվելու մտքի դեմ, հեղինակություն, որը սահմանում է ճիշտ և սխալ վարքը: Սակայն մենք այստեղ հստակ տարբերություն չենք գտնում այդ երկու աշխարհայացքների միջև: Մի դեպքում մարդիկ անում են այն, ինչ սեփական աչքերում «ճիշտ» են համարում, մյուս դեպքում այն, ինչը ճիշտ է «քո Եհովա Աստծո առաջ»: Պատմության ընթացքում հաճախ են եղել դեպքեր, երբ մարդկային տեսակետից ճիշտը սխալ է համարվել Աստծո աչքում: Ահա թե ինչու մեզ անհրաժեշտ է ամեն բան, անգամ մեր սեփական խիղճը, համեմատել Աստծո Խոսքի հետ:

Հարցեր քննարկման համար

1. Մենք ի՞նչ օրինակներ կարող ենք հիշել, երբ «լավ» մարդիկ սխալ են վարվել, թեև նրանք վստահ էին, որ ճիշտ են վարվում: Շատ ժողովուրդներ սոսկումով են վերաբերվում այն բանին, ինչը անցյալում սովորական գործողություն է եղել իրենց համար: Մենք այսօր ի՞նչ դասեր կարող ենք քաղել՝ այն ճշմարտության լույսի ներքո, որ մեզ անհրաժեշտ է ոչ միայն ամեն բան ստուգել աստվածաշնչյան ուսմունքով, այլ նաև զգույշ լինել Աստվածաշունչը մեկնաբանելիս: Սա հատկապես կարևոր է, երբ մենք հասկանում

ենք, որ որոշ դեպքերում սխալներ կատարվել են այնպիսի մարդկանց կողմից, ովքեր վստահ էին, թե կարող են իրենց գործողություններն արդարացնել Աստվածաշնչով: Ի՞նչ է ասում սա մեզ՝ Տասը պատվիրանները՝ որպես մեր համոզմունքների հիմք, ընդունելու մասին:

2. Այս եռամսյակ ուսումնասիրելով Երեմիա մարգարեի գիրքը՝ հիշե՛ք, որ չնայած բազում նախազգուշացումներին՝ մարդիկ շարունակում էին հավատալ, թե իրենք իրավացի էին Աստծո առաջ: Ի՞նչը կարող էր դառնալ նման մոլորության պատճառը՝ իրենց իսկական հոգևոր վիճակի վերաբերյալ: Այստեղ ի՞նչ դաս կա մեզ համար:

ԴԱՍ 3

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-16

ԻՍՐԱՅԵԼԻ ՎԵՐՋԻՆ ՀԻՆԳ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Բ Մնացորդաց 34, Երեմիա 22.1-19, 29.1-14, Բ Մնացորդաց 36.11-14, Երեմիա 23.2-8:

Հիշելու համարը.

«Նա տեսավ աղքատի և տնանկի դատը, և լավ էր. մի՞թե սա չէ ինձ ճանաչելը. ասում է Տերը» (Երեմիա 22.16):

XIX դարի նշանավոր ռուս գրող Ֆյոդոր Դոստոևսկին չորս տարի անցկացրել է սիբիրյան բանտում՝ քաղաքական քայքայիչ գործունեության պատճառով: Հետագայում, նկարագրելով իր փորձառությունը, նա պատմում է իր մի քանի բանտակիցների մասին, ովքեր բացարձակապես չէին զղջում իրենց կատարած հանցագործությունների համար: «Մի քանի տարվա ընթացքում հետևելով այդ մարդկանց՝ ես առհասարակ ապաշխարություն չնկատեցի. երբ նրանք մտորում էին իրենց հանցագործությունների մասին, նրանց մեծ մասը իրեն բացարձակապես իրավացի էր համարում» (Յոզեֆ Ֆրանկ,Դոստոևսկին (ինչպես կա), «Մաքսավորությունների տարիները», 1850-1859, 95):

Դոստոևսկին նույնը բանը կարող էր ասել նաև հինգ թագավորների մասին՝ բացառությամբ Հովսիայի, ովքեր Հուդան կառավարում էին Երեմիա մարգարեի ծառայության ժամանակ: Թվում է, այդ մարդիկ բացարձակապես չեն զղջում իրենց գործողությունների համար, անգամ այն ժամանակ, երբ պարզ դարձավ, որ իրենց գործողությունները կհանգեցնեն աղետների, որ Երեմիայի միջոցով կանխասվել էր Տիրոջ կողմից:

Աստված երբեք մտադիր չի եղել թագավոր տալ Իսրայելին, և այս դասի ավարտին մենք կհասկանանք, թե ինչու: Մենք նաև կտեսնենք, թե որքան ուժեղ էր ճնշվում Երեմիան՝ իր անշնորհակալ ծառայության մեծ մասի ընթացքում:

Միաշաբթի **հոկտեմբերի 11**

Հովսիայի կառավարման ժամանակ

Հովսիան տասնվեցերորդ թագավորն էր, որ կառավարում էր Հարավային թագավորությունը, նրա կառավարման տարիներն են ՔԱ 640-609 թվականները: Նա թագավոր դարձավ ութ տարեկան հասակում՝ իր հոր (Ամոնի) և պապի (Մանասեի)՝ Հուդայի երկու ամենաչար թագավորների ղեկավարությամբ, ավելի քան հիսուն տարվա բարոյական ու հոգևոր անկումից հետո: Հովսիայի թագավորությունը տևեց երեսունմեկ տարի: Սակայն, ի տարբերություն իր նախորդների, Հովսիան «Տիրոջ աչքի առաջին ուղղություն արեց» (Դ Թագավորաց 22.2)՝ չնայած իրեն շրջապատող թշնամական միջավայրին:

«Հովսիան ամբարիշտ թագավորի որդի էր, նրան փոթորկում էր իր հոր ճանապարհով գնալու գայթակղությունը, նա ուներ միայն մի քանի խորհրդական, ովքեր նրանց դրդում էին բարի անել, բայց Հովսիան հավատարիմ էր մնում Իսրայելի Աստծուն: Հիշելով անցյալ սերունդների սխալները՝ նա ընտրեց ճշմարտության ճանապարհը և մերժեց իր հորն ու պապին կործանած կենսակերպը: Նա «չխոտորեց աջ կամ ձախ»՝ բարձր դիրք զբաղեցնելով, նա հաստատ վճռել էր հնազանդվել Իսրայելի թագավորներին տրված խրատներին, և այդ հնազանդությունն Աստծուն թույլ տվեց օգտագործել նրան որպես անոթ՝ նախատեսված հանդիսավոր առիթներին օգտագործելու համար» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 384):

Կարդացե՛ք Բ Մնացորդաց 34-ը: Ո՞րն էր Հովսիայի բարենորոգումը, և դրա բաղադրիչներն ինչո՞ւ պետք է կենտրոնական տեղ զբաղեցնեն հոգևոր վերափոխման ցանկացած փորձի մեջ՝ լինի դա կոլեկտիվ, թե անհատական: _____

_____

_____

Հովսիայի բարենորոգումը բաղկացած էր երկու հիմնական բաղադրիչներից. նախ՝ ոչնչացնել այն ամենը, ինչն այսպես թե այնպես կապված էր կռապաշտության հետ: Այսինքն՝ նա ջանում էր վերացնել այն հեթանոսական ծեսերը, որոնք կատարվում էին երկրում:

Բայց սա միայն առաջին քայլն էր: Կեղծ կամ սխալ երկրպագության բացակայությունը մեքենաբար չի տանում դեպի ամեն բարի ու

ճիշտ բան: Լսելով օրենքի գրքի խոսքերը՝ թագավորն արեց երկրորդ քայլը. «Ուխտ արեց Տիրոջ առաջ, որ գնա Տիրոջ հետևից և պահի նրա պատվերները, վկայությունները և կանոնները իր բոլոր սրտով և բոլոր հոգով, որ կատարի այս գրքի մեջ գրված ուխտի խոսքերը» (Բ Մնացորդաց 34.31):

Կարդացե՛ք Բ Մնացորդաց 34.32,33-ը: Այս համարները մեզ ի՞նչ են ասում լավ օրինակի դրական ազդեցության մասին, հատկապես՝ եթե մարդն ունի իշխանություն և ազդեցություն: Լա՛վ մտածեք. ձեր խոսքերն ու գործողություններն ի՞նչ ազդեցություն են գործում ուրիշների վրա:

Երկուշաբթի հոկտեմբերի 12

Հովաքազն ու Հովակիմը. անկումը շարունակվում է

Հովաքազը (նաև հայտնի է որպես Ծալլումա) 23 տարեկան էր, երբ դարձավ իր հոր հաջորդը գահի վրա: Նրա կառավարումը տևեց ընդամենը երեք ամիս: Փարավոնը հեռացրեց նրան՝ գահին նստեցնելով նրա եղբորը, որովհետև Հովաքազը հավատարիմ չէր եգիպտական քաղաքականությանը: Հովաքազը աքսորվեց Եգիպտոս, որտեղ և մահացավ (տե՛ս Բ Մնացորդաց 36.4, Դ Թագավորաց 23.31-34):

Հաջորդ թագավորը Հովակիմն էր, ով թագավորել է ՔԱ 609-598 թվականներին: Նա Հովսիայի որդին էր: Երբ Նաբուգոդոնոսորը գրավեց Երուսաղեմը, Հովակիմը գերեվարվեց տաճարի անոթների հետ միասին: Երեմիան նախազգուշացնում էր ժողովրդին, որ իրենց նոր թագավորը երկիրը տանում է սխալ ճանապարհով:

Կարդացե՛ք Երեմիա 22.1-9-ը: Հովակիմի ո՞ր գործողություններն էին այդպիսի հանդիմանության արժանացել Տիրոջ կողմից:

Տերը Երեմիայի շուրթերով շատ կտրուկ խոսքեր ասաց՝ ուղղված այդ կոռումպացված ու ագահ թագավորին: Հովակիմը բռնակալ ու ժլատ թագավոր էր, որ բարձր հարկեր մտցրեց Հուդայում (տե՛ս Դ Թագավորաց 23.35-ը), որպեսզի տուրք վճարի եգիպտացիներին: Ավելին, նա հարկադրական աշխատանքներ էր օգտագործում՝ սեփական պալատի շինությունները կառուցելու համար՝ դրանով իսկ խախտելով մարդկանց աշխատանքի դիմաց վճարելու՝ Թորայի պա-

հանջները: «Քո դրացուն զրկանք մի՛ արա, և հափշտակություն մի՛ արա. քեզ համար վարձքով աշխատողի օրական վարձքը մի գիշեր մինչև առավոտ քեզ մոտ չմնա» (Ղևտացոց 19.13): Բացի դրանից, ի տարբերություն իր հոր՝ Հովսիայի, Հովակիմը թույլ էր տալիս, որ հեթանոսական ծեսերը ծաղկեն Հուդայում:

Երեմիա 22.16-ը հզոր համար է: Կոռումպացված Հովակիմին համեմատելով նրա հոր՝ Հովսիայի հետ, Տերն ասաց. «Նա տեսավ աղքատի և տնանկի դատը, և լավ էր. մի՞թե սա չէ ինձ ճանաչելը. ասում է Տերը»: Այլ կերպ ասած՝ Աստծո մասին ճշմարիտ գիտությունը արտահայտվում է այն բանում, թե մարդն ինչպես է վերաբերվում կարիքավորներին. երբ մարդը, մոռանալով ինքն իր մասին, ձգտում է օգուտ բերել նրանց, ովքեր չեն կարող իրեն նույն կերպ հատուցել: Մենք այստեղ, ինչպես Աստվածաշնչի այլ հատվածներում, կրկին տեսնում ենք Տիրոջ վերաբերմունքը աղքատների և անօգնականների հանդեպ, ինչպես նաև մեր պարտականությունը՝ օգնելու նրանց, ովքեր ի վիճակի չեն իրենց կարիքները հոգալու:

Խորհեցե՛ք այս մասին. «աղքատներին ու տնանկներին» օգնություն ցուցաբերելը նշանակում է ճանաչել Տիրոջը: Այս պնդումն ի՞նչ է նշանակում ձեզ համար:

Երեքշաբթի հոկտեմբերի 13

Հովաքին թագավորի կարճատև կառավարումը Հուդայում

Հուդայի տասնիններորդ թագավորը դարձավ Հովաքինը՝ Հովակիմի որդին: Նա Դավթի գահին թագավորեց երեքուկես ամսից էլ պակաս: ՔԱ 598 թվականին Նաբուգոդոնոսորը գրավեց Երուսաղեմը և գերեվարեց տասնութամյա թագավորին՝ մոր, կանանց և թագավորական ընտանիքի շատ այլ անդամների հետ միասին: ՔԱ 561 թվականին, երեսունյոթ տարի գերության մեջ գտնվելուց հետո, Նաբուգոդոնոսորի հաջորդ Իլմարովդաքը շնորհ արեց Հովաքինին: Նա իրավունք ստացավ ճաշել Բաբելոնի թագավորի հետ և թագավորական հանդերձներ հագնել: (Տե՛ս Դ Թագավորաց 25.27-30, Երեմիա 52.31-34): Նրա որդիները նույնպես նրա հետ Բաբելոնում էին, սակայն Երեմիայի մարգարեությունն ասում է, որ նրանք չեն ստանա Դավթի գահը:

Կարդացե՛ք Երեմիա 29.1-14-ը՝ Հեքոնիային և նրա

ընտանիքին, ինչպես նաև Երուսաղեմից գերի տարված բոլոր պալատականներին փոխանցված Տիրոջ խոսքերը՝ Երեմիայի միջոցով: Անգամ այդ ողբերգության պայմաններում ինչպե՞ս են արտահայտվել Աստծո սերն ու շնորհը: _____

_____

Երեմիա 29.11-ը Աստվածաշնչի ամենահայտնի տեքստերից մեկն է. «Որովհետև *միայն* ես գիտեմ այն խորհուրդները, որ ես խորհում եմ ձեր մասին, ասում է Տերը, խաղաղության խորհուրդները և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը»: Եվ այս համարն ունի ուղղակի համատեքստ. Տերը դիմում է Հուդայի գերեվարված որդիներին, ովքեր իրենք իրենց վերաբերվում էին որպես բաբելոնյան նվաճողների կողմից պատմական արմատներից զրկված մարդկանց: Սակայն անգամ այդ դեպքում, անկախ նրանց ծանր դրությունից, Տերը ցանկանում էր, որ նրանք իմանան, որ Ինքը շարունակում է սիրել նրանց և միայն լավը կամենալ նրանց: Կասկած չկա. հաշվի առնելով սոսկալի հանգամանքները՝ նրանք, հավանաբար, ուրախությամբ ընդունեցին այդ բազմախոստում և հուսադրող խոսքերը: Այդ պատճառով անգամ բոլոր սարսափելի նախազգուշացումների ֆոնին Տերը առաջվա նման «ապագայի և հույսի» խոստում է տալիս: Որքա՜ն կարևոր էր, հատկապես այն ժամանակ, այդպիսի վստահություն ունենալը:

Ապագա և հո՞ւյս: Տիրոջ ո՞ր խոստումներին դուք կարող եք ապավինել հենց հիմա՝ անկախ հանգամանքներից, որպեսզի ունենաք «ապագա և հույս»:

Չորեքշաբթի հոկտեմբերի 14

Փակուղու վերջում

Կարդացե՛ք Բ Մնացորդաց 36.11-14-ը: Այս համարները մեզ ի՞նչ են ասում Հուդայի վերջին թագավորի մասին, ումից հետո ազգը փաստացի ոչնչացվեց: Ուրացության ի՞նչ հոգևոր սկզբունքներ են ի հայտ բերված այս տեքստերում: _____

_____

Սեդեկիան (նաև հայտնի է որպես Մաթանիա) գահակալեց 21 տարեկան հասակում, նա թագավոր դարձավ Նաբուգոդոնոսորի

շնորհիվ և կառավարեց որպես նրա վասալ: Ցավոք, ինչպես ասում են տեքստերը, նա դաս չքաղեց նախորդ թագավորների սխալներից և արդյունքում միայն երկրի ավերմանը նպաստեց:

Բ Մնացորդաց 36.14-ը խոսում է ժողովրդի ուրացության խորության մասին: Չար գործերի թվում, որ ժողովուրդն անում էր Սեդեկիայի կառավարման ժամանակ, ասված է, որ նա նմանակում էր «ուրիշ ազգերի բոլոր գարշությունները»:

Նրանք այդ երկրում ապրում էին Ելքից հետո հարյուրավոր տարիներ՝ լինելով ուխտի ժողովուրդը՝ մարդիկ, ովքեր պետք է լույս և փարոս դառնային այլ ազգերի համար (Երկրորդ Օրինաց 4.5-8), և, այնուամենայնիվ, նրանք այնքան ձուլվեցին նախորդ մշակույթին, այնքան ընդունեցին իրենց հարևանների մշակութային և կրոնական ծեսերը, որ սկսեցին գործել հեթանոսների «բոլոր գարշությունները»:

Միգուցե այստեղ պատգա՞մ կա մեզ համար:

Կարդացե՛ք Երեմիա 38.14-18-ը: Թագավորն ինչի՞ մասին էր հարցնում մարգարեին: Ինչո՞ւ:

Տերը բազմիցս ժողովրդին հստակ կերպով հասկացրել էր, որ իրենք պետք է հնազանդվեն Բաբելոնին, որ այդ նվաճումը իրենց անօրենությունների պատիժն էր: Սեդեկիան, սակայն, հրաժարվում էր ականջ դնել մարգարեներին, և ռազմական դաշինք կազմեց Նաբուգոդոնոսորի դեմ: Իսրայելը ապավինել էր Եգիպտոսի զորակցությանը: Բայց Նաբուգոդոնոսորը ՔԱ 597 թվականին հաղթանակ տարավ փարավոնի բանակի դեմ: Այս պարտությունն ընդմիշտ վճռեց Երուսաղեմի և ժողովրդի ճակատագիրը: Չնայած հոգևոր բարենորոգումներ անցկացնելու խոշոր հնարավորություններին՝ Հուդան հրաժարվեց փրկությունից:

Մեզ՝ որպես եկեղեցի, արտոնություն է տրված՝ հռչակելու բարի լուրը աշխարհին, որը ոչ ոք չի հռչակում: Շատ առումներով մեր առաքելությունը նման է Հուդայի առաքելությանը: Նրանց փորձառությունից ի՞նչ դաս կարելի է և պետք է քաղել մեզ համար:

Հինգշաբթի **հոկտեմբերի 15**

Մնացորդը

Ի՞նչ պատահեց Իսրայելի և Երուսաղեմի հետ՝ Աստծո լուրը մերժելուց հետո: Երեմիա 39.8,9: _____

Ամեն բան, ինչի մասին Աստված նախազգուշացնում էր նրանց, տեղի ունեցավ հենց այնպես, ինչպես կանխասված էր: Սակայն, որքան էլ նրանք չէին ցանկանում հավատալ այդ նախազգուշացումներին, նրանք ստիպված եղան հավատալ սեփական աչքերին: Մեզանից ո՞վ է, որ երբևիցե նման բան չի ապրել: Տերը մեզ նախազգուշացրել է՝ չանել որևէ բան, իսկ մենք վարվել ենք մեր կամեցածի պես, և Աստծո նախազգուշացումն իրականացել է:

Ի՞նչ լուր է բովանդակվում Երեմիա 23.2-8-ում: Ի՞նչ հույս է պարգևել այն ժողովրդին: _____

_____

_____

_____

Մարդկային տեսակետից թվում էր, թե ամեն բան կորած է. նրանց երկիրը կործանվել էր, նրանց տաճարը ավերված էր, նրանց իշխանները գերի էին, իսկ Երուսաղեմ քաղաքը վերածվել էր քարերի կույտի: Հրեա ժողովուրդն այդպիսի ցնցումից հետո պետք է վերանար պատմական թատերաբեմից՝ այլ ժողովուրդների նման, ովքեր նման ավերածություններ են կրել:

Սակայն Տերն այլ ծրագրեր ուներ, և վերոհիշյալ (և շատ այլ) համարներում Նա նրանց Մնացորդի վերադարձի հույս էր տալիս, որի միջոցով կկատարվեն խոստումները: Բացի կործանման ու ավերման նախազգուշացումներից՝ մարգարեները մարդկանց նաև հույս էին պարգևում:

«Ավերման ու մահվան մռայլ տարիները, որոնք նշանավորեցին Հուդայի թագավորության ավարտը, հուսահատության կհանգեցնեին ամենաարի սիրտը, եթե Աստծո ծառաների մարգարեական վկայությունները զուրկ լինեին հույսից և քաջալերանքից: Երեմիայի միջոցով՝ Երուսաղեմում, Դանիելի միջոցով՝ բաբելոնյան արքունիքում, Եզեկիելի միջոցով՝ Քոբար գետի ափերին Տերը հրեաներին գթասրտորեն բացահայտեց Իր հավիտենական ծրագիրը և հավաստիացրեց Իր աննահանջ պատրաստակամության մասին՝ Իր ընտրյալ ժողովրդի համար կատարելու Մովսեսի գրքերում գրի առնված խոստումները: Այն ամենը, ինչ Նա խոստացել է կատարել Իր հավատարիմների համար, Նա անպայման կկատարի. Աստծո Խոսքը ապրում է և կենդանի է հավիտյանս (տե՛ս Ա Պետրոս 1.23-ը)» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 464):

Հետագա ուսումնասիրության համար

«Հուդայի ուրացության վերջին տարիներին մարգարեների կոչերը, թվում է, սակավ կարեկցանք էին առաջացնում մարդկանց մեջ, և երբ քաղդեական զորքերը երրորդ ու վերջին անգամ պաշարեցին Երուսաղեմը, հույսը մարեց յուրաքանչյուր մարդու սրտում: Երեմիան կանխագուշակում էր քաղաքի կատարյալ ավերումը, բնակիչներին համառորեն աղաչում էր հանձնվել, ինչի համար վերջիվերջո հայտնվեց բանտում: Բայց Աստված անլուր հուսահատության մեջ չլքեց հավատարիմ մնացորդին, որը դեռևս գտնվում էր քաղաքում: Անգամ այն ժամանակ, երբ Երեմիան գտնվում էր նրանց խստագույն պահակության ներքո, ովքեր ծաղրում էին իր կոչերը, նա նոր հայտնություն ստացավ ներելու և փրկելու երկնքի ցանկության մասին, և այդ ցանկությունը այն ժամանակներից մինչև մեր օրերը Աստծո եկեղեցու համար անհատնում մխիթարության աղբյուր է» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 466):

Նայե՛ք «ներելու և փրկելու երկնքի ցանկություն» արտահայտությանը: Հիշե՛ք, թե ինչպես Տերը բացեց «ներելու և փրկելու երկնքի ցանկությունը»: Ի վերջո, խաչն ինքը մեզ ասում է այդ պատրաստակամության մասին: Մենք ունենք Աստծո Խոսքը, որը մեզ բացահայտում է փրկության ծրագիրը: Մեզ պարգևված են Մարգարեության Հոգու աշխատությունները: Ուրիշ է՞լ ինչ եղանակներ է օգտագործել Տերը՝ ցույց տալու համար «ներելու և փրկելու երկնքի պատրաստակամությունը»:

Հարցեր քննարկման համար

1. «Եվ մոտեցան... և ասացին Երեմիա մարգարեին. Թո՛ղ մեր աղաչանքը քո առաջ ընդունելի լինի, և մեզ համար աղո՛թք արա քո Տեր Աստծուդ՝ այս բոլոր մնացորդի համար, որովհետև շատից քիչ ենք մնացել, ինչպես որ աչքդ մեզ տեսնում է» (Երեմիա 42.1,2): Այս համարը, ինչպես նաև Երեմիա 23.3-ը ի՞նչ են ասում Երեմիայի մարգարեություններում մնացորդի թեմայի մասին:
2. Որքա՜ն հեշտ է, սրբազան պատմությունն ուսումնասիրելով, տեսնել Աստծո ժողովրդի բոլոր սխալները, թերություններն ու հոգևոր արատները հին ժամանակներում: Դա անհրաժեշտ է, որովհետև այդ պատմությունները որպես օրինակ են գրվել մեզ համար (Ա

Կորնթացիս 10.11): Ցավալի է, որ այդ մարդկանցից շատերը իրենց ժամանակին, սեփական համատեքստում և մշակույթի մեջ, մտածում էին, որ իրենք ճիշտ են վարվում և լավ փոխհարաբերություններ ունեն Տիրոջ հետ: Ինչպիսի՜ նախազգուշացում է մեզ համար. մենք նույնպես կարող ենք կույր լինել մեր սեփական հոգևոր վիճակի առնչությամբ: Սեփական հոգևոր վիճակը բարելավելու ի՞նչ եղանակներ կան: Ինչո՞ւ պետք է խաչը կենտրոնական տեղ զբաղեցնի այդ գործընթացում: Ի՞նչ կլինի մեզ հետ, եթե այն մեր հոգևոր կյանքի կենտրոնում չլինի:

ԴԱՍ 4 ՀԱՆԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-23

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Երեմիա 17.5-10, Երեմիա 17.1-4, Երեմիա 11.18-23, Հովհաննես 3.19, Երեմիա 12.1-6, 14.1-16:

Հիշելու համարը.
«Ինձ բժշկիր, ո՛վ Տեր, և ես կբժշկվեմ. փրկիր, ինձ, և ես կփրկվեմ. որովհետև իմ պարծանքը դու ես» (Երեմիա 17.14):

«Ինչ որ եղել էր, նա էլ կլինի, և ինչ որ արված էր, նա էլ կարվի. և արեգակի տակ բնավ մի նոր բան չկա» (Ժողովող 1.9):

Արեգակի տակ ոչ մի նոր բան չկա՞: Սա հատկապես ճիշտ է, երբ խոսքը վերաբերում է Աստծո մարգարեների կյանքին ու ծառայությանը, ովքեր հաճախ կանչվել են նախազգուշացման ու հանդիմանության խոսքեր փոխանցելու նրանց, ովքեր առանց այդ էլ պետք է լավ իմանային դրանք: Ձգտելով հավատարիմ լինել իրենց կոչմանը՝ մարգարեները մեծամասամբ բախվել են ուժեղ դիմադրության, անգամ վրեժխնդրության, հաճախ հոգևոր առաջնորդների կողմից, նրանցից, ովքեր առաջինը պետք է ունկնդրեին մարգարեների խոսքերին: Զարմանալի չէ, որ Հիսուսն ասաց. «Վա՜յ ձեզ, դպիրներ և Փարիսեցիներ, կեղծավորներ, որ մարգարեների տապանները շինում եք և արդարների գերեզմանները զարդարում, և ասում եք. «Եթե մենք լինեինք մեր հայրերի օրերում, մասնակից չէինք լինի նրանց հետ մարգարեների արյունին»» (Մատթեոս 23.29,30):

Այս շաբաթ մենք կքննարկենք Երեմիայի փորձությունները, ում ծառայությունը, թվում է, բաղկացած էր միայն հանդիմանություններից ու վրեժխնդրությունից. նա հանդիմանում էր, ղեկավարները վրեժ էին լուծում:

Միաշաբթի **հոկտեմբերի 18**

Երկու ուղի

Ծննդոց գրքի առաջին գլուխներից մինչև Հայտնության գրքի վերջին գլուխները Աստվածաշունչը մեզ ներկայացնում է ապրելակերպի լոկ երկու տարբերակ. մենք կա՛մ ողջ սրտով ու հոգով հետևում ենք Տիրոջը, կա՛մ էլ երես ենք թեքում Նրանից: Ինչպես ասել է Հիսուսը. «Ով ինձ հետ չէ, ինձ հակառակ է, և ով որ ինձ հետ չի ժողովում, ցրվում է» (Ղուկաս 11.23): Այս խոսքերը շատ մարդկանց են անհանգստացնում: Հոգևոր իրողությունների մասին այս հայտարարությունը անհամեմատ ավելի լուրջ է, քան երևում է անզեն աչքով կամ ընկալվում է առողջ բանականությամբ: Սա մեծ պայքարի թեմայի էությունն է: Ինչ-որ իմաստով Հիսուսը ոչ մի նոր կամ հեղափոխական բան չի ասում: Միշտ էլ այդպես է եղել:

Կարդացե՛ք Երեմիա 17.5-10-ը: Ի՞նչ կարևոր հոգևոր սկզբունքներ են շարադրված այստեղ, հատկապես՝ Քրիստոսի և սատանայի միջև մեծ պայքարի լույսի ներքո: _____

_____

_____

Այս խոսքերի անմիջական համատեքստը, հավանաբար, արտացոլում է Հուդայի քաղաքական խարդավանքները, իսկ Տերը ցանկանում էր, որ նրանք հասկանային. միակ օգնությունը կարող է բխել միայն Նրանից, և ոչ թե քաղաքական կամ ռազմական իշխանություններից. սա ճշմարտություն է, որը նրանք ավելի ուշ կհասկանան, բայց արդեն չափազանց ուշ կլինի: Թեև Տերը մեզ օգնելու համար օգտագործում է ուրիշ մարդկանց, բայց մենք պետք է միշտ ապավինենք միայն Նրան: Մենք չենք կարող վստահ լինել այլ մարդկանց դրդապատճառների հարցում, սակայն միշտ կարող ենք իմանալ Աստծո մտադրությունները մեր մասին:

Բարի մտադրություններ ունենալով՝ Երեմիա 17.9-ում Տերը նախազգուշացնում է մարդկային սրտի կեղծավորության մասին: Եբրայերեն տեքստն ասում է, որ սիրտը խաբեբա է: Մեղքի սոսկալի ֆիզիկական հետևանքները, որքան էլ վատը լինեն դրանք, պակաս սարսափելի են, քան բարոյական ու հոգևոր քայքայումը: Խնդիրն այն է, որ մեր սրտերը փչացած են, այդ պատճառով մենք չենք կարող լիակատար չափով իմանալ, թե որքանով են վատ գործերը: Երեմիան պետք է շուտով տեսներ, թե ինչպես կարող են փչանալ մարդու մտադրությունները:

Ինչպե՞ս սովորել ավելի շատ ապավինել Տիրոջը: Ի՞նչ ճանապարհներ գոյություն ունեն, որպեսզի սկսենք հավատով անել այն, ինչ ճիշտ է Աստծո աչքում:

Երկուշաբթի **հոկտեմբերի 19**

Հուդայի մեղքը

Անշո՛ւշտ, Երեմիայի առաքելությունը հեշտ չէր: Հնարավոր է՝ ոմանք առանձնահատուկ բավականություն են զգում՝ մարդկանց մատնացույց անելով իրենց մեղքերը, բայց մարդկանց մեծ մասը կհամաձայնի, որ դա շատ անհրապույր գործ է, հատկապես այն արձագանքի պատճառով, որ կարող են առաջ բերել նրանց խոսքերը: Թեև ոմանք, հանդիմանության խոսքեր լսելով, ապաշխարում են և ձգտում են վերափոխվել, որպես կանոն, ամեն բան տեղի է ունենում հակառակ կարգով, հատկապես եթե հանդիմանության խոսքերը կտրուկ ու լուրջ են: Իրականում, այլ մարգարեների խոսքերի նման, Երեմիայի լուրն էլ կտրուկ ու լուրջ էր:

Կարդացե՛ք Երեմիա 17.1-4-ը: Ինչի՞ մասին էր Երեմիան նախազգուշացնում մարդկանց: _____

_____

_____

Մեղքը հատկապես ուժեղ է ախտահարում սիրտը: Այն ցույց է տալիս փչացածության խորությունը: Խնդիրն այն է, որ մեղքը ոչ թե գրիչով գրված է սրտում, այլ փորագրված է այնտեղ: Այս միտքը է՛լ ավելի հասկանալի է դառնում, երբ մենք մտաբերում ենք նրանց հայրերին Տիրոջ ասած խոսքերը. «Երբ որ քո Եհովա Աստծո ձայնին հնազանդվես, և այս օրենքի գրքի մեջ գրված Աստծո պատվիրաններին և կանոնները պահես, և բոլոր սրտովդ և բոլոր հոգովդ քո Եհովա Աստծուն դառնաս» (Երկրորդ Օրինաց 30.10, համեմատե՛ք Սաղմոս 40.9 և Երեմիա 31.33-ի հետ): Նրանք պետք է սիրեին Աստծուն և ողջ սրտով հնազանդվեին Նրա օրենքին, բայց դրա փոխարեն նրանց սրտերում տպվեց մեղքը՝ Աստծո Օրենքի խախտումը (Ա Հովհաննես 3.4):

«Թո՛ղ իրեն Աստծո Օրենքի պահապան համարող ոչ ոք չհրապուրվի այն մտքով, թե պատվիրանին ձևականորեն հետևելը իրեն կթաքցնի Աստծո արդարությունից: Թո՛ղ ոչ ոք իրենից չհեռացնի իր գործած մեղքի պատասխանատվությունը, թո՛ղ ոչ ոք Աստծո

ծառաներին չհանդիմանի, որ նրանք չափազանց նախանձախնդիր կերպով են անօրենությունից մաքրել բանակը: Նրանց, ովքեր պահում են Իր օրենքը, մեղքն ատող Աստված կանչում է՝ հեռանալու ամեն անմաքրությունից» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 416):

Մեղքը փորագրվա՞ծ է սրտում: Սոսկալի միտք է, այնպես չէ՞: Այս պատկերը ի՞նչ է ասում մեզ մեր սրտերը խորապես ու եռանդով մաքրելու անհրաժեշտության մասին: Ինչպե՞ս կարելի է հասնել դրան:

Երեքշաբթի **հոկտեմբերի 20**

Երեմիայի նախազգուշացումը

«Եվ սա է դատաստանը, որ լույսն եկավ աշխարհ, և մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան թե լույսը, որովհետև նրանց գործերը չար էին» (Հովհաննես 3.19):

Ողբերգությունն այն էր, որ այն դիմադրությունը, որին բախվեց Երեմիան, բխում էր այն մարդկանցից, ում ջանում էր փրկել Տերը: Տերը ցանկանում էր նրանց ազատել գալիք աղետից: Սակայն խնդիրը այն է, որ մարդիկ հաճախ չեն ցանկանում լսել այն, ինչ նրանք պետք է լսեն, որովհետև այս լուրը նրանց առջև բացում է իրենց մեղավոր ու արատավոր ցանկությունները:

Կարդացե՛ք Երեմիա 11.18-23-ը: Ի՞նչ է տեղի ունենում այստեղ: Ի՞նչ են հիշեցնում մեզ այս պատկերներից մի քանիսը: _____

_____

_____

Հին Իսրայելում թեև մահ էր սպասվում նրանց, ովքեր սուտ մարգարեանում էին Տիրոջ անունից, այս դեպքում ոչ մի ապացույց չկար, որ Անաթովթի բնակիչները կեղծ մարգարե էին համարում Երեմիային: Ընդհակառակը, թվում էր, թե նրանք պարզապես ցանկանում էին ստիպել, որ նա լռի: Նրանք չէին ցանկանում լսել այն, ինչ հռչակում էր նա: Թեև տեքստը ուղղակի չի ասում, թե նրանք ինչպես էին ծրագրում զրկել նրան կյանքից, որոշ աստվածաբաններ համարում են, որ, հնարավոր է, նրանք ցանկանում էին թունավորել մարգարեին:

Ինչպես գիտենք, Անաթովթը Երեմիայի հայրենի քաղաքն էր. Անաթովթի բնակիչները մերժեցին մարգարեի լուրը, անգամ պատրաստ էին նրան զրկել կյանքից: Սակայն այդ մերժումը միայն շատ

ավելի ընդարձակ մերժման լոկ սկիզբն էր սեփական ժողովրդի կողմից, բացի «Մնացորդից»:

Իհարկե, այս ամենը, ներառյալ «մորթվելու տարվող գառի» կերպարը, մատնացույց են անում Հիսուսի զոհը: Որոշ իմաստով Երեմիան Քրիստոսի նախակերպարն էր, բայց ոչ թե որպես նախատիպ (ինչպես, օրինակ, զոհի կենդանիները), այլ որ Հիսուսի նման՝ նա էլ է բախվել այն մարդկաց զորեղ դիմադրությանը, ում ջանում էր օգնել: Երեմիայի կյանքում, անկասկած, նույն իրավիճակն է, ինչին բախվեց Հիսուսը Իր ծառայության սկզբում (Ղուկաս 4.14-30):

Վերջին անգամ դուք ե՞րբ եք նախազգուշացման լուր լսել, որը պարզապես չէիք ցանկանում լսել: Ո՞րն էր ձեր առաջին արձագանքը: Ինչո՞ւ է մեզ անհրաժեշտ սովորել տանել մեր խաչը, երբ մենք հայտնվում ենք նման իրավիճակներում:

Չորեքշաբթի **հոկտեմբերի 21**

Ողբը

Երեմիա մարգարեի գրքի առաջին գլուխներում Տիրոջ նախազգուշացումը կա այն մասին, որ մարգարեի ծառայությունը հեշտ չի լինելու: Իր կանչվելու ժամանակ Երեմիան լսեց, որ Հուդայի իշխանները, թագավորները, քահանաներն ու ժողովուրդը «կպատերազմեն քո դեմ» (Երեմիա 1.19): Թեև Տերը խոստացավ, որ նրանք «չեն հաղթի» (Երեմիա 1.19), անկասկած, այդպիսի պայքարի մասին նախազգուշացումը ակներևաբար ուրախալի լուր չէր: Այն պահին Երեմիան գլխի չէր ընկնում իրեն սպասվող փորձությունների անգամ կեսի մասին, այդ պատճառով կարելի է հասկանալ նրա դառնությունն ու ցավը, երբ դրանք վրա հասան:

Թեև Երեմիան խոսում էր իր անձնական իրավիճակի մասին, ի՞նչ ընդհանուր խնդրի էր բախվել մարգարեն (Երեմիա 12.1-4): Ինչպիսի՞ն էր մարգարեի վերաբերմունքը նրանց հանդեպ, ովքեր նեղացրել էին իրեն: Ի՞նչ է ասում դա մեզ Աստծո հավատարիմ ծառաների մարդկային կերպարի մասին: _____

_____

_____

_____

Երեմիա 12.1-ում օգտագործվում է հինկտակարանյան իրավաբանական լեզուն՝ «արդար», «վիճել» և «իրավացի»: Մարգարեն այնքան տրտմած է տեղի ունեցող ամեն ինչով, որ ցանկանում է «դատավեճ» սկսել Աստծո դեմ (տե՛ս Երկրորդ Օրինաց 25.1): Նրա բողոքը, իհարկե, համընդհանուր է. ինչո՞ւ է թվում, որ չարիքը ծաղկում է, այն դեպքում, երբ ինքը՝ Երեմիան, որ ձգտում է միայն Աստծո կամքը կատարել, բախվում է այդպիսի փորձությունների:

Այստեղ մենք տեսնում ենք մարդկային գործոնի դրսևորումը: Նա պատիժ է կամենում նրանց համար, ովքեր չարիք են գործում: Նա այստեղ խոսում է ոչ թե որպես աստվածաբան, այլ որպես ընկճված մարդ, ով ողորմության կարիք ունի, ով, Հոբի և Աստծո այլ հավատարիմ զավակների նման, չի հասկանում, թե ինչու է դա տեղի ունենում իր հետ: Ինչո՞ւ Երեմիային՝ Աստծո ծառային, ով կանչված էր Աստծո ճշմարտությունը հայտարարելու անհնազանդ ժողովրդին, դավաճանեցին իր համաքաղաքացիները: Երեմիան վստահում էր Տիրոջը, թեև, իհարկե, չէր հասկանում, թե ինչու է նման բան տեղի ունենում:

Ինչպե՞ս կարող ենք սովորել վստահել Տիրոջը՝ չնայած շուրջբոլորը տեղի ունեցող բոլոր իրադարձություններին:

Հինգշաբթի հոկտեմբերի 22

Անհույս վիճակ

Կարդացե՛ք Երեմիա 14.1-10-ը: Ի՞նչ է ներկայացված այստեղ: _____

_____

_____

Երաշտը վնասել էր ողջ երկիրը. տուժել էին բոլոր քաղաքները, ավաններն ու գյուղերը: Աղքատներն ու հարուստները տառապում էին միասին: Անգամ վայրի բնությունը չէր կարող վերապրել ջրի բացակայությունը: Տերերն իրենց ծառաներին սպասում էին քաղաքային դարպասների մոտ՝ հուսալով, որ նրանք ջուր են գտել, բայց բոլոր աղբյուրները չորացել էին: Ջուր չկար, իսկ առանց ջրի կյանքը չի կարող շարունակվել: Մարդկանց և կենդանիների տառապանքները ամեն օրվա հետ աճում էին: Մարդիկ քուրձ էին հագել և քայլում էին ընկճված դեմքերով: Նրանք ծնկի էին իջնում և կանչում Աստծուն հուսահատ աղոթքի մեջ:

Տարերային աղետների ժամանակ ընդունված էր գալ Երուսաղեմի տաճար (Հովել 1.13,14, 2.15-17), ծոմ պահել և հատուկ ընծաներ բերել Տիրոջը:

Երեմիան տեսնում էր մարդկանց ձգտումը, բայց լավ գիտեր, որ նրանք ոչ թե Տիրոջն էին որոնում, այլ ջուր: Դա է՛լ ավելի էր տրտմեցնում մարգարեին: Երեմիան նույնպես աղոթում էր, բայց ոչ թե ջրի, այլ ողորմության և Աստծո ներկայության համար:

Երեմիան նաև հասկանում էր, որ դա միայն հետագայի փորձությունների սկիզբն էր: Աստված տեսնում էր մարդկանց սրտերը և գիտեր, որ եթե երաշտն անհետանա, կանհետանա նաև մարդկանց ապաշխարությունը: Ժողովուրդը ջանում էր իր վիճակը փոխել Երուսաղեմի տաճար այցելելու, ծոմի, քուրձ հագնելու և ընծաներ բերելու միջոցով: Նրանք ցանկանում էին ազատվել խնդրի հետևանքներից, և ոչ թե բուն խնդրից, որի կենտրոնը իրենց մեղքն էր և անհնազանդությունը:

Կարդացե՛ք Երեմիա 14.11-16-ը: Մենք ինչպե՞ս ենք հասկանում այդ հատվածը: _____

_____

«Դու ժողովրդի համար մի՛ աղոթիր ի բարօրություն նրա», - Երեմիային ասաց Աստված, թեև ավելի վաղ Երեմիան աղոթում էր սքանչելի բարեխոսական աղոթքով. «Թեև մեր անօրենությունները վկայում են մեր դեմ, ով Տեր, Դու արա Քո անունի համար. որովհետև մեր հանցանքները շատ են. Քո դեմ մեղք ենք գործել» (Երեմիա 14.7): Թեև մեզ ասված է. «Անդադար աղոթք արեք» (Ա Թեսաղոնիկեցիս 5.17), տվյալ դեպքում Տերը, որ վերջը գիտի սկզբից, ցույց է տալիս Երեմիային, թե որքան փչացած ու մեղավոր էին մարդիկ: Իհարկե, Աստված գիտի մարդկանց սրտերը և, ի տարբերություն մեզ, Աստված գիտի նաև ապագան: Այդպիսով, անգամ թշնամիների համար աղոթելու նորկտակարանյան հրահանգը չի կորցնում իր արդիականությունը:

Ուրբաթ **հոկտեմբերի 23**

Հետագա ուսումնասիրության համար

Երեմիան, մեզ նման, հարց էր տալիս ինքն իրեն. ինչպե՞ս բացատրել չարիքը: Սակայն, հնարավոր է, դրանում խնդիր կա. փորձելով հասկանալ այն, ինչ ենթակա չէ ըմբռնման, այն, ինչը մեզ անհեթեթություն է թվում:

Այդ կապակցությամբ Էլեն Ուայթը գրում է. «Չարիքի ծագումը և դրա գոյության պատճառները շատերի համար անլուծելի խնդիր են... Մեղքը անկոչ հյուր է, որի հայտնվելը ոչնչով չի կարելի բացատրել: Դա անիմանալի գաղտնիք է. մեղքն արդարացնելը նշանակում է պաշտպանել այն: Եվ, եթե հաջողվեր գտնել մեղքի գոյության պատճառը կամ արդարացնել դրա դրսևորումը, այդ ժամանակ այն կդադարեր մեղք լինելուց» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 492, 493): Մեղք բառը փոխարինե՛ք չարիք բառով, և կարելի է ստանալ հետևյալ պնդումը. *Չարիքի ծագումը և դրա գոյության պատճառները շատերի համար անլուծելի խնդիր են... Չարիքը անկոչ հյուր է, որի հայտնվելը ոչնչով չի կարելի բացատրել: Դա անիմանալի գաղտնիք է. չարիքն արդարացնելը նշանակում է պաշտպանել այն: Եվ, եթե հաջողվեր գտնել չարիքի գոյության պատճառը կամ արդարացնել դրա դրսևորումը, այդ ժամանակ այն կդադարեր չարիք լինելուց:*

Երբ ողբերգություն է տեղի ունենում, մենք լսում ենք, թե ինչպես են ուրիշները ասում, ավելին, մենք ինքներս էլ մտածում ենք. «Ես դա չեմ հասկանում: Դա անհեթեթություն է»: Բնական է, որ այս հարցն անհասկանալի է մնում, որովհետև այն անհնար է հասկանալ: Եթե մենք կարողանայինք տրամաբանական և ռացիոնալ բացատրություն տալ չարիքին, չարիքը կդադարեր չարիք լինելուց: Իրավիճակն այդքան ողբերգական չէր լինի, որովհետև չարիքը կծառայեր ռացիոնալ նպատակի: Շատ կարևոր է հիշել. չարիքը, ինչպես և մեղքը, հաճախ անհնար է բացատրել: Սակայն մենք կարող ենք վստահ լինել խաչի իրական լինելուն, որը մեզ ցույց է տալիս Աստծո սերն ու բարությունը՝ չնայած մեղքի առաջ բերած չարիքի անհասկանալիությանը:

Հարցեր քննարկման համար

1. Խորհեցե՛ք այն մտքի մասին, որ չարիքն ու տառապանքը իմաստ չունեն, որ դրանք չունեն ռացիոնալ կամ տրամաբանական բացատրություն: Ինչո՞ւ է այդ ճանապարհն ավելի լավ: Եկե՛ք քննարկենք հետևյալ իրավիճակը: Սոսկալի ողբերգություն է տեղի ունենում. ծանր հիվանդությունից, սոսկալի տառապանքներից հետո երեխան մահանում է: Կարելի՞ է հավատալ, որ դա ունի տրամաբանական և ռացիոնալ բացատրություն: Ավելի հեշտ չէ՞ դա անվանել մեղանչման սոսկալի հետևանքը: Դասարանում քննարկե՛ք սա:

2. Խորհեցե՛ք Էլեն Ուայթի մարգարեական ծառայության մասին: Դուք ինչպե՞ս կարող եք նրան վերաբերվել այն նույն ձևով, ինչպես Հուդայի բնակիչներն էին վերաբերվում Երեմիային:

ԴԱՍ 5

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
24-30

ՄԱՐԳԱՐԵԻ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Երեմիա 23.14,15, Երեմիա 20, Գործք առաքելոց 2.37, Հոբ 3, Երեմիա 18.1-10,18-23:

Հիշելու համարը.
«Դու ինձ համոզեցիր, ով Տեր, և ես համոզվեցի, որ Դու ինձանից զորավոր եղար և հաղթեցիր. ես ծաղր եմ դառել ամեն օր, ամենքը ծիծաղում են ինձ վրա» (Երեմիա 20.7):

«Եվ ամենքը, որ կամենում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսում, հալածանք պիտի կրեն» (Բ Տիմոթեոս 3.12): Հավատացյալների մեկ սերունդ չէ, որ իր վրա զգացել է այդ խոսքերի ճշմարտացիությունը: Եթե դուք հավատում եք Հիսուսին և ձգտում եք կատարել Նրա կամքը, դա չի նշանակում, որ ձեր գլխավերևում միշտ անամպ երկինք է լինելու: Հենց այս ճշմարտությունը պետք է իմանար Երեմիան:

Միևնույն ժամանակ մեր հավատն օգնում է՝ հասկանալու մեզ և Աստծուն, ինչը մեզ ամրացնում է պայքարում: Այսինքն՝ երբ անարդարություններ և չարժանացած տառապանքներ ու փորձություններ են տեղի ունենում (կասկած չկա, որ դրանցից շատերը չենք վաստակել ու դրանք անարդարացի են), Տերը մեզ միայնակ չի թողնում անիմաստության և անորոշության զգացումի հետ, իսկ դա հենց այն է, ինչ զգում են Աստծուն չճանաչող մարդիկ: Մենք տեսնում ենք միայն պատկերի մի մասը, բայց հույս ունենք, որ, չնայած ներկայի աղետներին, մենք կարող ենք ուժ քաղել այն գիտելիքից ու հույսից, որ մեզ պարգևում է Աստված: Երեմիան գիտեր այդ ամենը, թեև, թվում է, ժամանակ առ ժամանակ իր ուշադրությունը կենտրոնանցնում էր միայն աղետների վրա:

Միաշաբթի **հոկտեմբերի 25**

Անաստված քահանաներն ու մարգարեները

Քանի որ հին Հուդայի ժամանակներից արդեն ավելի քան երկու հազար տարի է անցել, իսկ մշակութային ու սոցիալական առումով աշխարհը անճանաչելիորեն փոխվել է, մեզ համար դժվար է հասկանալ այն ամենը, ինչ տեղի էր ունենում Երեմիա մարգարեի ժամանակներում: Երբ մարդիկ կարդում են Աստվածաշունչը, հատկապես խիստ նախազգուշացումներն ու սպառնալիքները, Աստծուն պատկերացնում են որպես դաժան, մանրախնդիր ու քինոտ: Սակայն այդպիսի տպավորությունը Սուրբ Գրքի մակերեսային ընթերցանության հետևանք է: Աստվածաշնչի ուշադիր հետազոտողը կտեսնի, որ Հին Կտակարանը բացահայտում է նույն բանը, ինչ և Նորը, այն է՝ Աստված սիրում է մարդկությանը և ցանկանում է փրկել նրան, բայց Նա մեզ չի ստիպում ընտրություն կատարել: Եթե մենք որոշում ենք սխալ վարվել՝ անտեսելով մեզ ուղղված Նրա աղերսանքները, մենք ազատ ենք այդպես վարվելու: Պարզապես մենք պետք է հիշենք ոչ միայն հետևանքների, այլ նաև այն մասին, որ մեզ այդ մասին նախապես նախազգուշացված էր:

Ի՞նչ չարիք էր կատարվում Հուդայում: Ի՞նչ մեղքերի դեմ էր մարգարեանում Երեմիան: Երեմիա 23.14,15, 5.26-31:

Այստեղ ներկայացված մեղքերի երկար ցուցակը լոկ մի փոքր ցանկն է այն բանի, ինչ կատարվում էր Աստծո ժողովրդի մեջ: Ե՛վ քահանաները, և՛ մարգարեները «անաստված» էին. անհավատալի հեգնանք, եթե հաշվի առնենք այն փաստը, որ քահանաները պետք է լինեին Աստծո ներկայացուցիչները, իսկ մարգարեները՝ Նրա բանբերները: Եվ դա միայն սկիզբն է այն խնդիրների, որոնց բախվեց Երեմիան:

Չարիքը կարող է տարբեր դրսևորումներ ունենալ: Ահա՛ հոգևոր առաջնորդները, ովքեր դրդում են չարիք գործել և «որ հետ չդառնան ամեն մեկն իր չարությունից» (Երեմիա 23.14): Ահա՛ և մարգարեները, ովքեր, լսելով, թե ինչպես է Տերը նախազգուշացնում գալիք դատաստանի մասին, հակառակն են մարգարեանում: Բացի դրանից, նահանջելով Աստծուց, մարդիկ մոռացան որբերի մասին հոգալու և աղքատներին պաշտպանելու՝ իրենց պարտականության

մասին (Երեմիա 5.28): Ողջ ժողովուրդը հեռացել էր Տիրոջից: Այնպես որ Աստվածաշունչը մեծամասամբ, գոնե Հին Կտակարանի մարգարեական գրքերը, պատմում է այն մասին, թե ինչպես է Տերը ջանում հետ դարձնել Իր կամակոր ժողովրդին: Այսինքն, չնայած ողջ չարիքին, Տերը միշտ պատրաստ է ներելու, բժշկելու և անգամ վերականգնելու Իր ժողովրդին: Բայց եթե նրանք հրաժարվում են, ի՞նչ կարելի է անել:

Երկուշաբթի **հոկտեմբերի 26**

Երեմիան կոճղում

Մարգարեների առաքելությունն է՝ լուրը փոխանցել Աստծուց՝ անկախ այդ լուրն ընդունող կամ մերժող մարդկանց թվից: Որպես կանոն՝ լուրն ընդունող մարդկանց թիվը միշտ շատ փոքր է եղել: Օրինակ, թեև մենք հաստատ չգիտենք, թե որքան մարդ է ապրել Նոյի ժամանակներում, սակայն մենք վստահ գիտենք, որ նրանց մեծամասնությունը բացարձակ անընկալ գտնվեց փրկության լուրի հանդեպ: Եվ նման միտումը պահպանվեց երկրի ողջ պատմության ընթացքում:

Կարդացե՛ք Երեմիա 20.1-6-ը: Ինչպե՞ս ընկալվեց նրա լուրը:_____

_____

_____

Տեղի ունեցող իրադարձություններն ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է կարդալ Երեմիա մարգարեի ասած խոսքերը, որոնք էլ բախման հասցրեցին ղեկավարների հետ: Երեմիա մարգարեի գրքի 19-րդ գլխում մենք հանդիպում ենք նրա մարգարեություններից մի քանիսին. «Ահա ես չարիք եմ բերելու այս տեղի վրա» (Երեմիա 19.3), «նրանց սրով պիտի կործանեմ իրենց թշնամիների առաջ, և նրանց հոգիները պահանջողների ձեռքով, և նրանց դիակները պիտի տամ իբրև կերակուր երկնքի թռչուններին և երկրի գազաններին» (Երեմիա 19.7): Նույն տեղում ասվում է այն մասին, որ պաշարման արդյունքում մարդակերություն կլինի (Երեմիա 19.9):

Թեև ոչ ոք չէր ցանկանա նման մարգարեություն լսել իր հասցեին, Փասուրը՝ որպես առաջնորդ, առանձնահատուկ վիրավորվածություն էր զգում: Նրա առաջին բնական արձագանքն էր՝ հերքել նախազգուշացումը: Ի վերջո, ոչ ոք չի ցանկանա հավատալ սոսկալի կան-

խագուշակություններին: Բայց օգտագործելով իր դիրքը՝ Փասուրը սխալ գործեց՝ պատժելով մարգարեին: Նա հրամայեց գանահարել Երեմիային՝ օրենքների համաձայն, (Երկրորդ Օրինաց 25.1-3) և գամել կոճղին: Թեև հաջորդ օրը Փասուրը բաց թողեց նրան, Երեմիան, չնայելով ցավին ու ստորացմանը, մարգարեություն հռչակեց ոչ միայն Հուդայի, այլ նաև Փասուրի և նրա ընտանիքի դեմ: Ի լուր բոլորի՝ հայտարարվեց, որ շուտով Փասուրի և նրա ընտանիքի ճակատագիրը սոսկալի օրինակ կդառնա բոլոր նրանց համար, ովքեր նրանց կտեսնեն գերության շղթաներում: Այս գլխում առաջին անգամ Երեմիայի գրքում հիշատակվում է Բաբելոնը՝ որպես աքսորի վայր: (Գլուխները և անգամ գլուխների բաժինները կազմված են ոչ ժամանակագրական կարգով):

Պատկերացրե՛ք, որ դուք ինչ-որ նման բան եք լսում ձեր հասցեին: Ի՞նչ եք կարծում, ո՞րը կլինի ձեր առաջին արձագանքը, և որքանո՞վ կտարբերվի ձեր պատկերացրածից: (Տե՛ս 2.37):

Երեքշաբթի հոկտեմբերի 27

Վառված կրակի պես՝ ոսկորներումս պահված

Փասուրին և ժողովրդին ուղղված կտրուկ խոսքերը նրան չէին պատկանում, դրանք վրեժ չէին այն բանի համար, որ Երեմիան մեկ օր բանտարկված էր: Դրանք Տիրոջ խոսքերն էին՝ Իր ժողովրդին:

Սակայն այդ հանդիմանությանը հաջորդող խոսքերը բխում էին Երեմիա մարգարեի սրտի խորքից և գրի են առնված Սուրբ Հոգու ազդեցությամբ: Դա հոգու ճիչն է մի մարդու, ով թափում է իր տրտմությունը՝ հայտնվելով տհաճ իրավիճակում:

Կարդացե՛ք Երեմիա 20.7-14-ը: Ինչի՞ մասին է աղաղակում Երեմիան: Նրա խոսքերն ի՞նչ են ասում մեզ՝ նրա և մեր սեփական մարդկային էության մասին:_____

_____

_____

Առաջին հայացքից նրա խոսքերը գրեթե սրբապիղծ են թվում: Իհարկե, կարելի է առարկել. Երեմիան ինչպե՞ս կարող է պնդել, թե Աստված խաբել է իրեն. չէ՞ որ Նա հենց սկզբից մարգարեին նախազգուշացրեց խիստ դիմադրության մասին: Սակայն նա դժգոհում է. «Որովհետև քանի անգամ որ խոսեմ՝ պիտի աղաղակեմ, պիտի

բողոքեմ բռնությո՛ւն և զրկա՛նք. որովհետև Տիրոջ խոսքն ինձ համար ամեն օր նախատինք ու անարգանք է դառել»:

Միևնույն ժամանակ ի՞նչ են նշանակում այն խոսքերը, որ նա ասում է Երեմիա 20.9-ում: _____

_____

Նա ցանկանում էր դադարեցնել քարոզելը, բայց Աստծո Խոսքը կրակ էր նրա սրտում և հրդեհ՝ նրա ոսկորներում: Այստեղ հզոր փոխաբերություն է օգտագործված. իր կոչումն իմացող մարգարեն, չնայած անձնական ցավին ու տառապանքին՝ մտադիր է մինչև վերջ կատարել իր առաքելությունը: (Մենք նման մտքեր գտնում ենք Ամովս 3.8-ում և Ա Կորնթացիս 9.16-ում):

Այս համարներում մենք տեսնում ենք այն պայքարը, որ մղում է Երեմիան. մենք տեսնում ենք, թե ինչպես է տարերքը փոթորկվում ինչպես նրա շուրջը, այնպես էլ ներսում: Հենց նոր նա փառաբանում էր Աստծուն՝ աղքատներին ամբարիշտներից փրկելու համար, իսկ հաջորդ հատվածում նա անիծում է իր ծննդյան օրը (տե՛ս չորեքշաբթի օրվա դասը):

Ինչո՞ւ է այդքան կարևոր, հատկապես սոսկալի պայմաններում, փառաբանել Տիրոջը և մտաբերել այն բոլոր իրավիճակները, երբ Նա հայտնել է Իր սերը մեր հանդեպ:

Չորեքշաբթի հոկտեմբերի 28

«Անիծված լինի այն օրը»

Անգամ Աստվածաշնչի ամենակատաղի քննադատները համաձայն են այն բանի հետ, որ Աստվածաշունչը չի թաքցնում մարդկային թուլություններն ու թերությունները: Բացառություն է Աստծո Որդու անթերի ու անմեղ կյանքը, աստվածաշնչյան հերոսներից ում կյանքն էլ ներկայացված է ամենայն մանրամասնությամբ, քչերն են ներկայանում առանց թերությունների ու թուլությունների: Ինչպես նշվել է նախկինում, Աստված կատարյալ է, իսկ մարգարեները, ովքեր ծառայություն էին իրականացնում, կատարյալ չէին: Հավատով արդարանալու համար՝ նրանք Քրիստոսի արդարության կարիքն ունեցող մեղավորներ էին, ինչպես և մենք բոլորս (տե՛ս Հռոմեացիս 3.22-ը): Նոյից մինչև Պետրոս, ինչպես նաև բոլոր նրանք, ովքեր ապրել են նրանցից առաջ և հետո, բոլոր մարդիկ արատավորված են մեղքով, և նրանց միակ հույսը, ինչպես ասում է Էլեն Ուայթը, այն է, որ գան Տիրոջ մոտ

և ասեն. «Ես չունեմ ոչ մի արժանիք կամ առավելություն, որոնք ինձ փրկության իրավունք են տալիս, բայց ես ապավինում եմ Աստծո անարատ Գառի քավչարար արյանը, Ով Իր վրա է վերցնում աշխարհի մեղքը: Դա իմ միակ հույսն է: Հիսուսի անունն ինձ հնարավորություն է տալիս մոտենալու Աստծուն: Նրա ականջն ու սիրտը բաց են անգամ ամենաչնչին աղաչանքի համար, և Նա բավարարում է իմ խորագույն պահանջմունքը» (Հավատ և գործեր, 106):

Կարդացե՛ք Երեմիա 20.14-18-ը: Այս հատվածը ի՞նչ է ասում մեզ իր անձնական իրավիճակի վերաբերյալ մարգարեի ապրումների մասին: _____

_____

_____

Այստեղ նրա խոսքերը հիշեցնում են Հոբի խոսքերը, ում վիճակն անհամեմատ վատ էր Երեմիայի վիճակից (տե՛ս Հոբ 3): Թեև Երեմիան վստահություն ուներ, որ ինքը Աստծո կամքն է կատարում, և գիտեր, որ Տերն իր հետ է, տվյալ պահին ստեղծված իրավիճակի պատճառած ցավը, ակներևաբար, լիովին կլանել էր նրան: Թեև մտքով նա հասկանում էր, որ ճշմարտությունն իր կողմն է, սակայն տրտմությունն անմնացորդ տիրել էր նրան:

Ժամանակ առ ժամանակ շատ մարդիկ են ընկնում նման իրադրության մեջ. նրանք շատ բան կարող են իմանալ Աստծո խոստումների մասին, բայց ցավն ու տրտմությունն այնքան են կլանում նրանց, որ այդ բոլոր խոստումները անցնում են երկրորդ պլան, և նրանց մտքերը կենտրոնանում են այսրոպեական տառապանքների վրա: Սա հասկանալի արձագանք է. թեպետ սխալ, բայց հասկանալի: Երեմիայի մոտ գերակշռեց մարդկային էությունը, և դրանով նա նման է մեզ:

Դուք ձեր կյանքում ունեցե՞լ եք նման զգացումներ: Եթե այո, ի՞նչ դաս եք քաղել ձեր փորձառությունից, որն անհրաժեշտ էր, որպեսզի ապագայում հաղթահարեք այն:

Հինգշաբթի **հոկտեմբերի 29**

Դավ՝ մարգարեի դեմ

Կարդացե՛ք Երեմիա 18.1-10-ը: Մարգարեությունների մեկնության ի՞նչ կարևոր սկզբունքներ են տրված այստեղ: _____

Ի՞նչ կարևոր սկզբունքներ կարելի է առանձնացնել վերը բերված համարներում: _____

_____

_____

Չնայած ողջ չարիքին՝ Տերը պատրաստ է ապաշխարելու հնարավորություն տալ մարդկանց: Այդպիսով, այստեղ մենք տեսնում ենք, որ Աստծո շնորհը առաջարկվում է բոլորին, ովքեր ցանկանում են ընդունել այն: Անգամ այդ ժամանակ ժողովուրդը ժամանակ ու հնարավորություն ուներ հետ դառնալու իր չար ճանապարհներից:

Այս համարներում մենք նկատում ենք մարգարեությունների պայմանական բնույթը: Աստված ասում է, որ Ինքը ինչ-որ բան կանի. ամենից հաճախ սա նշանակում էր, որ մարդիկ կպատժվեն մեղքերի պատճառով: Բայց եթե մարդիկ հետ դառնան իրենց չար ճանապարհներից, ապա աղետները նրանց չեն հասնի: Տվյալ դեպքում Աստծո գործողությունները պայմանավորված են մարդկանց արձագանքով: Ակնհայտ է, որ Աստծո նպատակն էր օգնել մարդկանց, որ փոխվեն: Իմաստ չկա մարդկանց չար ճանապարհներից հետ դառնալու կոչ անել, եթե դու ծրագրում ես պատժել նրանց՝ անկախ նրանց զղջալուց և դարձի գալուց: Տերը տվյալ տեքստերում ուղղակի ասում է, որ եթե ժողովուրդն ապաշխարի, Ինքը հետ կդարձնի պատիժը:

Կարդացե՛ք Երեմիա 18.18-23-ը: Ի՞նչը դարձավ Երեմիա մարգարեի հանդեպ ժողովրդի այդպիսի ուխտադրուժ վերաբերմունքի պատճառը: Ի՞նչ ձևով արտահայտվեց Երեմիայի մարդկային արձագանքը: _____

_____

_____

_____

Հավանաբար, որքա՜ն հիասթափված էր զգում իրեն Երեմիան՝ ժողովրդի կողմից դատապարտված ու հալածված լինելով միայն այն բանի համար, որ նրանք, իբրև թե, պահում էին հետևյալ խոսքը. «Օրենքը չի կորչի քահանայից, և խորհուրդը՝ իմաստունից, և խոսքը՝ մարգարեից»: Որքա՜ն կարող է ինքնախաբեությունը խաթարել սիրտը:

Որքա՜ն զգույշ պետք է լինենք մեր գործողությունների մեջ, որ կատարվում են հանուն Տիրոջ: Ի՞նչ դասեր կարելի է քաղել այս պատմությունից: Ձեր պատասխանով կիսվե՛ք դասարանի հետ:

Հետագա ուսումնասիրության համար

Երեմիա 18.11-17-ում մենք համոզվում ենք, թե ինչպես է Տերը Իր ժողովրդին հրահանգում հետ դառնալ չար գործերից: 11-րդ համարում ասված է. «Եկեք հե՛տ դարձեք ամեն մարդ իր չար ճանապարհից, և լավացրե՛ք ձեր ճանապարհները և ձեր գործեր»: Իսկ 12-րդ համարում Տերն ասում է, որ Ինքը արդեն գիտի, որ նրանք ականջ չեն դնելու Իր նախազգուշացումներին ու կոչերին, այլ հետագայում էլ անելու են «յուրաքանչյուրն իր չար սրտի կամակորությունը» (համար 12): Հետո Տերն ասում է, թե ինչպես Ինքը կվարվի՝ ի պատասխան նրանց անհնազանդության: Դա Աստվածաշնչի շատ հատվածներից մեկն է, որոնք ցույց են տալիս, որ եթե Աստված նախօրոք գիտի մեր ընտրության մասին, դա ոչ մի չափով չի վնասում այդ ընտրությանը: Ի վերջո, ինչո՞ւ պետք է Տերը աղաչի նրանց՝ հետ դառնալ իրենց չար գործերից, եթե նրանք չեն կարող ընտրել Նրան հնազանդվելը: Մյուս կողմից՝ ինչո՞ւ պատժել անհնազանդության համար, եթե նրանք չեն կարող հնազանդվել Նրան: Մի բան պարզ է. դեռևս մինչև մարդու արարումը Աստված գիտեր, թե ինչպիսին կլինի նրա ազատ ընտրությունը: Սա կարևոր ճշմարտություն է, որ մենք գտնում ենք նաև, օրինակ, Երկրորդ Օրինաց 31.16-21-ում: Դեռևս, նախքան Իսրայելի որդիների ավետյաց երկիր մտնելը Տերն ասաց Մովսեսին, որ նրանք «դեպի ուրիշ աստվածների կդառնան և նրանց ծառայություն կանեն և ինձ կարհամարհեն և Իմ ուխտը կխափանեն» (Երկրորդ Օրինաց 31.20): Ահա՛ ևս մի ապացույց, որ եթե Աստված նախօրոք գիտի մեր որոշումների մասին, միևնույն է՝ չի բռնանում մեր ընտրության ազատության վրա:

Հարցեր քննարկման համար

1. Մտորե՛ք հինգշաբթի օրվա դասի վերջին հարցի մասին: Ձեզանից ո՞վ չի լսել, թե ինչպես են մարդիկ արդարացրել իրենց գործողությունները, որովհետև Տերն է իրենց ասել, որ այդպես վարվեն: (Դուք ի՞նչ կարող եք պատասխանել այն մարդուն, ով այդպես է խոսում): Թեև ոչ մի կասկած չկա, որ Աստված առաջնորդում է մեզ, մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ այն իրականում Աստծուց է:

2. Երեմիան ասաց, որ Աստծո խոսքը նման էր «կրակի՝ նրա ոսկորներում»: Մենք ինչպե՞ս կարող ենք պահպանել մեր մեջ վառվող այդ կրակը:
3. Այս շաբաթվա՝ մեր ուսումնասիրած համարները ինչպե՞ս կարող են օգնել մեզ՝ հասկանալու, թե ինչ է վերածնունդը և բարենորոգումը: (Ի վերջո, մի՞թե դա չէ, որ Տերը ցանկանում է տեսնել Իր ժողովրդի մեջ): Օրինակ, ինչո՞ւ է մեր սեփական մեղավորության գիտակցումն այդքան կարևոր վերածննդի համար: Ինչո՞ւ խաչը և նրա պարգևած հույսը պետք է կենտրոնական տեղ զբաղեցնեն մեր վերածննդի մեջ:

ԴԱՍ 6

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31 – ՆՈՅԵՄԲԵՐԻ 6

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ծննդոց 4.3-7, Թվոց 21.1-9, Եսայիա 29.16, Հռոմեացիս 9.18-21, Երեմիա 19, Եբրայեցիս 5.14, Երեմիա 13.1-11:

Հիշելու համարը.

«Մի՞թե բրուտը իշխանություն չունի հողի վրա, որ միևնույն զանգվածից շինի մեկը պատիվի անոթ, և մյուսը՝ անարգության» (Հռոմեացիս 9.21):

Յուրաքանչյուր մարդ, ով ուսումնասիրում է Աստվածաշունչը, գիտի, որ այնտեղ շատ խորհրդանիշներ կան՝ խորհրդանշական կերպարներ, որոնք ներկայացնում են որևէ հասկացություն և գաղափար: Օրինակ՝ երկրային սրբարանում կատարվող ողջ ծառայությունը ներկայացնում էր փրկության ծրագիրը: «Մենք դեռ չենք հասել հին եբրայական կենսակերպի իմաստի ըմբռնմանը: Նրանց սովորույթներում ու ծեսերում ընդարձակ ու խորը ճշմարտության խորհրդանիշներ են թաքնված: Ավետարանը այդ ծեսերի խորհուրդը բացահայտող բանալին է: Այնտեղ թաքնված բոլոր ճշմարտությունները պարզվում են փրկության ծրագրի իմացության միջոցով» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 133): Տերը ճշմարտությունը բացում էր երկրային սրբարանում կատարվող ծառայության խորհրդանիշների միջոցով, ինչպես նաև խորհրդանիշներ օգտագործելով մարգարեական գրքերում (օրինակ՝ Դանիել 2, 7, 8 և Հայտնություն գիրքը) և շատ այլ դեպքերում: Ավելին, Հիսուսն Ինքը Իր առակներում և տեսանելի դասերում խորհրդանիշներն օգտագործում է խորը ճշմարտությունները բացատրելու համար:

Երեմիա մարգարեի գիրքը հարուստ է խորհրդանիշներով և կերպարներով: Այս շաբաթ մենք կքննարկենք այդ խորհրդանիշներից մի քանիսը, դրանց նշանակությունները, ինչպես նաև այն դասերը, որ մենք կարող ենք քաղել մեզ համար:

Խորհրդանիշներով ներկայացված ճշմարտությունը

Սուրբ Գիրքը չափազանց հարուստ է խորհրդանիշներով: Դրանք օգտագործվում են մեծ չափով և մեծամասամբ իրենցից ներկայացնում են առավել խորը ճշմարտություն, քան թվում է առաջին հայացքից:

Կարդացե՛ք Ծննդոց 4.3-7-ը: Ի՞նչ երկու տարբեր զոհեր են խորհրդանշորեն ներկայացված այստեղ: _____

_____

_____

Աստվածաշնչի հենց սկզբում մենք կարող ենք տեսնել տարբերությունը գործերով փրկություն վաստակելու փորձի (Կայենի զոհը) և այն բանի գիտակցման միջև, որ փրկությունը պարգևվում է միայն շնորհով՝ Փրկչի արժանիքների շնորհիվ (Հաբելի զոհը):

Կարդացե՛ք Թվոց 21.4-9-ը: Ի՞նչ էր խորհրդանշում պղնձե օձը, որ բարձրացվեց ձողի վրա: (Տե՛ս նաև Հովհաննես 12.32): _____

_____

_____

«Հրեաները ողջ էին մնում, երբ նայում էին բարձրացված օձին: Նրանց հայացքը հավատ էր ենթադրում: Նրանք ողջ էին մնում, որովհետև հավատում էին Աստծո Խոսքին և այն միջոցներին, որ Նա տվել էր իրենց փրկության համար» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 431):

Հին Կտակարանի պատմության ընթացքում երկրային սրբարանի ծառայությունը փրկության ծրագրի առավել մանրամասն խորհրդանշական ներկայացումն էր: Թե որքանով էին հրեաները լավ հասկանում այդ բոլոր ծեսերի նշանակությունը՝ կբացահայտվի միայն հավիտենության մեջ, թեև, անկասկած, շատերը կարողացել էին հասկանալ ամենակարևոր ճշմարտությունը՝ քավչարար զոհի մասին ճշմարտությունը, այն գաղափարը, որ մեղքերի ներման համար անհրաժեշտ է Փրկչի մահը (տե՛ս Ա Կորնթացիս 5.7):

Իրականում, երկրային սրբարանի ծառայության շնորհիվ մենք ունենք խորհրդանիշներ, որոնք մատնացույց են անում ոչ միայն Հիսուսի մահը, այլ նաև Նրա ծառայությունը՝ որպես Քահանայապետ, դատաքննությունը, ինչպես նաև մեղքի վերջնական ոչնչացումը:

Փրկության ծրագրի ուրիշ ի՞նչ աստվածաշնչյան խորհրդանիշներ դուք կարող եք մտաբերել: Դրանցից որո՞նք են առավել պերճախոս կերպով պատմում Աստծո փրկարար շնորհի մասին և հույս պարգևում մեզ:

Երկուշաբթի **նոյեմբերի 2**

Բրուտի կավը

Ի՞նչ կարևոր ճշմարտություններ ու խորհրդանիշներ են ներկայացված հետևյալ տեքստերում: (Տե՛ս Ծննդոց 2.7):

Երեմիա 188.1-10 _____

Եսայիա 29.16 _____

Եսայիա 45.9 _____

Եսայիա 64.8 _____

Հռոմեացիս 9.18-21 _____

Անկասկած, Երեմիան մեկ անգամ չէ, որ ցանկացել էր հանձնվել՝ մշտապես մերժվելու և հալածանքների պատճառով: Արժե՞ր արդյոք մարտնչել ու պայքարել հանուն այն ժողովրդի, որ մերժում է քեզ և Աստծո լուրը: Իհա՛րկե, երբեմն նրա պատասխանը բացասական էր:

Բայց երբ նա նայեց բրուտի աշխատանքին, հասկացավ, թե ինչպես է Տերն աշխատում մարդու վրա: Ինչպիսին էլ լինեն ուրիշ ճշմարտություններ, որ կարելի է քաղել բրուտի և կավի պատկերից, այս պատմությունը սովորեցնում է, որ Տերը ամեն բանի Տիրակալն է: Որքան էլ անհուսալի թվար Երեմիայի վիճակը, կավի և բրուտի կերպարը ցույց էր տալիս, որ, վերջին հաշվով, չնայած մարդկանց սխալ և անգամ կանխամտածված սխալ որոշումներին, Տերը վերահսկում է աշխարհում տիրող վիճակը: Նա ուժի և իշխանության բացարձակ Աղբյուրն է, և վերջիվերջո Նա հաղթանակ կտանի՝ անկախ տեղի ունեցող իրադարձություններից:

Հարյուրամյակներ անց, հռոմեացիներին հասցեագրված ուղերձի իններորդ գլխում Պողոս առաքյալը վերադառնում է տվյալ հինկտակարանյան պատկերին, որպեսզի ցույց տա այն դասը, որ պետք է սովորեր Երեմիան: Իրականում Հռոմեացիս 9.21-ում Պողոսն ընթերցողին ուղարկում է անմիջական ձևով դեպի Երեմիա 18.6-ը: Մենք կարող ենք վստահ լինել, որ, չնայած ազատ կամքի և մարդու ազատ ընտրության իրական բնույթին, չնայած ազատությունը չարաշահելու և հաճախ՝ կործանարար արդյունքներին, մենք կարող ենք վստահել

մեր սիրող և անձնազոհ Աստծո տիրակալությանը, Ում սերը դրսևորվեց խաչի վրա: Վերջիվերջո, ոչ թե չարիքը, այլ Աստված ու Նրա սերը կհաղթեն: Ի՜նչ հրաշալի հույս:

Կավի ու բրուտի կերպարն ինչպե՞ս է սովորեցնում վստահել Տիրոջը՝ անկախ ստեղծված հանգամանքներից: Ուրիշ ի՞նչ աստվածաշնչյան տեքստեր են մատնանշում Աստծո տիրակալության իրական լինելը:

Երեքշաբթի **նոյեմբերի 3**

Ազգի վերածնունդը

«Նրա համար, որ Ինձ թողեցին և օտարացրին այս տեղը, և նրանում խունկ ծխեցին ուրիշ աստվածների, որոնց չէին ճանաչում իրենք և իրենց հայրերն ու Հուդայի թագավորները և այս տեղն անմեղների արյունով լցրեցին» (Երեմիա 19.4):

Այս տեքստում մեր ուշադրությանն են ներկայացված Հուդայում տարածված չարիքի մի քանի օրինակներ: Բացի այն, որ նրանք թողել էին Տիրոջը և խունկ էին ծխում «ուրիշ աստվածների», նրանք նաև անմեղ արյուն էին թափում և «օտարացրին այս տեղը»: Այս հատվածում օգտագործված եբրայերեն բայը նշանակում է «օտարերկրյա դարձնել», «խորթ դարձնել» կամ «հեթանոսական դարձնել»: Համարը չի ճշգրտում, թե ինչն է խորթ անվանվում՝ տաճա՞րը, թե՞ Երուսաղեմը: Սակայն հիմնականը այն պահն է, որ ժողովուրդը պետք է սուրբ լիներ, Տիրոջ համար առանձնացված (տե՛ս Ելից 19.5,6), այսինքն՝ տարբերվեր այլ ժողովուրդներից: Բայց դա տեղի չունեցավ: Նրանք կորցրեցին իրենց եզակիությունը, իրենց առանձնահատուկ կարգավիճակը, որը նրանց թույլ կտար ավետարանել աշխարհին: Նրանք դարձան այնպիսին, ինչպիսին բոլոր մյուսներն են:

Այստեղ կա՞ն դասեր մեզ համար: _____

_____

_____

«Եվ շինեցին Բահաղի բարձրավանդակները, որ իրենց որդիներին կրակով այրեն իբրև ողջակեզներ Բահաղի համար, որ Ես չեմ պատվիրել, և չեմ ասել, և մտքովս էլ չի անցել» (Երեմիա 19.5):

Թեև մարդկային զոհաբերությունների հայեցակարգը հայտնի էր հին աշխարհում, այս երևույթը դատապարտվում էր Աստծո կողմից և

արգելված էր Իսրայել ժողովրդի մեջ (տե՛ս Երկրորդ Օրինաց 18.10): Վերոհիշյալ «մտքովս էլ չի անցել» արտահայտությունը եբրայերեն հնչում է այսպես. «Իմ սրտով չի անցել»: Այստեղ օգտագործված է դարձվածք, որը ցույց է տալիս, թե որքա՜ն խորթ ու հեռու էր Աստծուց նման պրակտիկան: Եթե մենք՝ մեղքից դաժանացած, ընկած էակներս, գարշելի ենք համարում նման գործողությունները, պատկերացրե՛ք, թե դրան նայելով՝ ինչ է զգում սուրբ Աստվածը:

Սակայն ժամանակի ընթացքում այլասերվածությունն ու մշակույթն այնքան ուժեղ ազդեցություն գործեցին մարդկանց վրա, որ նրանք սիրեցին այդ սոսկալի ծեսը: Այս պատկերում որքա՜ն կարևոր դաս կա մեզ համար: Նայելով շրջակա մշակույթին՝ շատ հեշտ է կորցնել կողմնորոշիչները և սկսել նախ համաձայնել, ապա նաև մասնակցություն ունենալ այն բանին, ինչը զզվանք է առաջացնում այն մարդու մեջ, ով սերտ կապ ունի Տիրոջ հետ և ապրում է Նրա Խոսքին ներդաշնակ (տե՛ս Եբրայեցիս 5.14):

Չորեքշաբթի **Նոյեմբերի 4**

Կոտրված սափորը

Ինչպես տեսանք երեքշաբթի օրվա դասում, ժողովուրդը բավական առաջ էր գնացել ուրացության մեջ: Նրանք չէին ընդունում լուրը: Այդ պատճառով Աստված Երեմիային հրամայեց խորհրդանշական գործողություն կատարել, որը պետք է արթնացներ ժողովրդին և ցույց տար նրան սպառնացող վտանգը:

Կարդացե՛ք Երեմիա 19.1-5-ը: Ի՞նչ պետք է աներ Երեմիան Տիրոջ հրամանով, և ո՞րն էր այդ գործողության իմաստը: _____

_____

_____

Երեմիան պետք է կրկին գնար բրուտի տուն: Սակայն այս անգամ Տերը ցանկանում էր, որ նա իր հետ վկաներ տանի, ովքեր պետք է տեսնեին, թե ինչ անելու մարգարեն: Վկաները Հուդայի ծերերից ու քահանաներից էին (Երեմիա 19.1): Որպես ղեկավարներ՝ նրանք պատասխանատվություն էին կրում երկրում տեղի ունեցող ամեն ինչի համար, այդ պատճառով պետք է Աստծուց ստանային այն լուրը, որը խորհրդանշական կերպով ներկայացնելու էր Երեմիան: Հարսութի դուռը (Երեմիա 19.2), որտեղ նա պետք է ջարդեր սափորը,

հավանաբար, գտնվում էր ոչ հեռու այն վայրից, որտեղ աշխատում էին բրուտները (կավագործները), որովհետև նրանք ջարդված անոթների փշուրները կարող էին նետել միայն դարպասից դուրս: Այսպիսով, խորհրդանիշն է՛լ ավելի տպավորիչ է դառնում:

Ի՞նչ լավ բան կա ջարդված կավե սափորի մեջ: Անգամ եթե սափորը ճաքել է, կարելի է այն օգտագործելու ձև գտնել, սակայն ոչ ուղղակի նշանակությամբ: Նա պետք է ջարդեր սափորը, ըստ էության, անօգուտ դարձնելով այն: Տեսնելով գործողությունները և լսելով բառերը, որ հաջորդեցին դրան, դժվար է պատկերացնել, որ մարդիկ չհասկացան նախազգուշացումը: Իհա՛րկե, նախագուշացումը հասկանալն ու կենսակերպը փոխելը միանգամայն տարբեր բաներ են:

Բայց ակներևաբար, առավել սոսկալի է գործողության ավարտը: Ո՞վ կարող է վերականգնել ջարդված սափորը: Թեև Տերը ժողովրդին ապագայի հույս էր պարգևում, բայց այդ պահին, դարձի չգալու դեպքում, հրեաները իրենց երեխաների հետ միասին կտուժեին պատուհասներից: Այն բոլոր վայրերը, որ նրանք պղծել էին գարշանքներով և մեղսավոր արարքներով, շուտով կպղծվեն իրենց դիակներով: Հնարավոր է՝ միայն այդպես նրանք կկարողանան հասկանալ իրենց արատավորության ողջ խորությունը:

Մտաբերե՛ք որևէ արժեքավոր իր, որ փչացել է այնպես, որ այլևս ենթակա չէ վերանորոգման: Ինչի՞ համար էր նախատեսված այն ի սկզբանե, և ի՞նչը անօգուտ դարձրեց այն: Որքա՜ն ուշադիր պետք է լինենք մենք, որպեսզի մեզ հետ ոչ մի նման բան չպատահի:

Հինգշաբթի **Նոյեմբերի 5**

Քաթանե գոտին

Կարդացե՛ք Երեմիա 13.1-11-ը: Ի՞նչ խորհրդանշական գործողություն պետք է կատարեր Երեմիա մարգարեն և ի՞նչ կարևոր դաս դա պետք է սովորեցներ: _____

_____

_____

Այս խորհրդանշական գործողությունը բանավեճերի առարկա է աստվածաբանների մեջ, որովհետև Եփրատ գետը (եբրայերենի համընդհանուր ճանաչում գտած մեկնաբանությունը, բայց ոչ միակը) Երուսաղեմից հարյուրավոր կիլոմետրերով հեռու էր: Եզրասից չորս

ամիս պահանջվեց՝ նշանակման վայրը հասնելու համար՝ միայն մեկ ուղղությամբ (Եզրաս 7.9): Լուրն ավելի հասկանալի լինելու համար Աստված Երեմիային հրամայեց դա կրկնել չորս անգամ: Այսպիսով, որոշ աստվածաբաններ պնդում են, որ այս դեպքում այլ վայր է նկատի առնվում: Մյուս կողմից, ոմանք պնդում են, որ այդքան հեռավոր ճանապարհորդությունը նրան օգնեց՝ ցույց տալու, թե որքան հեռավոր երկրից են վերադառնալու Իսրայելի որդիները: Ավելին, վերադառնալով այդպիսի հեռավոր վայրից՝ Երեմիան կարող էր հասկանալ հրեաների վերադարձի ուրախությունը՝ 70 տարի անց:

Բոլոր դեպքերում, գոտին խորհրդանշում է Երուսաղեմն ու տաճարը՝ մաքուր և անզարդ, ինչպես ամենասկզբում էր: Քաթանե գոտի կապած մարդը խորհրդանշում էր Իրեն՝ Աստծուն: Սա ցույց է տալիս, թե որքան ջերմորեն էր Աստված կապված Իր ժողովրդի հետ: Որոշ մեկնիչներ առանձնահատուկ ուշադրություն են դարձնում կտորին, որից պատրաստված էր գոտին, մասնավորապես քաթանը, որ օգտագործվում էր քահանաների հագուստի համար (Ղևտացոց 16.4): Ի վերջո, Հուդան պետք է լիներ քահանայական ծառայություն կատարող ժողովուրդը:

Այնպես, ինչպես գոտին փչացավ, այդպես էլ կանարգվի ազգի հպարտությունը: Ինչպես գոտին է սերտ հարում մարդու մարմնին, այդ մարդիկ նույնպես մի ժամանակ հարել էին Տիրոջը և եղել էին Նրա գովաբանության և փառքի աղբյուրը: Բայց, փոխառնելով շրջապատող մշակույթը, նրանք արատավորեցին իրենց և փչացան:

Կարդացե՛ք Երեմիա 13-ը և համեմատե՛ք Երկրորդ Օրինաց 4.5-8-ի հետ: Այս համարներն ինչպե՞ս են նկարագրում այն վիճակը, որի մեջ հայտնվել էր ժողովուրդը: Ի՞նչ են ասում մեզ այս տեքստերը: _____

_____

_____

Ուրբաթ **Նոյեմբերի 6**

Հետագա ուսումնասիրության համար

Կավի ու բրուտի կերպարը, որ առանձնահատուկ կերպով ներկայացված է Հռոմեացիս թղթի իններորդ գլխում, կարևոր հարց է բարձրացնում այն մասին, թե մենք ինչպես ենք ջանում հասկանալ Աստծո գործողությունները: Հարցն, իհարկե, այն է, որ ամենից հա-

ձախ մենք դրանք չենք հասկանում: Մենք չպետք է զարմանանք դրանից, այնպես չէ՞: Կարդացե՛ք Եսայիա 55.8-ը: Մարդ լինելով՝ մենք շատ սահմանափակ գիտելիքներ ունենք, առավել ևս՝ Աստծո բոլոր ճանապարհների հարցում: Այս տեսակետն ու մարդկային գիտելիքի սահմանափակությունը բացահայտվում են այն բանում, ինչ կոչվում է «տրամաբանական պարադոքս»: Եկե՛ք դիտարկենք հետևյալ պնդումը. «Սևիլյան սափրիչը սափրում է բոլոր նրանց, ովքեր իրենք չեն սափրվում»: Սևիլյան սափրիչը սափրո՞ւմ է ինքն իրեն: Եթե այո, ապա նա չի կարող սափրել իրեն, որովհետև նա սափրում է բոլոր նրանց, ովքեր իրենք չեն սափրվում: Բայց եթե նա ինքը չի սափրվում, ապա նա պետք է սափրի իրեն՝ այն նույն պատճառով, որ նա սափրում է բոլոր նրանց, ովքեր իրենք չեն սափրվում: Պատասխանից անլուծելի պարադոքս է ստացվում, որը ցույց է տալիս մեր բանականության սահմանափակությունը: Այդպիսով, եթե աշխարհային հարցերը, օրինակ, «ում և ինչպես է սափրում սևիլյան սափրիչը», այդքան խճճված են, ապա առավել ևս՝ ըմբռնելու համար բարդ են այնպիսի խորը ճշմարտություններ, ինչպիսիք են Աստծո գործողությունների բնույթն ու ծավալը աշխարհում: Սակայն մենք ունենք խաչը, որ մեզ հիմք է տալիս՝ լիովին վստահել Աստծուն և Նրա սիրուն, անգամ եթե աշխարհում ինչ-որ անբացատրելի բան է տեղի ունենում:

«Մեղքի ծագումն ու դրա գոյության պատճառները շատերի համար անլուծելի հանելուկ են: Տեսնելով չարիքի կործանարար գործողությունը, որն անխուսափելիորեն տրտմություն և ամայություն է բերում, մարդիկ ակամայից հարց են տալիս իրենք իրենց. ինչպե՞ս դա կարող է թույլ տալ Նա, Ում իմաստությունը, իշխանությունն ու սերն անսահման են: Այս գաղտնիքի մեջ նրանք չեն կարող ներթափանցել: Իրենց անըմբռնողության և կասկածի մեջ նրանք չեն տեսնում այն ճշմարտությունները, որոնք հստակ կերպով բացահայտված են Աստծո Խոսքում և նախատեսված են մեր փրկության համար» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 492):

Հարցեր քննարկման համար

1. Ի՞նչ խնդիրներ են ծագում աշխարհում չարի գոյության ուսումնասիրման հարցում՝ Աստծո բացարձակ տիրապետության լույսի ներքո: Մեծ պայքարի սցենարն ինչպե՞ս է օգնում մեզ՝ պատասխանելու որոշ բարդ հարցերի, գոնե մասնակիորեն:

2. Ուրիշ ի՞նչ խորհրդանիշներ են հանդիպում Աստվածաշնչում: Ինչո՞ւ է Աստված օգտագործում խորհրդանիշները: Որո՞նք են խորհրդանիշների առավելությունները:

ԴԱՍ 7

ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-13

ՃԳՆԱԺԱՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք. Երեմիա 9, Երեմիա 10.1-15, Հռոմեացիս 1.25, Երեմիա 26, Գործք առաքելոց 17.30, Գործք առաքելոց 5.34-41:

Հիշելու համարը.

«Այլ սրանով պարծենա, ով որ պարծենում է, թե հասկանում և ճանաչում է ինձ, որ ես եմ Տերը, որ երկրի վրա ողորմություն, իրավունք և արդարություն եմ անում, որ ես սրանց եմ հավանում» (Երեմիա 9.24):

Աստծո ծառայի ծանր աշխատանքն ու փորձությունները շարունակվում էին: Իրականում Երեմիա մարգարեի գրեթե ողջ գիրքը պատմում է խնդիրների մասին, որոնց բախվում է մարգարեն՝ ցանկանալով դրդել մարդկանց՝ ականջ դնելու այն խոսքերին, որ Տերը ձգտում է հասցնել նրանց Իր սիրով ու հոգատարությամբ:

Պատկերացրե՛ք, թե ինչ կպատահեր, եթե մարդիկ ականջ դնեին Երեմիային և ընդունեին մարգարեի նախազգուշացումները: Եթե ողջ ժողովուրդը, թագավորներն ու ազգի ղեկավարները ականջ դնեին և խոնարհվեին Աստծո առջև, սոսկալի ճգնաժամը տեղի չէր ունենա: Նրանց ապաշխարելու հնարավորություն էր պարգևվել: Անգամ բազում չարիքներ, վատ արարքներ գործելով՝ նրանք փրկություն և քավություն ստանալու հնարավորություն ունեին: Դուռը բաց էր, նրանք պարզապես հրաժարվեցին ներս մտնել:

Միևնույն ժամանակ, մեզ համար որքա՜ն հեշտ է այսօր զարմանալ նրանց սրտերի քարացածության վրա: «Եվ այն ամենն օրինակի համար էր նրանց հանդիպում, բայց մեզ խրատի համար գրվեց, որոնց դարերի վերջը հասավ» (Ա Կորնթացիս 10.11): Մենք մեզ համար ի՞նչ դասեր կքաղենք վերը բերված օրինակներից:

Բայց ով որ պարծենում է...

Երեմիա մարգարեի գրքի 9-րդ գլխում մենք մարգարեին հանդիպում ենք երկրին ու ժողովրդին սպառնացող անխուսափելի աղետի համար ողբալիս: Աստված դատավճիռ էր հրապարակել Երուսաղեմի համար, իսկ երբ Աստված ինչ-որ բան է ասում, Նա կատարում է Իր ասածը: Այն, ինչին նրանք պետք է բախվեին, պարզապես պատահականություն չէր, ոչ այն սոսկալի ու անբացատրելի իրադարձություններից մեկը, որ տեղի են ունենում ժամանակ առ ժամանակ: Ո՛չ, նրանք կբախվեն Աստծո ուղղակի դատաստանին: Նրա տխրությունը, սակայն, լոկ մի փոքր արտացոլումն էր այն ցավի, որ զգում էր Աստված:

Թեև համատեքստը տարբեր է, ստորև բերված մեջբերումը հիանալի կերպով արտացոլում է վերը շարադրված միտքը: «Խաչը սոսկ մեր բթացած զգացմունքների համար բացում է այն ցավը, որ հենց սկզբից մեղքը պատճառել էր Աստծո սրտին: Արդարությունից յուրաքանչյուր նահանջ, յուրաքանչյուր կոպիտ արարք, մարդկության յուրաքանչյուր անհաջողություն՝ Աստծո իդեալին հասնելու հարցում տրտմեցնում է Քրիստոսին: Երբ Իսրայելի ժողովրդին պատուհասներ էին հասնում՝ թշնամիներից կախվածությունը, դաժանությունն ու մահը, որոնք ակներևաբար Աստծուց բաժանվելու արդյունքն էին, ասվեց. «Եվ նրա սիրտն էլ իջավ Իսրայելի նեղության համար», «Նրանց բոլոր նեղությունների մեջ նա նեղվում է... նրանց վեր առավ և կրեց նրանց բոլոր վաղուցվա օրերում» (Դատավորաց 10.16, Եսայիա 63.9» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 263):

Կարդացե՛ք Երեմիա 9-ը՝ մարգարեի տխուր փորձառությունը: Ուշադրությո՛ւն դարձրեք 23 և 24 համարներին: Այս բառերը ինչո՞ւ են այսօր այդքան արդիական անգամ մեզ համար: _____

_____

_____

Ինչպես արդեն ասվել է, երբ հարցը հասնում է մահվանը, մենք ամենքս նման ենք «չամրացված քաղաքների»: Իմաստությունը, զորությունն ու հարստությունը արժեք ունեն, սակայն դրանց ապավինելը, հատկապես աղետի պայմաններում կամ մահին դեմ հանդիման, անօգուտ է, անիմաստ և անբովանդակ: Բացի կործանման նախա-

զգուշացումից՝ ժողովուրդին ասվեց, թե ինչը նշանակություն ունի իսկապես և ինչ պետք է իմանալ և հասկանալ, այն է՝ Աստծո բարությունը, արդարացիությունն ու արդարությունը: Ուրիշ ոչինչ չի կարող մեզ հույս և մխիթարություն պարգևել, երբ կործանվում է ամեն երկրային, ամեն մարդկային բան, այդ թվում և մեր մարմինը:

Ի՞նչ է ասում խաչն Աստծո ողորմության, արդարացիության և արդարության մասին:

Երկուշաբթի **նոյեմբերի 9**

Արարչագործությո՞ւնը, թե՞ Արարիչը

Ինչպես հայտնի է՝ Աստծո ժողովուրդը կոչված էր տարբերվելու շրջապատող ժողովուրդներից, որոնք թաղվել էին հեթանոսության, կռապաշտության և սուտ ուսմունքների մեջ: Մովսեսի առաջին հինգ գրքերում բազում նախազգուշացումներ կան՝ կապված հեթանոս հարևանների ծեսերի և սովորությունների հետ: Հրեաները պետք է աշխարհին վկայեին Աստծո մասին՝ որպես Արարիչ ու Փրկիչ: Ցավոք, Հին Կտակարանի պատմությունը հակառակն է ներկայացնում:

Կարդացե՛ք Երեմիա 10.1-15-ը: Տերն ի՞նչ է ասում Իր ժողովրդին: Այս նախազգուշացումն ինչպե՞ս կհնչեր, եթե այն տրվեր այսօր՝ մեր ժամանակներում, մեր մշակույթի համատեքստում: _____

_____

_____

Երեմիան ժողովրդին ասում է այն, ինչ նրանց առանց այդ էլ հայտնի էր. այդ հեթանոսական աստվածները ոչ այլ ինչ էին, քան մարդկային ձեռքերի գործ՝ սեփական երևակայության հորինվածք՝ աղավաղված դիվական ուժերի ազդեցությամբ: Սա վառ օրինակ է այն բանի, ինչի մասին Պողոսը գրում էր մի քանի դար անց. «Որոնք Աստծո ճշմարտությունը ստության հետ փոխեցին, և երկրպագեցին ստեղծվածներին, քան թե Ստեղծողին, որ օրհնյալ է ի հավիտյանս. ամեն» (Հռոմեացիս 1.25):

Ուշադրությո՛ւն դարձրեք, թե այս համարում ինչպես է Պողոսը Արարչին հակադրում արարչագործությանը: Նման հակադրություն ներկայացված է Երեմիա մարգարեի գրքի համարներում, որոնք խոսում են այսպես կոչված «աստվածների» անզորության և թուլության մասին: Իր ծառայության ընթացքում Երեմիան փորձում էր ցույց տալ

մարդկանց, թե որքան անմիտ է վստահել անշունչ առարկաներին, որոնք ոչինչ չեն կարող անել: Նրանք տարբերվում են Արարիչ Աստծուց, Ով ոչ միայն արարել է այս աշխարհը, այլ նաև Իր զորությամբ պահում է այն (տե՛ս Եբրայեցիս 1.3):

Սակայն, չնայած տվյալ տեքստերի հնությանը, դրանք այսօր մեզ համար արդիական են մնում: Հնարավոր է՝ մենք գայթակղություն չունենանք երկրպագելու մարդկային ձեռքի գործ հանդիսացող պատկերներին կամ բնության երևույթներին: Սակայն շատ հեշտ է ապավինել այն բանին, ինչը չի կարող փրկել. այնպես, ինչպես կուռքերը դատաստանի օրը չկարողացան փրկել Հուդային:

Ի՞նչ հավանականություն կա, որ մենք, եթե զգոն չլինենք, կսկսենք ապավինել մեկ այլ բանի՝ բացի Աստծուց:

Երեքշաբթի **նոյեմբերի 10**

Ապաշխարության կոչ

Կարդացե՛ք Երեմիա 26.1-6-ը: Տերն ի՞նչ հույս է առաջարկում մարդկանց: _____

_____

_____

Բերված համարներում լուր կա, որը կարմիր թելի նման անցնում է Հին և Նոր Կտակարանների գրքերով, այն է՝ ապաշխարության, մեղքից հետ դառնալու և փրկություն ձեռք բերելու կոչը, որ Աստված առաջարկում է բոլորին:

Ի՞նչ լուր է բովանդակվում հետևյալ համարներում: Բ Մնացորդաց 6.37-39, Եզեկիել 14.6, Մատթեոս 3.2, Ղուկաս 24.47, Գործք առաքելոց 17.30: _____

_____

_____

«Հուդայի բնակիչներն արժանի չէին Աստծո հոգածությանը, սակայն Նա չլքեց նրանց: Նրանք պետք է հեթանոսների մեջ փառաբանեին Նրա անունը: Նրանք, ովքեր բացարձակապես չգիտեին Տիրոջը, պետք է տեսնեին Նրա բնավորության փառքը: Մարդկանց Իր բարի մտադրություններին ծանոթացնելու համար Աստված շարունակում էր Իր ծառա մարգարեներին ուղարկել նման լուրով. «Հե՛տ դարձեք ամեն մեկդ իր չար ճանապարհից» (Երեմիա 25.5): «Իմ անվան համար ուշացնում եմ իմ բարկությունը, և Իմ փառքի

համար ինձ պիտի հետ պահեմ քո դեմ, որպեսզի քեզ չփչացնեմ... Իմ պատճառով, Իմ պատճառով պիտի անեմ, որովհետև ինչպե՞ս պղծվում է Իմ անունը. և Ես Իմ փառքը ուրիշին չեմ տա» (Եսայիա 48.9,11) (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 319):

Հին և Նոր Կտակարանները Աստծո ուղերձն են մեզ՝ մեղավորներիս, ովքեր մեղանչել են և արժանի են պատժի: Բայց Քրիստոսի խաչի՝ Հիսուսի քավչարար մահվան շնորհիվ Աստված մեզ փրկություն է պարգևել: Մեզ անհրաժեշտ է ընդունել մեր մեղավորությունը, հավատով ապավինել Հիսուսի արժանիքներին, որ պարգևված են մեզ՝ չնայած մեր անարժան լինելուն, և ապաշխարել մեր մեղքերից: Իհարկե, ճշմարիտ ապաշխարությունը ներառում է մեղքից ազատումը՝ Աստծո շնորհի օգնությամբ:

Անկախ մեր գործերից՝ մենք կարող ենք ապաշխարել մեր մեղքերից և ներում ստանալ: Ավետարանը մեզ այդպիսի հնարավորություն տալիս է: Ո՞ր մեղքերի համար եք ուզում ապաշխարել այսօր:

Չորեքշաբթի **նոյեմբերի 11**

Մահացու վտանգ

Հետ նայելով՝ դժվար է հավատալ, որ մարդկային սիրտը կարող է այդքան խստանալ: Երեքշաբթի օրվա դասում մենք նշեցինք, որ, չնայած Երեմիայի լուրի խստությանը, այն տրվեց հույսի հետ միասին: Եթե մարդիկ ապաշխարեին, Աստված կկարողանար կանխել այն սոսկալի պատիժները, որոնց նրանք ենթարկվեցին: Եթե միայն նրանք ճիշտ վարվեին, եթե միայն նրանք հնազանդվեին Աստծուն և ստանային Նրա օրհնությունը՝ որպես հնազանդության արդյունք, ամեն ինչ լավ կլիներ: Աստված կներեր, կապաքիներ ու կվերականգներ: Ավետարանի շնորհը, որ վերջին հաշվով տրված է Հիսուս Քրիստոսի զոհի շնորհիվ, բավարար է մեղքերի ներման և մարդկանց վերականգնման համար: Հույսի, խոստման և փրկության ինչպիսի՜ հրաշալի լուր:

Ո՞րն էր մարդկանց պատասխանը Երեմիային: (Տե՛ս Երեմիա 26.10,11-ը): _____

_____

_____

Իսրայելում միայն իրավաբանորեն իրավասու դատարանը կարող էր մահվան դատավճիռ կայացնել: Մահապատժի որոշումն ընդուն-

վում էր դատավորների ձայների մեծամասնությամբ: Քահանաներն ու սուտ մարգարեները մեղադրեցին Երեմիային՝ ցանկանալով մահվան դատապարտել նրան: Նրանք, ովքեր հանդես եկան նրա դեմ, ցանկանում էին նրան իբրև քաղաքական հանցագործ և դավաճան ներկայացնել:

Ի՞նչ պատասխանեց Երեմիան (Երեմիա 26.13-15): _____

_____

_____

_____

Երեմիան չնահանջեց. անգամ մահվան սպառնալիքի առջև գտնվելով և վախ զգալով՝ մարգարեն, այնուամենայնիվ, ոչ մի բառ չի մեղմացնում այն լուրից, որ ստացել էր Տիրոջից, Ով հենց սկզբից նրան զգուշացրել էր ոչ մի բառ չպակասեցնել (Երեմիա 26.2): Այդպիսով, այս հատվածում մենք միանգամայն այլ Երեմիայի ենք հանդիպում՝ տարբեր այն մարգարեից, ով ողբում էր, տրտնջում, անիծում իր ծնվելու օրը: Մենք տեսնում ենք Աստծո մարդուն, ով հաստատ և վստահորեն հռչակում է Աստծուց ստացած լուրը:

Վերջին անգամ ե՞րբ եք ամեն գնով պաշտպանել Քրիստոսի մասին ճշմարտությունը: Եթե դուք երբեք ստիպված չեք եղել այդպես վարվել, ապա, ձեր կարծիքով, ո՞րն է դրա պատճառը:

Հինգշաբթի **նոյեմբերի 12**

Երեմիայի փախուստը

Ինչպես նշվել է չորեքշաբթի օրվա դասում, Երեմիան, չնայած իր վախերին ու ապրումներին, հաստատորեն պնդում էր ճշմարտությունը՝ լիովին գիտակցելով այն մահացու սպառնալիքը, որին կարող էր հանգեցնել իր դիրքորոշումը: Երեմիա 26.15-ում նա իշխաններին ու ժողովրդին նախազգուշացնում է, որ նրանք «լավ իմանան». եթե նրանք իրեն զրկեն կյանքից, պատիժ կկրեն անմեղ արյուն թափելու համար: Երեմիան գիտեր, որ մեղավոր չէ, ինչի համար մեղադրում էին իրեն:

Կարդացե՛ք Երեմիա 26.16-24-ը: Երեմիան ինչպե՞ս խուսափեց մահից: _____

_____

_____

Զարմանալի է, որ «իշխաններն» ու «բոլոր ժողովուրդը» հանդիմանեցին քահանաներին ու մարգարեներին, նրանց, ովքեր պետք է լինեին ազգի հոգևոր առաջնորդները և պաշտպան կանգնեցին Երեմիային: Նրանք հիշեցրեցին Միքիա մարգարեի պատմությունը, ով ապրել էր Իսրայելում Երեմիայից մեկ դար առաջ: Թագավորը չսպանեց Միքիային, այլ լսեց նրա խորհուրդը, ողջ ժողովուրդն ապաշխարեց, և աղետը կանխվեց, գոնե՝ առժամանակ: Երեմիայի օրերի մարդիկ ավելի իմաստուն էին, քան իրենց ղեկավարները, և ցանկանում էին երկիրը փրկել ճակատագրական սխալից՝ թույլ չտալով Աստծո մարգարեի մահը:

Արդարացնող վճիռն ընդգծեց, որ Երեմիան անմեղ էր այն բանում, ինչում իրեն մեղադրում էին: Սակայն ազգի ղեկավարների ու «մարգարեների» ատելությունը միայն ուժեղացավ: Նրանց սրտերում բնակվեց ցասումն ու վրեժի ծարավը: Նրա ազատումը միայն կարճատև հանգիստ բերեց մարգարեին: Նա անվտանգության մեջ չէր:

Այստեղ մենք տեսնում ենք օրինակը այն բանի, թե ինչպես որոշ մարդիկ դասեր էին քաղում պատմությունից, իսկ մյուսները, իմանալով նույն պատմությունը, հրաժարվում էին սովորել: Նման մի օրինակի մենք հանդիպում ենք դարեր անց, երբ փարիսեցի Գամաղիելը ավագանու մյուս անդամներին խորհուրդ տվեց զգուշությամբ դիտարկել Հիսուսի հետևորդների գործերը:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 5.34-41-ը: Այս հատվածում ի՞նչ ընդհանուր բան կա Երեմիայի պատմության հետ: Մենք ինչ դասեր կարող ենք քաղել նախորդ դարերի մարդկանց պատմություններից ու սխալներից:

Ուրբաթ **նոյեմբերի 13**

Հետագա ուսումնասիրության համար

«Սրանով ճանաչեցինք (Քրիստոսի) սերը, որ Նա իր անձը տվեց մեզ համար. և մենք էլ պարտավոր ենք մեր եղբայրների համար տալ մեր անձերը» (Ա Հովհաննես 3.16): Անկասկած, բնության մեջ, մարդկային հարաբերություններում և հենց արարչագործության հրաշքների մեջ մենք տեսնում ենք Աստծո սերը, թեև մեղքը շատ է աղավաղել արարչագործությունն ու իրականությունը գնահատելու և ճիշտ ընկալելու մեր ընդունակությունը: Բայց խաչի վրա դիմակները պատռվեցին, և աշխարհն ստացավ այդ սիրո լիակատար ու առավել

հստակ բացահայտումը, ինչը, Էլեն Ուայթի խոսքերով, հանգեցրեց «աստվածային ուժերի բաժանման» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություն, հատոր 7, 924):

Աստվածային ուժերի բաժանո՞ւմ:

Մեր հանդեպ Աստծո սերն այնքան մեծ է, որ Աստվածության Անձնավորությունները համաձայնվեցին այդ «բաժանմանը», որպեսզի փրկեն մեզ: «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր Ինձ» (Մատթեոս 27.46). ահա՛ այդ «բաժանման» առավել վառ ու հզոր արտահայտությունը, օրինակն այն արժեքի, որ անհրաժեշտ էր վճարել մեզ փրկելու համար: Այստեղ մենք կրկին տեսնում ենք այն ցավն ու տառապանքը, որ Տերն ապրեց մեր մեղքի պատճառով:

Այդ պատճառով «մենք սիրենք նրան, որովհետև առաջ Նա սիրեց մեզ» (Ա Հովհաննես 4.19): Իհարկե՛, լինելով ընկած մարդիկ՝ մենք միայն նմանակում ենք այդ սերը, բայց անգամ մեր նմանակումը ախտահարված է եսասիրությամբ և մեղավոր ցանկություններով: Աստծո սերը գերազանցում է մեր սերը. մենք այն արտացոլում ենք այնպես, ինչպես կեղտոտ ջրափոսն է արտացոլում երկինքը:

Հարցեր քննարկման համար

1. Թեև այսօր մենք չենք երկրպագում կենդանիների պատկերներին կամ բնությանը, ինչպես դա անում էին հին մարդիկ, մենք կարո՞ղ ենք բնությունը կուռք կամ աստված դարձնել:
2. Ո՞րն է ապաշխարության դերը քրիստոնյայի կյանքում: Բացի ամենաառաջին ապաշխարությունից, երբ մենք Հիսուսին ընդունեցինք որպես մեր Տեր, ապաշխարությունն ի՞նչ դեր է շարունակում խաղալ հավատացյալի կյանքում:
3. Խորհեցե՛ք «աստվածային ուժերի բաժանման» գաղափարի մասին: Ինչպե՞ս դա հասկանալ: Դա մեզ ի՞նչ է ասում մահացու վտանգի և մեղքի բարձր գնի մասին:

ԴԱՍ 8

ՆՈՅԵՄԲԵՐԻ
14-20

ՀՈՎՍԻԱՅԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Բ Մնացորդաց 33, Ամբակում 1.2-4, Դ Թագավորաց 22, Փիլիպպեցիս 2.3-8, Դ Թագավորաց 23.1-28, Ա Կորնթացիս 5.7:

Հիշելու համարը.
«Եվ նրանից առաջ նրա պես թագավոր չէր եղել, որ բոլոր սրտով և բոլոր հոգով և բոլոր զորությունով Տիրոջը դարձած լիներ Մովսեսի բոլոր օրենքի համեմատ, և նրանից հետո նրա նմանը վեր չկացավ» (Դ Թագավորաց 23.25):

Ծնողները գիտեն, թե որքան ծանր բան է, երբ երեխաները, հատկապես, եթե նրանք մեծացել են և դուրս եկել ծնողների վերահսկողությունից, սխալ որոշումներ են ընդունում: Իհարկե, նման բան կարող է տեղի ունենալ ոչ միայն ծնողների ու երեխաների միջև: Մեզանից ո՞վ չի տեսել, թե ինչպես է ընկերներից, ազգականներից կամ ծանոթներից որևէ մեկը կատարել այնպիսի ընտրություն, որը կարող էր վնասել նրան: Բայց ազատ կամքը, հատկապես բարոյական ընտրության ազատությունը, ոչինչ չեն նշանակում, եթե մենք սխալ վարվելու ազատություն չունենանք: «Ազատ» մարդը, ով ազատ է կատարելու միայն ճիշտ գործողություններ, իսկապես ազատ չէ:

Ահա թե ինչու Սուրբ Գրքի մեծ մասը պատմում է Աստծո մասին, Ով Իր ժողովրդին նախազգուշացնում է, որ սխալ որոշումներ չկայացնեն: Երեմիա մարգարեի գրքի հիմնական մասը բովանդակում է Իր ընտրյալ ժողովրդին ուղղված այն Աստծո կոչերը, Ով հարգում է ազատ ընտրությունը և ազատ կամքը:

Եվ թեև, ցավոք սրտի, պատմության մեծ մասը բացասական բնույթ ունի, այնուամենայնիվ այս շաբաթվա դասում մենք հույսի մի շող կտեսնենք, այսինքն՝ մենք կդիտարկենք այն քիչ թագավորներից մեկի կյանքը, ով, օգտագործելով ազատ կամքը, վճռեց և «Տիրոջ աչքի առաջ ուղղություն արեց»:

Միաշաբթի **Նոյեմբերի 15**

Մանասեի ու Ամոնի կառավարումը

Որքան էլ ցանկանանք օբյեկտիվ լինել որևէ բան ուսումնասիրելիս, մենք, մարդ լինելով, անհուսալիորեն սուբյեկտիվ ենք: Մենք աշխարհը տեսնում ենք ոչ այնպիսին, ինչպիսին նա կա իրականում, այլ այն ընկալում ենք մեր երևակայության շրջանակներում: Եվ քանի որ մենք ընկած ու արատավոր էակներ ենք, այդ արատավորությունը ազդեցություն է գործելու մեր ընկալման և շրջակա աշխարհի մեկնաբանության վրա: Օրինակ, ուրիշ ինչպե՞ս կարող ենք մեկնաբանել Մանասեի նման հրեական թագավորի գործողությունները (ՔԱ մոտավորապես 686-643թթ), հատկապես նրա սոսկալի ուրացության առաջին տարիներին: Դժվար է պատկերացնել, թե ինչպես էր նա արդարացնում այն սարսափելի պղծությունները, որոնք թույլ էր տալիս ծաղկել Հուդայում:

Կարդացե՛ք Բ Մնացորդաց 33-ը: Այս պատմությունը մեզ ի՞նչ է ասում Մանասե թագավորի անբարոյականության մասին: Բայց, ամենակարևորը, այն ինչպե՞ս է պատմում ներելու՝ Աստծո պատրաստակամության մասին: _____

_____

_____

_____

Իհա՛րկե, ցանկացած մարդ, ով շղթաներով գերի էր տարվել Բաբելոն, կարող էր վերաիմաստավորել իր կյանքը: Սակայն Աստվածաշունչը հստակ կերպով ասում է. Մանասեն իսկապես ապաշխարեց իր արարքների համար և, գահին վերականգնվելով, ձգտում էր վերադարձնել իր հասցրած վնասը: Ցավոք, նրա գործողությունների հետևանքներն առավել սոսկալի էին, քան նա կարող էր պատկերացնել:

«Բայց այդ զղջումը, որը ինքնին նշանավոր բան էր, չափազանց ուշացած եղավ, որպեսզի երկիրը փրկեր հեթանոսական սովորությունների բազմամյա քայքայիչ ազդեցությունից: Ծատերը սայթաքել և ընկել էին, որպեսզի արդեն այլևս ոտքի չկանգնեն» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 383): Եվ, որ առավել տխուր է, նրանց մեջ, ում վրա ավերիչ ազդեցություն էր գործել Մանասեի դավաճանությունը, գտնվում էր նաև նրա որդի Ամոնը, ով հոր մահից հետո ժառանգեց գահը: «Եվ նա չարություն արեց Տիրոջ աչքի առաջին,

ինչպես որ արել էր իր հայր Մանասեն, և այն ամեն կուռքերին, որոնք իր հայր Մանասեն շինել էր, Ամոնը զոհեր մատուցեց և նրանց ծառայեց» (Բ Մնացորդաց 33.22): Բայց ամենասարսափելին այն է, որ ի տարբերություն իր հոր, Ամոնը չապաշխարեց իր մեղքերի համար:

Ո՞վ է իր վրա զգացել անգամ ներված մեղքի սարսափելի հետևանքները: Մեղքի հանդեպ հաղթանակի ի՞նչ խոստումներ է տալիս Աստվածաշունչը: Եկե՛ք դիմենք դրանց, նախքան մեղքը կբացահայտի իր տխուր հետևանքները:

Երկուշաբթի **նոյեմբերի 16**

Նոր թագավորը

Մի անգամ մի քարոզիչ ասաց. «Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչի մասին եք դուք աղոթում: Չէ՞ որ դուք կարող եք ստանալ խնդրածը»: Իսրայելը ծարավի էր ու երազում էր թագավոր ունենալ՝ շրջապատող ժողովուրդների նման: Նրանք ստացան այն, ինչի մասին խնդրում էին, և դատավորների դարաշրջանից հետո Իսրայելի պատմությունը ամբարիշտ թագավորների կառավարման պատմություն է: Որպես արդյունք՝ տեղի ունեցավ ողջ ժողովրդի անկում: Սակայն միշտ եղել են բացառություններ՝ Հովսիա թագավորի կառավարման նման, ով գահ բարձրացավ ՔԱ 639 թվականին և կառավարեց մինչև ՔԱ 608 թվականը:

Նոր թագավորն ի՞նչ համատեքստով գահ բարձրացավ: (Տե՛ս Բ Մնացորդաց 33.25-ը): _____

_____

_____

Մարդիկ արել էին իրենց ընտրությունը, և ամեն բան կատարվեց նրանց կամքին համապատասխան: Երիտասարդ թագավորը գահ բարձրացավ խոշոր ցնցումների, ուրացության և բռնության ժամանակաշրջանում՝ անգամ իշխանության բարձրագույն օղակներում: Հետևելով, թե ինչ է տեղի ունենում, շատ հավատացյալներ հարց էին տալիս. երբևէ կկարողանա՞ն կատարվել Իսրայելին տրված խոստումները: «Մարդկային տեսակետից՝ ընտրյալ ժողովրդի մասին Աստծո մտադրությունը թվում էր գրեթե անիրագործելի» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 384):

Աստծուն հավատարիմ մարդկանց անհանգստությունն արտահայտված է Ամբակում մարգարեի հետևյալ խոսքե-

ռում: Կարդացե՛ք Ամբակում 1.2-4-ը: Ինչի՞ մասին է խոսում մարգարեն: _____

_____

_____

Ցավոք, չարիքի, բռնության, ամբարշտության և անօրենության խնդրի պատասխանը կգա, բայց հյուսիսից՝ բաբելոնացիներից, ում Աստված կօգտագործի, որպեսզի դատաստան տեսնի Իր կամակոր ժողովրդի հանդեպ: Ինչպես նշել ենք, ամեն ինչ կարող էր այլ կերպ լինել, սակայն ապաշխարելուց հրաժարվելու պատճառով նրանք հնձեցին իրենց մեղքերի պատիժը:

Որքա՜ն հաճախ է «Աստծո նպատակը» մարդկային տեսակետից թվում անհասանելի: Սա մեզ ի՞նչ է ասում այն մասին, որ մենք պետք է հավատով ընդունենք այն, ինչն անտեսանելի է և ոչ լրիվ հասկանալի մեզ համար:

Երեքշաբթի **նոյեմբերի 17**

Հովսիան գահին

«Ութ տարեկան էր Հովսիան, երբ որ թագավոր եղավ, և երեսունմեկ տարի թագավորեց Երուսաղեմում, և նրա մոր անունն էր Հեդիդա՝ դուստր Բազկադացի Ադայիայի: Եվ Տիրոջ աչքի առաջ ուղղություն արեց, և գնաց իր հայր Դավիթի բոլոր ճանապարհով և չխոտորվեց աջ կամ ձախ» (Դ Թագավորաց 22.1,2): Հաշվի առնելով նրա գահ բարձրանալու համատեքստը՝ ի՞նչն է հատկանշական այս տեքստերում: _____

_____

_____

_____

_____

Աստվածաշունչը մեզ ոչ մի բացատրություն չի տալիս այս հրաշալի երիտասարդի մասին, ով, հաշվի առնելով հանգամանքները, կարող էր ավելի շուտ դառնալ նույնքան արատավոր և ամբարիշտ, ինչպիսին իր հայրն էր: Սակայն ամեն բան այլ կերպ տեղի ունեցավ: Ինչ-որ պատճառներով նա ընտրեց այլ ճանապարհ, և դա պետք է դրական, թեև վերջին հաշվով սահմանափակ ազդեցություն ունենար ժողովրդի վրա:

Դ Թագավորաց 22-ը պատմում է այն բարեփոխումների մասին, որ կատարվեցին տաճարում: Սողոմոնի կողմից տաճարի նվիրաբերման ժամանակից մինչև Հովսիայի բարեփոխումները (ՔԱ 622 թվական) անգործության դարեր էին անցել: Թագավորները հոգ չէին տանում տաճարի մասին: Ժամանակն իր հետքն էր թողել այն շենքի վրա, որ մի ժամանակ արտակարգ գեղեցիկ էր: Երիտասարդ թագավորը տեսավ, որ մոռացության երկար տարիների պատճառով տաճարն արդեն հարմար չէ երկրպագության համար:

Ի՞նչ արեց Հովսիան, երբ հայտնաբերեց, որ տաճարը ողբալի վիճակում է: Դ Թագավորաց 22.3-7: _____

_____

_____

Այսօր կասեին, որ թագավորն իր ֆինանսների նախարարին ուղարկեց քահանայապետի մոտ և խնդրեց նրան՝ ծրագիր կազմել և վերահսկել տաճարի վերակառուցման համար անհրաժեշտ նյութերի օգտագործումը և աշխատանքների ընթացքը: Նրանցից հաշվետվություն չէին պահանջում փողերի օգտագործման համար, որովհետև նրանք բարեխղճորեն էին վերաբերվում հանձնարարությանը: Ինչ-ինչ պատճառներով Հովսիան վստահեց նրանց, և, որքանով ցույց տվեց ժամանակը, այդ վստահությունն արդարացվեց:

Տաճարի վերականգնումը լավ արարք է, բայց իրականում ի՞նչն է կարևոր վերածննդի և վերափոխման համար: (Տե՛ս Փիլիպպեցիս 2.3-8-ը):

Չորեքշաբթի **նոյեմբերի 18**

Օրենքի գիրքը

Սրբարանի՝ հրեական երկրպագության կենտրոնի վերակառուցումը կարևոր էր, բայց շենքի վերանորոգումը այն ամենը չէ, ինչ հարկավոր էր ժողովրդին: Ամենագեղեցիկ ու բարդ շինությունները, թեկուզ և կառուցված են այն բանի համար, որ օգնեն երկրպագողներին՝ գիտակցելու Տիրոջ իշխանությունն ու վսեմությունը, ինքնին չեն կարող ժողովրդի մեջ վերածնել բարեպաշտությունը: Պատմությունը շատ մարդկանց գիտի, ովքեր այսօր «երկրպագում» են որևէ գեղեցիկ եկեղեցում, իսկ վաղը կարող են դուրս գալ և այնպիսի չարագործություններ կատարել, որոնց մտահղացումը, հնարավոր է, եղել է գեղեցիկ շինություններում:

Ի՞նչ տեղի ունեցավ տաճարի վերակառուցման ժամանակ: Ի՞նչ իրադարձություն արժանացավ Հովսիայի այդպիսի հուզական արձագանքին: Դ Թագավորաց 22.8-11:

_____

_____

_____

Գտնվել էր Մովսեսի Օրենքի գրքի մի մասը. թե հատկապես ո՛ր մասն էր դա, հնարավոր է և ողջ գիրքը եղած լիներ, Աստվածաշունչը չի հստակեցնում: Հավանաբար, այն գտնվել էր տաճարի պատի մեջ եղած որևէ գաղտնարանից:

Կարդացե՛ք Դ Թագավորաց 22.12-20-ը: Ի՞նչ լուր Ողդան փոխանցեց ժողովրդին: Այս խոսքերն ի՞նչ են ասում մեզ:

_____

_____

Ողդան փոխանցեց այն լուրը, ինչ և Երեմիա մարգարեն: Նրանք, ովքեր երես են դարձրել Աստծուց, իրենց արարքներով իրենց համար գերեզման են փորել և պետք է քաղեն իրենց ընտրության պտուղները:

«Ողդայի միջոցով Տերը հրամայեց ասել Հովսիային, որ Երուսաղեմի ավերման մասին Նրա վճիռը չի փոխվի: Անգամ եթե ժողովուրդը խոնարհվի Աստծո առջև, միևնույնն է՝ մարդիկ չեն խուսափի պատժից: Նրանց գիտակցությունն այնքան մթագնած է անօրենությամբ, որ եթե պատիժը վերացվի, նրանք կրկին կվերադառնան նախկին մեղսավոր կենսակերպին: «Ասացե՛ք այն մարդուն, որ ձեզ Ինձ մոտ ուղարկեց. այսպես է ասում Տերը. Ահա Ես չարիք պիտի բերեմ այս տեղի վրա և նրա բնակիչների վրա այն գրքի բոլոր խոսքերը, որ կարդացել է Հուդայի թագավորը: Նրա համար, որ Ինձ թողել են և խունկ ծխել ուրիշ աստվածների՝ Ինձ բարկացնելու համար իրենց ձեռքերի բոլոր գործերով, և Իմ բարկությունը պիտի բորբոքվի այստեղի վրա և չհանգչի» (համար 15-17)» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 399):

Հինգշաբթի **Նոյեմբերի 19**

Հովսիայի բարեփոխումները

Չնայած կործանման լրաբերներին՝ Հովսիան դեռևս լի էր վճռականությամբ՝ անելու այն, ինչ «ուղիղ էր Տիրոջ աչքի առաջ»: Թեև աղետն անհնար էր կանխել, «բայց, թագավորին հաղորդելով երկ-

նային պատիժների մասին, Տերը ժողովրդին չզրկեց ապաշխարելու և փոխվելու հնարավորությունից: Հովսիան Աստծո խոսքերում պատիժը մեղմելու ցանկություն որսաց և հաստատ որոշեց վճռական վերափոխումներ կատարել» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 400):

Կարդացե՛ք Դ Թագավորաց 23.1-28-ը: Ո՞րն էր բարեփոխումների էությունը, որ հավատարիմ թագավորը ցանկացավ կատարել իր ամբարիշտ երկրում: Այս գործողություններն ի՞նչ են ասում մեզ ընտրյալ ժողովրդի ողբալի վիճակի մասին: _____

_____

_____

_____

Հովսիան ողջ ժողովրդին հավաքեց Երուսաղեմում, որպեսզի նորոգի ուխտը Աստծո հետ: Վերջերս գտնված Օրենքի Գիրքը կարդացվեց, իսկ հետո խոստում տրվեց հետևել Տիրոջը:

Թագավորն այդ աշխատանքը չկատարեց ինքնուրույն, այլ հոգևոր առաջնորդներին խնդրեց անել ամեն անհրաժեշտը: Օրինակ՝ դարերի ընթացքում տաճարում զանազան իրեր էին հավաքվել՝ արձաններ ու խորհրդանիշներ, որոնք սատարում ու տարածում էին օտար երկրպագությունը Իսրայելում: Դրանք երբեմն խաղաղ դաշինքների մաս էին, որ դրվել էին Հուդայի ժողովրդի վրա, երբեմն էլ թագավորները դրանք դրել էին որպես խաղաղության կամ հանձնվելու նշան: Ինչպիսին էլ լինեին պատճառները, այդ պատկերները չպետք է գտնվեին այնտեղ, այդ պատճառով Հովսիան հրամայեց դուրս հանել դրանք և ոչնչացնել:

Հովսիայի բարեփոխումների ընթացքում Զատիկը տոնելը կատարվում էր ոչ միայն ընտանեկան շրջանում, ինչպես ընդունված էր նախկինում, այլ ողջ ժողովրդի մասնակցությամբ: Մարդկանց համար դրա խորհրդանշական ուղերձն այն էր, որ նրանք թողնեին իրենց նախկին կյանքը և սկսեին ապրել նոր կյանքով՝ խոստանալով ծառայել ճշմարիտ Աստծուն, Ով իրենց դուրս էր բերել Եգիպտոսից, իրենց երկիր էր տվել, ինչպես և խոստացել էր, և ամեն օր նրանց հետ էր առօրյա կյանքում:

Ի՞նչ է նշանակում Զատկի խորհուրդը մեզ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստներիս համար այսօր: (Տե՛ս Ա Կորնթացիս 5.7-ը):

Հետագա ուսումնասիրության համար

Այս դասի մեջ մենք տեսանք, թե որքան խորն էր արատավորության ու մեղքի անդունդը, որի մեջ ընկել էր Իսրայելը, և թե ինչպիսի արմատական բարեփոխումներ պահանջվեցին, որ ձեռնարկեց Յովսիա թագավորը: Սակայն ինչպե՞ս կարող էր ժողովուրդը այդքան ցած ընկնել: Ինչ-որ իմաստով պատասխանը պարզ է. դա տեղի ունեցավ, որովհետև մարդկությունն էր այդքան ցած ընկել: Մարդու անկման ընթացքը գիտականորեն հաստատվել է 1960 թվականին Յելի համալսարանում անցկացված նշանավոր փորձի արդյունքում:

Սթենլի Միլգրեմի անցկացրած փորձի մասնակիցներին կամայականորեն ընտրել էին թերթի հայտարարությունների միջոցով: Նրանք պետք է կառավարեին էլեկտրաշոկը, որ միացված էր հարևան սենյակում աթոռներին կապված մարդկանց: Անջատիչների վրա տարատեսակ նշումներ կային՝ «թեթև հարվածից» մինչև «վտանգավոր լիցք», երկու չարագուշակ անջատիչ՝ «XXX» նշումով: Փորձի մասնակիցներից պահանջվում էր հոսանքի ուժը մեծացնել փորձն անցկացնող գիտնականի հրահանգներին համապատասխան: Մարդկանց մեծամասնությունը կատարեց փորձի պայմանները՝ չնայած հարևան սենյակից լսվող ճիչերին և խնայելու աղերսներին: Իրականում հարևան սենյակում դերասաններ էին, ովքեր տառապյալների դերն էին խաղում: Փորձի նպատակն էր՝ ի հայտ բերել այն սահմանը, որին «բնականոն» մարդիկ կհասնեն՝ ցավ պատճառելու այն մարդկանց, ում նույնիսկ չէին ճանաչում, և դա միայն այն պատճառով, որ իրենց հրամայված է այդպես վարվել: Արդյունքները սոսկալի էին. չնայած, որ շատ մասնակիցներ իրենց լավ չէին զգում, անհանգստություն և անգամ զայրույթ էին վերապրում կատարվող փորձից, նրանց 65 տոկոսը շարունակեց փորձը՝ վստահ լինելով, որ իրենց զոհերը սոսկալի տառապանքներ են կրում: «Սովորական մարդիկ, - փաստում է փորձն անցկացրած գիտնականը, - պարզապես իրենց գործն էին կատարում, և որևէ որոշակի թշնամանք չունենալով իրենց կողմից՝ կարող էին սարսափելի ապակառուցողական գործընթացի գործակալները դառնալ»: Իսկ պատմության ընթացքում որքա՜ն «սովորական մարդիկ» են սոսկալի հանցագործություններ կատարել մարդկության դեմ: Հարց է ծագում. ինչո՞ւ: Քրիստոնյաները գիտեն պատասխանը՝ պարզ և հասկանալի՝ մենք մեղավորներ ենք:

Հարցեր քննարկման համար

1. Հովսիայի բարեփոխումների պատմությունը ի՞նչ է ասում մեզ մեր կյանքում Աստծո Խոսքի կարևորության մասին:
2. Անհրաժեշտ է պատասխանել կարևոր մի հարցի. եթե չափազանց ուշ էր՝ գալիք աղետից խուսափելու համար, ինչո՞ւ էր անհրաժեշտ ապաշխարության, վերածննդի ու վերափոխման կոչը: Ո՞րն էր այդ ամենի նպատակը: Դուք ինչպե՞ս կպատասխանեք: Հնարավոր է՝ պատճառն այն է, որ անհատական վերածնունդը տարբերվում է ողջ երկրի վերափոխումից:

ԴԱՍ 9

ՆՈՅԵՄԲԵՐԻ
21-27

ԵՐԵՄԻԱՅԻ ԼՈՒԾԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Երեմիա 16.1-13, Ովսե 1.1-3, Երեմիա 27.1-18. Դանիել 4.25, Երեմիա 28, Բ Տիմոթեոս 4.3,4:

Հիշելու համարը.
«Եվ ամենքին ասում էր. եթե մեկը կամենում է Իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա և ամեն օր իր խաչն առնի և Իմ հետևից գա» (Ղուկաս 9.23):

Ինչպես մենք արդեն տեսել ենք, Աստծո մարգարեները քարոզում էին ոչ միայն խոսքերով, այլ նաև օգտագործելով տեսանելի դասեր: Մարգարեները երբեմն պետք է «վերապրեին» այն լուրը, որ իրենք հռչակում էին. դա լուրը ժողովրդին փոխանցելու ևս մի եղանակ էր:

Եվ այստեղ Երեմիան կրկին կանչվեց «վերապրելու» այն լուրը, որ ինքը պետք է հասցներ մարդկանց: Առաջին հերթին, նա պետք է փայտե լուծ կրեր:

«Այսպես է ասում ինձ Տերը. Քեզ համար կապեր և լուծեր շինիր, և նրանց դիր քո պարանոցին» (Երեմիա 27.2): Այս խնդիրը բավականին ծանր էր՝ անգամ ամենաբարենպաստ հանգամանքներում, իսկ այս դեպքում այն է՛լ ավելի ծանր դարձավ, որովհետև կեղծ մարգարեն մարտահրավեր նետեց Երեմիային: Այս շաբաթ մենք կդիտարկենք ճշմարտության և մոլորության պայքարը մարդկանց սրտերի ու մտքերի համար: Մենք նաև կտեսնենք, թե ինչպես կարող է կեղծ լինել շնորհի լուրը:

Երեմիային արգելված էր սգալ, երբ ուրիշները հառաչում էին, և ուրախանալ, երբ մյուսները ցնծում էին: Այս դեպքում նա պետք է օգներ մարդկանց՝ գիտակցելու, թե ինչ տեղի կունենա նրանց մեղքերի պատճառով, ինչպես նաև նրանց դրդեր ապաշխարել և հնազանդվել Աստծուն՝ թեթևացնելով իրենց մեղավոր գործողությունների ծանր հետևանքները:

Միայնակ կյանքը

Կյանքում Երեմիայի վիճակը թեթև չէր (նա առաջինն է խոստովանում, որ այն չափազանց ծանր է եղել): Սակայն այն, ինչ տեղի էր ունենում, նույնիսկ է՛լ ավելի տխուր էր, քան մենք կարող ենք պատկերացնել:

Կարդացե՛ք Երեմիա 16.1-13-ը: Ո՞րն էր Երեմիայի լուրը Տիրոջից: Թեև այն խիստ էր, ինչպե՞ս օրհնություն դարձավ մարգարեի համար: (Համեմատե՛ք Ովսե 1.1-3-ի հետ):

_____

_____

_____

Ի տարբերություն Ովսեի, ով պետք է ամուսնանար պոռնիկի հետ՝ ցույց տալու համար, թե որքան խաթարված են Տիրոջ և Իսրայելի հարաբերությունները՝ երկրի հոգևոր պոռնկության պատճառով, Երեմիան պետք է ձեռնպահ մնար ամուսնությունից և երեխաներ չունենար: Դա ինչ-որ բավականին հազվադեպ ու ծայրահեղ բան էր այն ժամանակի և մշակույթի համար: Իսրայելում ընտանիք ստեղծելը շատ կարևոր գործ էր յուրաքանչյուր երիտասարդի համար: Բացի սիրուց և ընկերական հարաբերություններից, որ պետք է լինեն ընտանիքում՝ ամուսինների միջև, ընտանիքը, տոհմը շարունակելու միակ փաստացի միջոցն էր: Ինչո՞ւ Աստված Երեմիային արգելեց ընտանիք ստեղծել: Որպեսզի նրա սեփական կյանքը տեսանելի օրինակ լինի այն սոսկալի ժամանակի մասին, երբ ընտանիքները կքայքայվեն, և բաժանման ցավը՝ որպես ծանր բեռ, կդրվի ողջ մնացածների ուսերին: Երեմիայի ընտանիքի բացակայությունը մշտական նախազգուշացում և դաս էր նրա ժամանակակիցների համար:

Միայնությունը բաժին էր հասել Երեմիային նաև կյանքի մյուս ոլորտներում: Նրան արգելված էր այցելել այն տները, որտեղ սուգ էր: Սա խորհրդանշում էր Աստծո վերաբերմունքը՝ ապաշխարության և վերածննդի նրա կոչերին արձագանքելու՝ նրանց ցանկության բացակայության հանդեպ:

Բացի սգո տներ մտնելու արգելքից, մարգարեն նաև պետք է հեռու մնար հարսանեկան և այլ ուրախ միջոցառումներից: Դա մատնացույց էր անում ապագայի այն ժամանակը, երբ բաբելոնացիները վերջ կդնեն ուրախությանն ու ցնծությանը:

Այլ կերպ ասած՝ Երեմիան պետք է խուսափեր մասնակցել այն ծեսերին, որոնք կապված էին մարդկային հույզերի հետ՝ լինի դա տխրություն, թե ուրախություն: Նրա կյանքն ու կյանքի դառնությունները պետք է տեսանելի դաս դառնային: Եթե միայն ժողովուրդն ինչ-որ բան սովորե՞ր:

Երեմիա 16.1-13 հատվածն ինչպե՞ս է մեզ սովորեցնում գնահատել մարդկային այն աջակցությունը, որ մենք ուրախությամբ ստանում ենք ուրիշներից, և սովորեցնում աջակցել մյուս մարդկանց: Սակայն որքան էլ կարևոր լինի այդ աջակցությունը, անհրաժեշտ է հիշել. լավագույն աջակցությունը բխում է միայն Տիրոջից:

Երկուշաբթի **նոյեմբերի 23**

Երեմիայի լուծը

Կարդացե՛ք Երեմիա 27.1-18-ը: Ո՞րն էր ժողովրդին ուղղված Տիրոջ խոսքը: Այդ խոսքերն ինչո՞ւ դավաճանության խոսքեր թվացին շատերին: _____

_____

_____

_____

Այն լուծը, որ Երեմիան պետք է դներ իր պարանոցին, ժողովրդի ստորացման ու տառապանքների անսխալ նշան էր: Այն մատնացույց էր անում Հուդայի ռազմական նվաճումը: (Երկրորդ Օրինաց 23.48-ում և Գ Թագավորաց 12.4-ում կա լծի գաղափարը՝ որպես հալածանքների արտահայտություն): Երեմիան պետք է ֆիզիկապես զգար, թե ինչ է նշանակում բաբելոնյան ներխուժումը: Փայտե լուծը, որ Երեմիան դրել էր ձեռքերին և ուսերին, մեկուկես մետր երկարություն և ութ սանտիմետր հաստություն ուներ: Այս լուրի էությունն այն էր, որ եթե երկիրն ապստամբի Բաբելոնի դեմ, Տերը դա կգնահատի որպես ապստամբություն Իր դեմ, ինչի արդյունքում խռովարար ժողովուրդը է՛լ ավելի կտուժի:

Թեև որոշ երկիմաստություն կա բնագրի տեքստերում, թվում է, թե Երեմիան պետք է լուծը պատրաստեր ոչ միայն իր, այլ նաև այն օտարերկրյա տերությունների թագավորների համար, ում դեսպանները եկել էին Երուսաղեմ և դավ էին նյութել Նաբուգոդոնոսորի դեմ՝ Աստծո հրամանին հակառակ: Օտարերկրյա ներխուժման դեմ

պայքարը բնական արձագանք է, և, ինչպես երևում է, հենց դա էլ նրանք ցանկանում էին անել: Զարմանալի չէ, որ Երեմիայի խոսքերը բացարձակապես չէին ողջունվում:

Ո՞ր միտքն է առավել կարևոր Երեմիա 27.5-ի լուրի մեջ: (Տե՛ս նաև Դանիել 4.25-ը): _____

_____

_____

Այստեղ, ինչպես և Հին և Նոր Կտակարանների բոլոր գրքերում, բովանդակվում է ճշմարտություն այն մասին, որ Աստված՝ որպես Արարիչ, իշխում է ողջ երկրին: Անգամ քաոսի և աղետի պայմաններում (հեթանոսական ժողովրդի ներխուժումը և իշխանությունը) Աստծո զորությունն ու իշխանությունը պետք է հավատարիմ մնացորդի համար մնան որպես հույսի աղբյուր:

Մի բան է գտնվել ստրկության լծի ներքո, մեկ այլ բան է այն ինչ-որ մեկի վրա դնելը: Հարցրե՛ք ինքներդ ձեզ, թե դուք լուծ չե՞ք դրել որևէ մեկի վրա: Եթե պատասխանը դրական է, ջանացե՛ք այդ մարդուն ազատել ձեր լծից:

Երեքշաբթի **նոյեմբերի 2**

Մարգարեների պատերազմը

Վատ լուրերը մնում են վատ լուրեր և մենք հաճախ չենք ցանկանում լսել դրանք կամ էլ չենք ուզում մտորել դրանց մասին: Այդպիսին էր նաև իրավիճակը Հուդայում. Երեմիան և լուծը, որ նա կրում էր, որպես նախազգուշացում էին ծառայում մարդկանց համար: «Դեսպաններն անսահման զարմանք ապրեցին, երբ Երեմիան՝ լուծը պարանոցին, նրանց հայտնեց Աստծո կամքը» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 444):

Կարդացե՛ք Երեմիա 28.1-9-ը: Պատկերացրե՛ք, թե դուք հրեա եք, կանգնած եք և դիտում եք, թե ինչ է տեղի ունենում: Դուք ո՞ւմ կհավատայիք: Դուք ո՞ւմ *կցանկանայիք* հավատալ: Ի՞նչ պատճառներ կդրդեն ձեզ, եթե այդպիսիք գոյություն ունեն, հավատալ Անանիային, ոչ թե Երեմիային:

_____

_____

_____

_____

Երեմիան իր ձայնը բարձրացրել էր Աստծո անունից, և Անանիան նույնպես խոսում էր Աստծո անունից: Բայց ո՞վ էր իրականում խոսում Աստծո կողմից: Նրանք երկուսն էլ չէին կարող ճիշտ լինել: Մեզ համար այսօր պատասխանն ակներև է: Այն ժամանակ որևէ մեկի համար դա կարող էր առավել դժվար խնդիր լինել, թեև Երեմիան 8-րդ և 9-րդ համարներում առանձնահատուկ շեշտադրում է, որ անցյալի մարգարեները քարոզել են դատաստանի ու կործանման մասին նույն լուրը:

«Քահանաների և ժողովրդի ներկայությամբ Երեմիան ի սրտե աղերսում էր հնազանդվել Բաբելոնի թագավորին, նախքան Աստծո որոշած ժամանակը վրա կհասնի: Նա Հուդայի այրերի ուշադրությունը հրավիրում էր Ովսեի, Ամբակումի, Սոփոնիայի և մյուս մարգարեների մարգարեությունների վրա, որոնց հանդիմանություններն ու նախազգուշացումները նման էին իր լուրին: Նա հիմնվում էր չապաշխարելու համար հատուցման մասին մարգարեությունների իրականացումը հանդիսացած իրադարձությունների վրա: «Այն մարգարեն, որ խաղաղություն է մարգարեանում, երբ որ այն մարգարեի խոսքը կատարվի, այն ժամանակ ճանաչվում է այն մարգարեն, թե ճշմարտապես Տերն է ուղարկել նրան» (համար 9)» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 445):

Կարճ ասած, այնպես, ինչպես մենք այսօր պետք է դասեր քաղենք սրբազան պատմությունից, Երեմիան էլ իր ժամանակակիցներին էր դրդում նույն կերպ վարվել. *սովորել իրենց նախորդների սխալներից՝ ապագայում նման սխալներ թույլ չտալու համար:* Եթե նրանց համար դժվար էր ավելի վաղ ընդունել նրա լուրը, ապա հիմա՝ Անանիայի «ծառայության» պատճառով, ով ընդդիմացավ Երեմիային, մարգարեի խնդիրը գրեթե անլուծելի դարձավ:

Անանիան, ում անունը նշանակում է «Աստված ողորմած է», թվում է, շնորհի, ներման ու փրկության լուր էր քարոզում: Մենք ի՞նչ դասեր պետք է քաղենք շնորհի այդ կեղծ մարգարեի կյանքից:

Չորեքշաբթի **նոյեմբերի 25**

Երկաթե լուծը

Մարգարեների միջև ճակատամարտը չէր սահմանափակվում միայն խոսքերով: Հնազանդվելով Աստծո կամքին՝ Երեմիան փայտե

լուծ էր դրել իր պարանոցին, ինչը խորհրդանշական կերպով ներկայացնում էր այն լուրը, որ նա տանում էր մարդկանց:

Որո՞նք էին Անանիայի գործողությունների մարգարեական խորհրդանիշները: Երեմիա 28.10,11: _____

_____

_____

_____

Պատկերացրե՛ք, օրինակ, որ Հիսուսի կողմից թզենին անիծելուց հետո (Մարկոս 11.13,19-21) Հիսուսի խոսքերը լսողներից որևէ մեկը նոր թզենի է տնկում այն նույն տեղում՝ ջանալով դրանով հերքել Քրիստոսի մարգարեությունը: Հենց այդպես վարվեց Անանիա մարգարեն Երեմիայի և նրա մարգարեության հանդեպ, որը խորհրդանշորեն ներկայացված էր պարանոցին դրված լծով: Սա բացահայտ անհնազանդության գործողություն էր Երեմիայի ասած խոսքերին: Ուշադրությո՛ւն դարձրեք նաև Երեմիայի արձագանքին: Սուրբ Գիրքը չի ասում, թե ինչ նա արեց կամ ասաց այն բանից հետո, երբ ջարդվեց փայտյա լուծը: Նա պարզապես հետ դարձավ և հեռացավ: Եթե պատմությունն ավարտվեր այդ գործողությամբ, կարող էր թվալ, թե մարգարեն պարտություն կրեց:

Կարդացե՛ք Երեմիա 23.12-14-ը: Ի՞նչ տեղի ունեցավ հետո: Ո՞րն էր Երեմիայի նոր լուրը: _____

_____

_____

_____

Երեմիայի պատասխանը վրեժ չէր. *դու ինձ հետ այսպես վարվեցիր, իսկ ես քեզ այնպես կանեմ:* Ընդհակառակը, դա ևս մի նախազգուշացում էր Տիրոջից, բայց առավել լուրջ: Կարելի է ջարդել փայտե լուծը, բայց ո՞վ կարող է ջարդել երկաթե լուծը: Ինչ-որ իմաստով Տերը ասաց նրանց, որ իրենց համառությամբ և անհնազանդությամբ նրանք միայն վնասեցին իրենք իրենց: Եթե դուք կարծում էիք, որ փայտե լուծը վատ է, փորձե՛ք կրել երկաթե լուծը:

Հավանաբար, չկա այնպիսի մարդ, ով սեփական փորձով զգացած չլինի, որ անզիջում լինելը միայն է՛լ ավելի մեծ խնդիրներ կառաջացնի ապագայում: Եթե խոսքը վերաբերում է Տիրոջ հետ փոխհարաբերություններին, ինչո՞ւ է ավելի լավ զիջել և հնազանդվել Նրան, քան շարունակել պայքարը և բարդացնել իրավիճակը:

Վստահելով ստին

«Լսի՛ր, Անանիա՛. Տերը քեզ չի ուղարկել, և դու սուտի հուսացրիր այս ժողովրդին» (Երեմիա 28.15):

Բավականաչափ արա՞գ ստացվեց հարցի պատասխանը, թե ով է իրավացի՝ Երեմիա՞ն, թե՞ Անանիան: Երեմիա 28.16,17-ը խոսում է կեղծ մարգարեի ճակատագրի մասին, որ կարող էր կանխագուշակել միայն ճշմարիտ մարգարեն:

Թեև Անանիան մահացավ, սակայն նրա մարգարեությունները շարունակում էին վնաս հասցնել ճշմարտությանը: Նրա աշխատանքները, որոշ իմաստով, հետևում էին նրան: Նա մարդկանց ստիպեց «հավատալ ստին»: Եբրայերեն *հիֆիլ* (hiphil) բայը «վստահել» բայի պատճառահետևանքային ձևն է: Նա նրանց ստիպեց հավատալ ստին՝ ոչ թե ուժի, այլ խաբեության օգնությամբ: Չնայած այն բանին, որ Տերը չէր ուղարկել նրան, նա խոսում էր Տիրոջ անունից, ինչը նրա խոսքերը ծանրակշիռ էր դարձնում հրեաների աչքերում: Սրան պետք է գումարել Անանիայի խոսքերը «շնորհի», «ազատագրման» և «փրկության» մասին, և արդեն պարզ է դառնում, թե ինչու էին մարդիկ ցանկանում լսել կեղծ մարգարեի լուրը՝ հաշվի առնելով Բաբելոնի կողմից եղած սպառնալիքը: Սակայն այդ «Ավետարանը» սուտ էր. այն կեղծ լուր էր փրկության մասին, որ Տերը չէր հռչակել: Այդպիսով, Երեմիայի խոսքերին և նրա քարոզած փրկության լուրին ականջ դնելու փոխարեն՝ նրանք լսում էին Անանիային՝ դրանով իսկ բարդացնելով իրենց վիճակը:

Ստորև բերված տեքստերում ի՞նչ ընդհանուր բան կա Երեմիա 28.15-ի հետ:

Բ Տիմոթեոս 4.3,4 _____

_____

Բ Թեսաղոնիկեցիս 2.10-12 _____

_____

Իրավիճակը ոչնչով չէր տարբերվում այսօրվա վիճակից. մենք գտնվում ենք մեծ պայքարի՝ աշխարհի միլիարդավոր մարդկանց սրտերի և մտքերի համար մղվող պայքարի էպիկենտրոնում: Սատանան ջանադրաբար աշխատում է, որպեսզի հնարավորինս շատ մարդկանց ստիպի հավատալ կեղծիքին: Ու թեև սուտը կարող է բազում ձևեր և կերպարանքներ ընդունել, այն, միևնույնն է, մնում

է սուտ: Ավելին, քանի որ Հիսուսն ասել է. «Ես եմ Ճանապարհը և Ճշմարտությունը և Կյանքը» (Հովհաննես 14.6), սատանայի կեղծիքը կարող է լինել ինչ ասես, միայն թե ոչ ճշմարտություն, ինչպես որ այն կա Հիսուսի մեջ:

Այսօր խաբեության ի՞նչ տեսակներ են տարածված մեր մշակույթում: Ինչո՞ւ Հիսուսին հետևելը և Նրա Խոսքի ուսումնասիրությունը միակ պաշտպանությունն են կեղծիքից:

Ուրբաթ **նոյեմբերի 27**

Հետագա ուսումնասիրության համար

Ինչպես նկատեցինք, մարդիկ ցանկանում են հավատալ լավին, ոչ թե վատին: Նրանք պատրաստ էին հավատալ, օրինակ, Անանիային, և ոչ թե Երեմիային: Նման բան տեղի է ունենում նաև մեր օրերում: Շատերը մինչև հիմա պնդում են, թե ժամանակի ընթացքում մեր աշխարհը միայն բարելավվելու է: Սակայն անգամ այնպիսի մի աթեիստ, ինչպիսին Թերրի Իգլթոնն է, նշում է այս մտքի անհեթեթ լինելը. «Եթե երբևէ գոյություն ունեցել է նման բարեպաշտ առասպել և դյուրահավատ սնապաշտություն, այն է՝ լիբերալ-ռացիոնալիստական համոզմունք, որ մենք բոլորս մշտապես շարժվում ենք դեպի կատարյալ աշխարհ, ապա այդ փխրուն ցնծությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ազատականության հերոսական մնացուկ, երբ միջին մակարդակի աստղը բարձունքում էր: Այսօր այդ համոզմունքը կողք կողքի քայլում է ցինիզմի, սկեպտիզմի (թերահավատության) և նիհիլիզմի (ժխտողականության) հետ, և այդ հարգարժան ազգաբանության մեծ մասը վերածնվել է» (Բանականությունը, հավատը և հեղափոխությունը. մտորումներ աստվածային բանավեճի մասին, «Քինդլ» հրատարակչություն, 70): Թեև կյանքի որոշ տեսանկյուններ բարելավվել են, մեր աշխարհն ինքնին մեզ քիչ հույս է տալիս, քիչ մխիթարություն, հատկապես երկարաժամկետ հեռանկարում: Եթե մենք ցանկանում ենք ունենալ ցանկացած իրական հույս, այն պետք է երկնային, գերբնական լինի, և ոչ թե երկրային ծագման: Անկասկած, միայն Ավետարանն է պատմում այդ մասին՝ Տիրոջ աստվածային և գերբնական միջամտության մասին մեր աշխարհում և մեր կյանքում: Առանց դրա մենք չունենք ոչինչ ավելի Անանիայի և նրա նմանների ստից:

Հարցեր քննարկման համար

1. Խորհեցե՛ք առհասարակ մեր երկրի ապագայի մասին՝ անգամ զուտ մարդկային տեսակետից: Այն հուսադրող և բազմախոստո՞ւմ է թվում, թե՞ սարսափելի, վտանգավոր և լի անորոշությամբ: Դուք ինչպե՞ս կհիմնավորեք ձեր պատասխանը:
2. Երեմիայի լուրը ունկնդիրների ուշադրությունը հրավիրում էր անցյալին ու պատմությանը և նրանց դրդում էր սովորել իրենց նախորդների սխալներից: Էլեն Ուայթը այսպես է ձևակերպել այդ միտքը. «Մենք չպետք է վախենանք ապագայից, եթե չմոռանանք այն ճանապարհը, որով Տերը տարել է մեզ, և Նրա սովորեցրածը անցյալում» (Կյանքի ակնարկներ, 196): Նա ի՞նչ նկատի ուներ: Անցյալի ո՞ր իրադարձությունները կարող են օգնել մեզ՝ նախապատրաստվելու գալիք իրադարձություններին:

ԴԱՍ 10

ՆՈՅԵՄԲԵՐԻ 28 - ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՎԵՐՈՒՄԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եզեկիել 8, Հռոմեացիս 1.22-25, Երեմիա 37.1-10, 38.1-6, Երեմիա 29.1-14, Դանիել 9.2:

Հիշելու համարը.

«Եվ այն քաղաքի խաղաղությունն ուզեցեք, ուր որ ես ձեզ գերի եմ տանել տվել և աղոթք արեք նրա համար Տիրոջը, որ Նրա խաղաղությունով ձեզ խաղաղություն կլինի» (Երեմիա 29.7):

«Մի քանի կարճ տարի անց բաբելոնյան թագավորը Աստծո ցասման գործիքը կդառնա՝ չապաշխարած հրեա ժողովրդին պատժելու համար: Մեկ անգամ չէ, որ Նաբուգոդոնոսորի զորքերը կհարձակվեն Երուսաղեմի վրա և կպաշարեն այն: Խումբ խմբի հետևից, սկզբում քչերը, հետո հազարավոր և տասնյակ հազարավոր իսրայելացիներ գերի կտարվեն Սենաարի երկիրը՝ աքսորի վայրը: Յովակիմը, Հեքոնիան, Սեդեկիան՝ Յուդայի այս բոլոր թագավորները իրենց ժամանակին կենթարկվեն Բաբելոնի թագավորին, և նրանցից յուրաքանչյուրը հետագայում կապստամբի նվաճողի դեմ: Դաժան պատիժները մեկը մյուսի հետևից բաժին կհասնեն անհնազանդ ժողովրդին, մինչև որ, ի վերջո, ողջ երկիրն ամայանա: Երուսաղեմը կավերեն ու կրակի ճարակ կդարձնեն: Սողոմոնի կառուցած տաճարը կավերեն, և Յուդայի թագավորությունը կընկնի, որպեսզի այլևս երբեք նախկին դիրքը չզբաղեցնի ազգերի մեջ» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 422, 423):

Ինչպես մենք արդեն տեսանք և կտեսնենք, նախքան փորձությունները կթափվեին ժողովրդի վրա, Տերը բազում նախազգուշացումներ և լուրեր ուղարկեց մարգարեների, հատկապես Երեմիայի միջոցով: Հնազանդվելուց խուսափելը միայն ավերում բերեց: Մենք ի՞նչ կարող ենք սովորել նրանց սխալների վրա:

Ողբ Թամուզի համար

Թեև Երեմիան, հնարավոր է, իրեն շատ հաճախ միայնակ էր զգում, իրականում նա միայնակ չէր: Աստված կանչել էր Եզեկիելին՝ Երեմիայի ժամանակակցին, որպեսզի հանգստացնի ու նախազգուշացնի աքսորյալներին, ինչպես նաև հաստատի այն բոլոր խոսքերը, որ Տերը Երեմիայի միջոցով խոսում էր այս բոլոր երկար ու դժվար տարիների ընթացքում: Իր ծառայությամբ Եզեկիելը պետք է նախազգուշացներ գերիներին՝ ժամանակից շուտ Բաբելոնից վերադառնալու վերաբերյալ՝ սուտ մարգարեությունների անմիտ լինելու մասին: Նա նաև տարբեր խորհրդանիշների և լուրերի օգնությամբ կանխագուշակեց Երուսաղեմի կործանարար պաշարումը, քանի որ մարդիկ հրաժարվում էին ապաշխարել և դարձի գալ իրենց մեղքից ու ուրացությունից:

Կարդացե՛ք Եզեկիել մարգարեի գրքի 8-րդ գլուխը: Ի՞նչ էր ցույց տրվել մարգարեին: Սա մեզ ի՞նչ է ասում այն մշակույթի ուժեղ ազդեցության մասին, որը կարող է ազդել անգամ սրբազան բաների վրա: Մեզ համար ի՞նչ նախազգուշացում կա այստեղ: _____

_____

_____

_____

Անկախ այն բանից, թե Մովսեսն իր Հնգամատյանում և մարգարեներն իրենց մարգարեություններում որքան հաճախակի ու հստակորեն էին նախազգուշացնում կռապաշտությունից և այլ աստվածների երկրպագելուց, վերը բերված համարները ցույց են տալիս, որ դա տեղի է ունենում անգամ տաճարի սրբազան պատերի ներսում: «Թամուզի համար լաց լինելը» իրենից կրոնական ողբ էր ներկայացնում Միջագետքի աստվածության համար: Զարմանալի չէ, որ Բ Մնացորդաց 36.14-ում ասված է. «Քահանաների բոլոր իշխաններն ու ժողովուրդն էլ խիստ շատ անօրենություններ արին ուրիշ ազգերի բոլոր գարշությունների պես և պղծեցին Տիրոջ տունը, որ նա սրբել էր Երուսաղեմում»:

Ուշադի՛ր կարդացե՛ք Եզեկիել 8.12-ը: «Նկարների սենյակ» թարգմանությունը որոշ չափով միանշանակ չէ: Դա կարող է նշանակել և՛ այն սենյակները, որտեղ պահվում էին նրանց կուռքերը, և՛ նրանց սե-

փական երևակայության, իրենց սրտի սենյակները: Բոլոր դեպքերում, ծերերը՝ ազգի ղեկավարները, այնքան էին իջել, որ համարում էին, թե Տերը չի տեսնում իրենց գործողությունները և լքել է իրենց: Սա ևս մի եղանակ է՝ ասելու. «Տերը հոգ չի տանում այս մասին, նշանակում է՝ սա կարևոր չէ»: Հենց այնտեղ՝ Աստծո տաճարի սրբազան պատերի ներսում, մարդիկ զբաղվում էին աղաղակող կռապաշտությամբ՝ կատարելով այն ամենը, ինչ խստագույնս արգելված էր Տիրոջ կողմից: Անգամ ավելի վատ. նրանք իրենց մտքում արդարացնում էին իրենց արարքները: Այստեղ մենք կրկին տեսնում ենք, թե ինչ նկատի ուներ Պողոսը, երբ խոսում էր նրանց մասին, ովքեր արարվածին երկրպագում էին Արարչի փոխարեն (տե՛ս Հռոմեացիս 1.22-25):

Երկուշաբթի **նոյեմբերի 30**

Սեդեկիա թագավորի փխուր թագավորությունը

Սեդեկիան, ում անունը նշանակում է «Տիրոջ արդարություն», վերջին թագավորն էր Հուդայի գահին՝ մինչև բաբելոնացիների կողմից նրա ավերումը՝ ՔԱ 586 թվականը: Նախ, թվում է, թե նա պատրաստ էր հնազանդվելու Երեմիայի խոսքերին և ենթարկվելու բաբելոնացիներին: Սակայն դա երկար չտևեց:

Կարդացե՛ք Երեմիա 37.1-10-ը: Ո՞րն էր Երեմիայի նախազգուշացումը Սեդեկիա թագավորին: _____

_____

_____

Իր հպատակների, ավելի շուտ՝ ազնվականների ճնշման ներքո Սեդեկիան անտեսեց Երեմիայի նախազգուշացումները և ռազմական դաշն կնքեց եգիպտացիների հետ՝ հուսալով կանխել բաբելոնյան գերության սպառնալիքը (տե՛ս Եզեկիել 17.15-18-ը): Բայց չէ՞ որ նա ժամանակին նախազգուշացվել էր, որ փրկությունը վերջիվերջո գալու է ոչ եգիպտացիների կողմից:

Կարդացե՛ք Երեմիա 38.1-6-ը: Կրկին ի՞նչ պատահեց Երեմիային՝ Աստծո Խոսքը նորից մարդկանց հռչակելու պատճառով: _____

_____

_____

«Մի մարգարե անարգ չէ, բայց միայն իր հայրենիքի և իր ազգականների և իր տան մեջ» (Մարկոս 6.4): Խեղճ Երեմիան կրկին

իր վրա զգաց իր հայրենակիցների ցասումը: Նա նախազգուշացվել էր Աստծո կողմից, որ ինքը բախվելու է փորձությունների, եթե հավատարիմ մնա, ինչը և տեղի ունեցավ: Որքա՜ն դժվար էր Երեմիայի համար, չէ՞ որ նա մեղադրվեց այն բանում, որ ընկճում է ժողովրդի ոգին: Երբ մարդիկ բախվում են արտաքին թշնամուն, նրանք սկսում են թշնամիներ փնտրել ներսում, իսկ Երեմիան արդեն երկար տարիներ շարունակ հռչակում էր, որ իրենց գործը անհույս է, և ժողովուրդը, միևնույնն է, հայտնվելու է ստրկության մեջ, որովհետև Տերն Ինքն է մարտնչում նրանց դեմ. հասկանալի է, որ նրանց ցանկությունը մարգարեին ստիպելն էր, որ լռի: Մեղքով խստացնելով իրենց սրտերը՝ նրանք չէին լսում Տիրոջ ձայնը, Ով դիմում էր իրենց, ավելին՝ նրանք մտածում էին, որ դա թշնամու ձայնն է:

Որքան էլ Երեմիայի համար դժվար լիներ փոսում գտնվելը, խորհեցե՛ք այն մասին, թե որքան առավել ծանր էր նրա համար՝ լսել մեղադրանքներ, որ ինքը չարիք, և ոչ թե բարիք էր ցանկանում իր ժողովրդին: Դա ի՞նչ զգացողություն է՝ մեղադրվել այն մարդկանց չարիք պատճառելու մեջ, ում դուք ձգտում եք աջակցել:

Երեքշաբթի դեկտեմբերի 1

Երուսաղեմի անկումը

Երուսաղեմի պաշարումն սկսվեց ՔԱ 588 թվականի հունվարին և շարունակվեց մինչև ՔԱ 586 թվականի ավարտը: Երուսաղեմը կարողացավ դիմանալ երկու տարուց ավելի, նախքան կատարվեցին Երեմիայի մարգարեական խոսքերը, և բաբելոնյան զորքերը մուտք գործեցին քաղաք: Քաղցն այնքան զորեղ էր, որ պաշտպանները կորցրել էին բոլոր ուժերը և այլևս չէին կարող դիմադրել: Սեդեկիա թագավորը փախավ ընտանիքի հետ, բայց իզուր: Նա գերեվարվեց և տարվեց Նաբուգոդոնոսորի մոտ, ով նրա որդիներին սպանեց նրա աչքի առաջ: Մենք այդ տխուր պատմության մեծ մասը կարող ենք կարդալ Երեմիայի գրքի 39.1-10-ում:

Կարդացե՛ք Երեմիա 40.1-6-ը: Նաբուզարդանի ասած խոսքերի մեջ ի՞նչն է հատկանշական Երեմիային: _____

_____

_____

_____

Հատկանշական է, որ անգամ հեթանոս զորահրամանատարը իրավիճակը հասկանում էր շատ ավելի լավ, քան Երեմիայի ժողովուրդը: Ակնհայտ է, որ բաբելոնացիներն ինչ-որ բան գիտեին Երեմիայի և նրա ծառայության մասին, և նրանք նրան այլ կերպ էին վերաբերվում, քան մյուս հրեաներին, օրինակ՝ Սեդեկիային (տե՛ս Երեմիա 39.11,12-ը): Սակայն Սուրբ Գիրքը լռում է այն մասին, թե ինչու այդ հեթանոս հրամանատարը Երուսաղեմի կործանումը գնահատեց որպես մարդկանց մեղքերի համար պատժի արդյունք, և ոչ թե որպես բաբելոնյան աստվածների գերազանցություն հրեական Աստծո հանդեպ: Անկախ պատճառից՝ դա ապշեցուցիչ վկայություն է այն բանի, որ անգամ այդպիսի ծանր աղետի պայմաններում Տերն Իրեն բացահայտում էր հեթանոսներին:

Ի՞նչ ընտրություն կանի Երեմիան. գերիների հետ կգնա Բաբելո՞ն, թե՞ կմնա Հուդայում: Հեռանկարներից ոչ մեկն առանձնապես հրապուրիչ չէր՝ հաշվի առնելով բարդ հանգամանքները բոլորի համար: Թեև երկու խմբերի հոգևոր պահանջմունքներն էլ մեծ էին, Երեմիան ծառայությունն իրականացնում էր այնտեղ, որտեղ մնաց: Նա որոշեց բնակություն հաստատել նրանց մեջ, ովքեր մնացին երկրում, աղքատ մարդկանց մեջ, ովքեր, անկասկած, նրա աջակցության և օգնության կարիքն ունեին (տե՛ս Երեմիա 40.6,7-ը):

Ինչպե՞ս կարելի է սովորել ծառայել ուրիշներին՝ անկախ ստեղծված իրավիճակից: Ինչո՞ւ է կարևոր հենց քեզ համար՝ ծառայելն այնտեղ, որտեղ դա հնարավոր է:

Չորեքշաբթի դեկտեմբերի 2

Ձեր բոլոր սրտով

«Եվ դուք ինձ կորոնեք և կգտնեք, որովհետև ինձ կխնդրեք ձեր բոլոր սրտով» (Երեմիա 29.13): Դուք ինչպե՞ս եք սեփական փորձով վստահել այս խոստման արդարացի լինելուն: Ի՞նչ է նշանակում «ձեր ամբողջ սրտով»: _____

_____

_____

Տերը վերջը գիտի սկզբից: Անգամ այն ժամանակ, երբ Երուսաղեմի ժողովուրդը շարունակում էր ճակատամարտել բաբելոնացիների դեմ՝ դեռևս հուսալով, թե կեղծ մարգարեների խոսքերը ճշմարտություն էին, Տերը Երեմիային դրդեց խոսել ապագայի մասին, ասել նրանց,

ովքեր արդեն Բաբելոնում էին, և նրանց, ովքեր վերջին հաշվով կհայտնվեն այնտեղ: Ի՞նչ խոսքեր էր նա ասում:

Կարդացե՛ք Երեմիա 29.1-14-ը: Աստծո սերն ու ողորմությունն ինչպե՞ս բացվեցին այդ համարներում: _____

_____

_____

Այստեղ բովանդակվում է շնորհի իսկական իմաստը՝ ի տարբերություն «շնորհի» մասին կեղծ հայտարարության, որ մարդիկ լսում էին սուտ մարգարեներից, ովքեր կարճատև (երկամյա) աքսոր էին գուշակում: Նրանք պետք է հասկանային, որ դա չի մտնում Աստծո ծրագրերի մեջ, ուստի դա տեղի չի ունենա: Նրանք գիտեին Թորան և պետք է հասկանային, որ այդպիսին է իրենց ճակատագիրը, գոնե հիմա. բայց, ինչպես ասաց Մովսեսը, եթե նրանք ապաշխարեն, կվերադառնան իրենց երկիրը:

Կարդացե՛ք Երկրորդ Օրինաց 30.1-4-ը: Այս տեքստերն ինչպե՞ս են արտացոլում այն, ինչ ժողովրդին ասաց Երեմիան: (Տե՛ս նաև Երկրորդ Օրինաց 4.29-ը): _____

_____

_____

_____

Մեզ մարգարեական պարգև է շնորհված՝ ի դեմս Էլեն Ուայթի հիանալի ծառայության: Մենք ինչպե՞ս կարող ենք հավաստիանալ, որ այսօր նույնպիսի վերաբերմունք չենք դրսևորի նրա աշխատությունների հանդեպ, ինչպես Երեմիայի ժամանակակիցներից շատերը (բայց ոչ բոլորը)՝ նրա խոսքերի հանդեպ:

Հինգշաբթի դեկտեմբերի 3

Յոթանասուն տարին

Երեմիայի մարգարեությունները դրդեցին գերիներին՝ մի կողմից չհավատալ կեղծ մարգարեների խոսքերին, մյուս կողմից՝ ընկճված չզգալ իրենց: Նա իր գերյալ հայրենակիցներին խնդրում էր աղոթել Բաբելոնի համար: Այս խնդրանքը, հնարավոր է, տարօրինակ էր թվում նրանց, ովքեր աքսորվել էին: Նման բան Իսրայելի պատմության մեջ չէր եղել: Աղոթել թշնամու համար, ով վարվել էր այնպես, ինչպես Աստծո ընտրյալ ժողովրդի հետ վարվել էին բաբելոնացիներ-

րը, ընդունված չէր: Մարգարեն փոխեց նրանց տեսակետները տաճարի եզակիության և Երուսաղեմի՝ որպես աղոթքի վայրի մասին: Այժմ նրանք կարող էին աղոթել հեթանոսական երկրում, և հավիտենական Աստվածը կլսի նրանց:

Ուշադրությո՛ւն դարձրեք նաև մարգարեի խոսքերին Երեմիա 29.7-ում՝ այն մասին, որ այն երկրի բարգավաճումը, ուր նրանք աքսորվել էին, նպաստելու է նաև իրենց բարգավաճմանը: Որպես աքսորյալներ՝ նրանք հատկապես խոցելի էին, եթե ողջ երկրում գործերը վատ լինեին: Ողջ պատմության ընթացքում մենք մեկ անգամ չէ, որ անհանդուրժողականության տխուր օրինակներ ենք տեսել: Երբ երկրում դժվար ժամանակներ են վրա հասնում, մարդիկ քավության նոխազներ են որոնում՝ հանձինս նրանց, ում իրենք կարող են մեղադրել, և ազգային փոքրամասնությունները կամ օտարերկրացիները հաճախ հեշտ թիրախ են դառնում: Սա ցավալի իրականություն է:

Բոլոր աքսորյալների համար ի՞նչ հիասքանչ հույս է բովանդակվում Երեմիա 29.10-ում: (Տե՛ս նաև Երեմիա 25.11,12, Բ Մնացորդաց 36.21, Դանիել 9.2): _____

_____

_____

Այն ամենը, ինչ ասել էր Աստված, նույն ձևով էլ տեղի ունեցավ: Ճիշտ այդպես էլ բոլոր հիմքերը կային հավատալու, որ Նա կկատարի և այս մարգարեությունը (Երեմիա 29.10): Ինչո՞ւ էր 70 տարի որոշված աքսորի համար՝ մենք հստակ չգիտենք, թեև դա, ամենայն հավանականությամբ, կապված էր երկրի համար յոթերորդ տարվա հանգստի գաղափարի հետ (տե՛ս Ղևտացոց 25.4, 26.34,43): Այս մարգարեության մեջ գլխավորը հետևյալն է. եթե նրանք հավատով և հնազանդությամբ ընդունեին այն, գերիները մեծ հույս և վստահություն ձեռք կբերեին Տիրոջ լիակատար իշխանության վերաբերյալ: Չնայած արտաքին երևույթին, չնայած այն սոսկալի աղետին, որ բաժին էր հասել իրենց՝ նրանք կարող էին վստահ լինել, որ դեռ ամեն ինչ կորած չէ, և Տերը չի լքել իրենց: Նրանք առաջվա նման մնում էին ուխտի ժողովուրդը, և Տերը նրանց հետ էր: Փրկությունն առաջարկվել էր բոլորին, ովքեր պատրաստ էին կատարել պայմանները:

Ո՞ր մարգարեություններն են ձեզ ամենից շատ հույս պարգևում ապագայի համար: Դրանցից որո՞նք են ամրապնդում ձեր հավատը և օգնում՝ բոլոր պարագաներում վստահել Տիրոջը:

Ուրբաթ **դեկտեմբերի 4**

Հետագա ուսումնասիրության համար

«Մեզ մշտապես սպառնում է Ավետարանի պարզությունից վեր բարձրանալու վտանգը: Ծատերին փոթորկում է աշխարհն ինչ-որ յուրօրինակ բանով ապշեցնելու ուժգին ցանկությունը, ինչը մարդկանց կնետի հոգևոր էքստազի՝ զգայացուց իրավիճակների մեջ և կփոխի իրերի ստեղծված կարգը: Ներկայումս գոյություն ունեցող կարգը փոխելու իսկապես մեծ կարիք կա, քանի որ մարդիկ հարկ եղած չափով չեն գիտակցում ներկա ժամանակի ճշմարտությունը, բայց փոփոխությունը, որի կարիքը մենք ունենք, սրտի փոփոխություն է: Այն կարող է ձեռք բերվել միայն այն դեպքում, եթե յուրաքանչյուրն անհատապես որոնի Աստծուն՝ հանուն Նրա օրհնությունների, աղաչի Նրա զորության մասին, ջերմորեն աղերսի Նրան՝ Նրա շնորհն ստանալու և բնավորության վերափոխման համար: Հենց այսպիսի փոփոխության կարիք ունենք մենք այժմ, և նման հոգևոր փորձառություն ձեռք բերելու համար մեզ հարկավոր է կայունություն և սրտի անկեղծություն դրսևորել: Մեզ հարկավոր է անկեղծորեն հարց տալ ինքներս մեզ. «Ի՞նչ անեմ, որ փրկվեմ»: Մեզ հարկավոր է իմանալ, թե ո՞ր ճանապարհը մեզ կտանի երկինք» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հատոր 1, 187, 188):

Հարցեր քննարկման համար

1. Ինչպես տեսանք, Երեմիան մարդկանց դրդում է որոնել Տիրոջը: Ինչպե՞ս անել դա: Եթե որևէ մեկը հարցնի. «Ես ցանկանում եմ ճանաչել Աստծուն, ինչպե՞ս կարող եմ անել դա, դուք ի՞նչ կպատասխանեք նրան:
2. Վերլուծե՛ք այն փաստը, որ անցյալում մարգարեների ժամանակակիցները, որպես կանոն, վատ են վերաբերվել նրանց ընտանիքներին և սխալ են հասկացել նրանց լուրերը: Դա մեզ ի՞նչ պետք է սովորեցնի Էլեն Ուայթի ծառայության հանդեպ մեր վերաբերմունքի առումով: Այս մասին խորհեցե՛ք Հիսուսի հետևյալ խոսքերի համատեքստում. «Վա՜յ ձեզ, դպիրներ և փարիսեցիներ, կեղծավորներ, որ մարգարեների տապանները շինում եք և արդարների գերեզմանները զարդարում և ասում եք. «Եթե մենք լինեինք մեր հայրերի օրերում, մասնակից չէինք լինի նրանց հետ մարգարեների արյունին» (Մատթեոս 23.29,30):

3. Ուշադրությո՛ւն դարձրեք հինգշաբթի օրվա դասի վերջին հարցին: Շատ աստվածաշնչյան մարգարեություններ կատարվել են անցյալում, և այսօր մենք կարող ենք հավաստիանալ դրանց ճշմարիտ լինելու մեջ: Այս վստահությունն ինչպե՞ս կարող է օգնել մեզ՝ հավատալու այն բանին, որ մյուս մարգարեություններն էլ կկատարվեն ապագայում:

ԴԱՍ 11 ՈՒԽՏԸ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
5-11

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Ծննդոց 9.1-17, 12.1-3, Գաղատացիս 3.6-9,15-18, Ելից 24, Երեմիա 31.31-34, Ա Կորնթացիս 11.24-26:

Հիշելու համարը.
«Ահա օրեր են գալիս, ասում է Տերը, որ Իսրայելի տան հետ և Հուդայի տան հետ պիտի նոր ուխտ կապեմ» (Երեմիա 31.31):

Թեև Աստվածաշունչը «ուխտերի» մասին խոսում է հոգնակի թվով (Հռոմեացիս 9.4, Գաղատացիս 4.24), կա միայն մեկ ուխտ՝ շնորհի ուխտը, որի շրջանակներում Աստված փրկություն է պարգևում բոլորին, ովքեր հավատով ընդունում են այն: Հոգնակի «ուխտի» գաղափարը ծագել է այն պատճառով, որ բավարարի Իր ժողովրդի պահանջմունքները տարբեր ժամանակներում և տարբեր պարագաներում:

Լինի դա Ադամի (Ծննդոց 3.15), Աբրահամի (Ծննդոց 12.1-3, Գաղատացիս 3.6-9), թե Դավթի հետ (Եզեկիել 37.24-27) կնքված ուխտը, Սինայում տրված (Ելից 20.2), թե Նոր ուխտը (Երեմիա 31.31-33)՝ գաղափարը մեկն է: Աստծո պարգևած փրկությունը չվաստակած նվեր է, և մարդկության արձագանքը (պայմանավորվածության իր մասը կատարելու իմաստով) այդ պարգևին կարող է լինել միայն հավատարմությունն ու հնազանդությունը:

Նոր ուխտի մասին առաջին հիշատակումը բովանդակվում է Երեմիա մարգարեի գրքում՝ գերությունից Իսրայելի վերադառնալու և Աստծո օրհնություններն ստանալու համատեքստում: Անգամ պատուհասների և տրտմության պայմաններում Տերը Իր կամակոր ժողովրդին հույս և վերականգնում է առաջարկում:

Միաշաբթի **դեկտեմբերի 6**

Աստծո ուխտը ողջ մարդկության հետ

Տեսե՛ք, թե ինչ ամբարիշտ աշխարհում ենք մենք ապրում, որքան չարիք է շրջապատում մեզ, բայց Աստված, այնուամենայնիվ, համբերում է մեզ: Պատկերացրե՛ք, թե որքան այլասերված էր մինչջրհեղեղյան աշխարհը: «Աստված մարդկանց տվել էր Իր պատվիրանները՝ որպես կյանքի ուղեցույց, բայց նրանք խախտեցին Նրա օրենքը, և դրա արդյունքը դարձան ամեն հնարավոր մեղքերը: Մարդկանց ամբարշտությունը բացահայտ ու հանդուգն էր դարձել, արդարությունը ոտնահարված էր, և հալածվողների աղաղակները հասնում էին երկինք» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 91):

Կարդացե՛ք Ծննդոց 9.1-17-ը: Աստված ի՞նչ ուխտ կնքեց մարդկության հետ, և դրանում ինչպե՞ս արտացոլվեց Նրա շնորհը արարչագործության հանդեպ: _____

_____

_____

Նոյի հետ Աստծո կնքած ուխտը կարելի է համարել ամենահամընդգրկունը աստվածաշնչյան ուխտերի մեջ՝ ներառյալ կենդանական և բուսական աշխարհը (Ծննդոց 9.12): Բացի դրանից, դա միակողմանի պայմանավորվածություն էր. Տերը որևէ պահանջ կամ պայման չի դնում նրանց վրա, ում հետ Նա կնքում է իր ուխտը: Նա պարզապես մտադիր չէր ևս մեկ անգամ ջրով կործանել երկիրը: Ի տարբերություն այլ ուխտերի՝ այս ուխտը ոչ մի պայման չի բովանդակում:

Աստված Իր ուխտը կնքեց տեսանելի նշանով՝ ծիածանով, որը խորհրդանշում է խոստումը, որ երկիրն այլևս երբեք չի ամայանա ջրհեղեղի ջրերով: Այսպիսով, ամեն անգամ, երբ մենք տեսնում ենք ծիածանը, մենք տեսնում ենք այդ հին ուխտի նշանը: Երկրի վրա անընդհատ բազմացող մեղքի և չարիքի մեջ Տերը ժամանակ առ ժամանակ մեզ ուրախություն է պարգևում՝ հիանալ ծիածանի գեղեցկությամբ՝ Իր շնորհի նշանով, որը դրսևորվում է աշխարհի բոլոր մարդկանց հանդեպ: Մենք կարող ենք տեսնել և վայելել այն ոչ միայն արտաքին տեսքի համար, այլ որովհետև դա Աստծո ուղերձն է, Նրա սիրո ուղերձը մեր դժբախտ մոլորակին:

Եկե՛ք դիտենք ծիածանի վսեմությունն ու գեղեցկությունը, հատկապես այն լույսի ներքո, ինչ ասում է Աստվածաշունչը ծիածանի մասին: Ինչպե՞ս կարող է այն հրապուրել

դեպի Աստված, դեպի ինչ-որ ավելի հիասքանչ ու մեծ բան, քան առաջարկում է երկիրը:

Երկուշաբթի դեկտեմբերի 7

Ուխտը Աբրահամի հետ

Կարդացե՛ք Ծննդոց 12.1-3, 15.1-5, 17.1-14-ը: Ի՞նչ է մտադիր կատարելու Տերն Աբրահամի հետ կնքած ուխտի միջոցով: _____

_____

_____

Աբրահամի հետ կնքված շնորհի ուխտը հիմնարար է փրկության պատմության ողջ ընթացքի համար: Ահա թե ինչու է Պողոսն օգտագործում այն՝ բացատրելու համար փրկության ծրագիրը, որ կատարվեց Իր՝ Հիսուսի միջոցով:

Կարդացե՛ք Գաղատացիս 3.6-9,15-18-ը: Ինչպե՞ս է Պողոսն Աբրահամի հետ կնքված ուխտը կապում Հիսուսի և միայն հավատով փրկության հարցի հետ: _____

_____

_____

_____

Աբրահամի սերնդի միջոցով, որին պատկանում են ոչ միայն նրա բազմաթիվ սերունդները, այլև հատկապես Հիսուսը (տե՛ս Գաղատացիս 3.16-ը), Աստված կօրհնի ողջ աշխարհը: Բոլորը, ովքեր Քրիստոսի հանդեպ հավատի միջոցով կդառնան Աբրահամի սերունդները (Գաղատացիս 3.29), կհայտնաբերեն, որ Աբրահամի Աստվածը նաև իրենց Աստվածն է: Անգամ այն ժամանակ Աբրահամը «հավատաց Աստծուն, և այն նրա համար արդարություն համարվեց» (Գաղատացիս 3.6): Աբրահամը փրկությանն արժանի էր ոչ ավելի, քան խաչված ավազակը. միայն Աստծո փրկարար շնորհն է փրկություն բերում: Աբրահամը ուխտի իր մասը կատարեց ոչ թե այն պատճառով, որ նա կատարյալ էր, հակառակը, նա կատարյալ չէր, այլ նրա համար, որ նա հնազանդ էր՝ ցուցաբերելով հավատ, որով կառչեց փրկության խոստմանը: Նրա գործերը չեն արդարացնում նրան. հակառակը, նրա գործերը ցույց են տալիս, որ նա արդեն արդարացված է: Սրանում է ամփոփվում ուխտի էությունը և դրա արտահայտումը հավատի կյանքի մեջ (տե՛ս Հռոմեացիս 4.1-3-ը):

Ավելի՛ շատ խորհեցեք այն մասին, որ դուք փրկության հույս ունեք միայն Հիսուսի արդարության շնորհիվ, Ում դուք ապավինել եք հավատով: Ի՞նչ է՛լ ավելի մեծ հույս և ուրախություն կարելի է գտնել Քրիստոսի զոհի շնորհիվ:

Երեքշաբթի դեկտեմբերի 8

Սինայում կնքված ուխտը

Ինչպե՞ս ուխտ կնքվեց Սինա լեռան վրա Իսրայելի և Աստծո միջև: (Ելից 24): _____

_____

_____

Մովսեսն ու մի քանի ղեկավարներ բարձրացան Սինա լեռը: Ղեկավարների խմբի մեջ մտան Ահարոնն ու նրա որդիներից երկուսը, ովքեր ներկայացնում էին քահանաներին, ինչպես նաև յոթանասուն ծերեր, ղեկավարներ ու դատավորներ, ովքեր ներկայացնում էին ժողովրդին: Մովսեսին ուղեկցողները պետք է մնային որոշակի հեռավորության վրա, իսկ Մովսեսը պիտի բարձրանար լեռը՝ այնտեղ, ուր Աստված շփվում էր նրա հետ:

Ավելի ուշ Մովսեսն իջավ սարից և հաստատեց ողջ ժողովրդի հետ կնքված ուխտը: Նա հռչակեց, որ Աստված խոսել է իր հետ, ինչին ժողովուրդը պատասխանեց հետևյալ խոսքերով. «Եհովայի բոլոր խոսքերը, որ խոսել է, կանենք» (տե՛ս Ելից 24.3):

Իհարկե՛, ինչպես ցույց է տալիս աստվածաշնչյան պատմությունն ու մեր սեփական փորձառությունը, մի բան է խոստանալ հնազանդ լինել, և միանգամայն այլ բան է հավատով վստահել Աստծուն, ով մեզ շնորհ է տալիս՝ կատարելու այն, ինչին մենք կանչված ենք:

Կարդացե՛ք Եբրայեցիս 4.2-ը: Այս համարն ինչպե՞ս է բացատրում Իսրայելի անհաջողությունը: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել խուսափել նման սխալներից: _____

_____

_____

Միայն հավատով և աստվածաշնչյան խոստումներն ընդունելով, որոնք գալիս են հավատի միջոցով, մենք կարող ենք հնազանդություն դրսևորել՝ հնազանդություն, որն արտահայտում է հավատարմություն Աստծո Օրենքին: Հնազանդությունը Օրենքին՝ չէր հակասում Մովսեսի ժամանակների հավիտենական ուխտին, այնպես, ինչպես այսօր

էլ այն չի հակասում դրան: Տարածված սխալ կարծիքները օրենքի և ուխտերի մասին, որոնք, որպես կանոն, ծագում են Պողոս առաքյալի ուղերձների ընթերցանության ժամանակ, բխում են համատեքստին ուշադրություն դարձնելու անընդունակությունից, որտեղ Պողոսը գրում էր իր հուդայամետ ընդդիմախոսներին: Նրանք ցանկանում էին, որ օրենքն ու հնազանդությունը օրենքին կենտրոնական տեղ զբաղեցնեն հավատի մեջ. Պողոսն, ընդհակառակը, ձգտում էր Քրիստոսին և Նրա արդարությունը դարձնել մեր հավատի կենտրոնը:

Որքա՞ն հաճախ եք դուք ասել. «Ամենը, ինչ Տերը հրամայել է, կանեմ», բայց վերջին հաշվով հասկացել եք ձեր անընդունակությունը՝ կատարել խոստացվածը: Այս տխուր իրականությունն ինչպե՞ս է անհամեմատ ավելի արժեքավոր դարձնում շնորհի խոստումը: Մենք ի՞նչ հույս կունենայինք առանց դրա:

Չորեքշաբթի դեկտեմբերի 9

Նոր Ուխտը: Մաս 1

Կարդացե՛ք Երեմիա 31.31-34-ը: Այս տեքստերն ինչի՞ մասին էին խոսում այն ժամանակ, և ինչի՞ մասին են խոսում այսօր: _____

_____

_____

Երեմիան այս խոսքերն ասաց մեծագույն ճգնաժամի ֆոնին, որ ապրում էին մարդիկ բաբելոնյան ներխուժումից առաջ, երբ ժողովրդի գլխին կախված էր լիակատար ոչնչացման սպառնալիքը: Բայց այստեղ էլ, ինչպես և այլ տեղերում, Տերը նրանց հույս է առաջարկում, խոստում, որ սա վերջը չէ, որ նրանք Տիրոջ աչքի առջև բարգավաճելու ևս մեկ հնարավորություն կունենան:

Այսպիսով, «նոր ուխտի» առաջին խոստումը Աստվածաշնչում հանդիպում է՝ բաբելոնյան գերությունից Իսրայելի հնարավոր վերադարձի և այն օրհնությունների համատեքստում, որ Աստված նրանց կտա այդ վերադարձից հետո: Այնպես, ինչպես Սինայում կնքված ուխտի խախտումը (Երեմիա 31.32) հանգեցրեց նրանց արտաքսմանը, այդպես էլ այդ ուխտի վերականգնումը կպահպանի նրանց և նրանց հույս կպարգևի ապագայի համար: Ինչպես Սինայում կնքված ուխտը, նոր ուխտն էլ կլինի անձական, այն կներառի այն նույն Տասնաբա-

նյա օրենքը՝ գրված ոչ միայն քարե տախտակների, այլ նաև մարդկանց սրտերի վրա, որտեղ այն պետք է լիներ հենց սկզբից:

«Այն նույն օրենքը, որ փորագրված էր քարե տախտակների վրա, Սուրբ Հոգով տպված է սրտի տախտակներին: Սեփական արդարության ձգտելու փոխարեն մենք ընդունում ենք Քրիստոսի արդարությունը: Նրա արյունը մաքրում է մեր մեղքերը: Նրա հնազանդությունն ընդունվում է մերի փոխարեն: Այդ ժամանակ Սուրբ Հոգով նորոգված սիրտը բերում է «Հոգու պտուղները»: Քրիստոսի շնորհի միջոցով մենք ապրելու ենք՝ հնազանդ Աստծո Օրենքին, որ գրված է մեր սրտերում: Ունենալով Քրիստոսի Հոգին՝ մենք կվարվենք այնպես, ինչպես Նա էր վարվում» (Է Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 372):

Նոր ուխտի շնորհիվ նրանց մեղքերը կներվեն, նրանք անձամբ կճանաչեն Տիրոջը և Աստծո Օրենքին կհնազանդվեն Սուրբ Հոգու զորության օգնությամբ, որ փրկության աշխատանքն է կատարում նրանց մեջ: Հին Ուխտը ստվերի և խորհրդանիշների մեջ է, նոր ուխտը՝ իրականության, փրկությունը միշտ եղել է հավատով, որն արտացոլում է «Հոգու պտուղները»:

Հինգշաբթի դեկտեմբերի 10

Նոր Ուխտը: Մաս 2

Նոր ուխտի մասին Երեմիայի մարգարեությունը երկակի կիրառություն ունի. նախ՝ դա վերաբերում է Իսրայելի վերադարձին Աստծո մոտ և երկրորդ՝ դա վերաբերում է Հիսուսի ծառայությանը՝ որպես Մեսիա, Ում մահը հաստատեց ուխտը և նպաստեց մարդկանց և Աստծո միջև փոխհարաբերությունների փոփոխությանը: Հենց Նոր ուխտի մեջ ենք մենք ստանում փրկության ծրագրի լիակատար արտացոլումը, որը նախկինում ստվեր և նախատիպ էր (Եբրայեցիս 10.1):

Կարդացե՛ք Ղուկաս 22.20 և Ա Կորնթացիս 11.24-26-ը: Այս տեքստերն ինչպե՞ս են կապված Երեմիայի մարգարեության հետ: _____

_____

_____

Հացը Քրիստոսի կոտրվող մարմնի խորհրդանիշն է, որը Հին Կտակարանում ներկայացված է զատկի գառան զոհաբերությամբ: Խաղողի որթի հյութը Հիսուս Քրիստոսի արյան խորհրդանիշն է, որ թափվել է խաչի վրա, և այդ խորհրդանիշը բացահայտվեց Նոր

Կտարականում: Հիսուսի ծառայությունն սկսվեց ո՛չ Նոր Կտակարանում, այն ընդգրկում է նաև Հին Կտակարանը. այդպես Տիրոջ Ընթրիքի ծեսի մեջ մենք կարող ենք տեսնել այն կապը, որ միավորում է ողջ ծառայությունը, որ Հիսուսը կատարում էր հանուն մարդկության, պատմության ողջ ընթացքում:

Հացն ու հյութը փրկության պատմության ամենահամառոտ շարադրությունն են: Թեև դրանք էլ լոկ խորհրդանիշներ են, բայց դրանց շնորհիվ մենք հասկանում ենք Աստծո անհավատալի աշխատանքը մեզ համար:

Պողոսն օգտագործում է Տիրոջ Ընթրիքի պատկերը, որը մատնացույց է անում ոչ միայն Քրիստոսի մահը, այլ նաև Նրա վերադարձը, առանց որի Նրա մահն իմաստ չէր ունենա: Ի վերջո, ի՞նչ օգուտ կլիներ Քրիստոսի առաջին գալուստն առանց երկրորդի, երբ մենք հարություն կառնենք մեռելներից (Ա Թեսաղոնիկեցիս 4.16, Ա Կորնթացիս 15.12-18): Հիսուսը ցույց տվեց այդ նույն կապը, երբ ասաց. «Միայն ասում եմ ձեզ, թե՝ այսուհետև որթի այս բերքից էլ չեմ խմի, մինչև այն օրը, որ դրան ձեզ հետ նոր կխմեմ իմ Հոր արքայության մեջ» (Մատթեոս 26.29): Անկասկած, Քրիստոսի առաջին գալուստն անխզելիորեն կապված է երկրորդի հետ: Առաջինն իր վերջնական կատարումը կգտնի միայն երկրորդում:

Հաջորդ անգամ, երբ դուք մասնակցեք Տիրոջ ընթրիքին, խորհեցե՛ք Քրիստոսի խոստման մասին՝ չխմել որթի պտղից այնքան ժամանակ, մինչև որ Նա կարողանա այն մեզ հետ միասին խմել Աստծո արքայության մեջ: Դուք ի՞նչ եք զգում այս առումով: Դա ի՞նչ է ասում այն սերտ հարաբերությունների մասին, որ ձգտում է մեզ հետ ունենալ Քրիստոսը:

Ուրբաթ դեկտեմբերի 11

Հետագա ուսումնասիրության համար

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ ծիածանը Աստծո ուխտի նշանն է այն մասին, որ երկիրը չի ոչնչացվի ջրհեղեղի ջրերով: Իհարկե, գիտության շնորհիվ մենք այսօր գիտենք, որ ծիածանն առաջ է գալիս, երբ արևի լույսը բեկվում և արտացոլվում է ջրի կաթիլներում: Լույսը բեկվում է մեկ կաթիլում և արտացոլվում է մյուսում՝ ստեղծելով գույների սպեկտրը: Պոետ Ջոն Քիթսը վախենում էր, որ

գիտությունը «կքանդի ծիածանը», բայց անգամ եթե մենք կարողանայինք կառուցվածքային վերլուծություն կատարել, չափել, կանխագուշակել և որոշել ամեն բանի քանակը, ինչն առնչություն ունի ծիածանի հետ, ընդհուպ մինչև յուրաքանչյուր ֆոտոնի և յուրաքանչյուր քվարկի պարունակությունը, դա մեզ միայն կօգներ հասկանալու բնության օրենքները, որ Աստված օգտագործում է ուխտի ծիածանն ստեղծելու համար: Հնարավոր է՝ մի գեղեցիկ օր գիտությունը ծիածանի մասին իմանա ամեն բան, կարողանա այն վերածել թվերի և բանաձևերի, բայց նա երբեք չի կարողանա բացատրել, թե ինչի համար է Աստված ստեղծել ծիածանը:

Բայց մենք գիտենք, թե ինչպես և ինչի համար: Աստված ամեն բան այնպես է կարգավորել, որ երբ արևի լույսն ու մառախուղը գտնվում են միմյանց հետ որոշակի հարաբերակցության մեջ, լույսը, թափանցելով մառախուղի միջով, բեկվում և արտացոլվում է տարբեր անկյուններով, ինչն ստեղծում է էլեկտրամագնիսական ալիքների շերտեր, որոնք, հասնելով մեր աչքին, ծիածանի պատկեր են ստեղծում: Եվ Աստված արարել է այն («ինչո՞ւ» հարցի պատասխանը), որպեսզի մեզ հիշեցնի Իր ուխտի մասին, որի համաձայն՝ երկիրը չի ոչնչանա ջրհեղեղի պատճառով:

Հարցեր քննարկման համար

1. Աստվածաշնչում բացահայտված ուրիշ ի՞նչ կարևոր ճշմարտություններ չի կարող բացատրել գիտությունը: Մենք կարո՞ղ ենք պնդել, որ մեր իմացած առավել կարևոր ճշմարտությունները բացվել են Իր՝ Աստծո կողմից: Եթե այո, ապա որո՞նք են այդ ճշմարտությունները:
2. Դասարանում քննարկե՛ք հավատի և գործերի արմատական փոխկապվածությունը փրկության ծրագրում: Այսինքն՝ ո՞րն է հավատի դերը, և ո՞րն է գործերի դերը, և ինչպե՞ս են դրանք առնչվում քրիստոնեական հավատի հետ:

ԴԱՍ 12

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
12-18

ՀԵՏ՝ ԴԵՊԻ ԵԳԻՊՏՈՍ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Երեմիա 40.7-16, Երեմիա 41-43, Ելից 16.3, Թվոց 16.13, Երեմիա 44:

Հիշելու համարը.
«Տերը մեր մեջ ճշմարիտ և հավատարիմ վկա լինի, որ անպատճառ կանենք այն ամեն խոսքերի համեմատ, որ քո Տեր Աստվածը կուղարկի քեզ մոտ մեր մասին, այնպես կանենք» (Երեմիա 42.5):

Այս շաբաթվա դասը մեզ մոտեցնում է Երեմիա մարգարեի մասին պատումի ավարտին: Սակայն այդ վերջաբանն այնպիսին չէ, ինչպես լինում է հեքիաթներում. «Եվ նրանք ապրեցին երկար ու երջանիկ»: Ինչ-որ իմաստով այս շաբաթվա ուսումնասիրությունը և անգամ Երեմիա մարգարեի գրքի մի նշանակալի մասը կարելի էր ամփոփել՝ ասելով, որ այստեղ մենք հանդիպում ենք շնորհի սահմանագծին: Այսինքն՝ շնորհը չի կարող փրկել նրանց, ովքեր հրաժարվում են ընդունել այն: Անկախ այն բանից, թե որքան երկար է Տերը դիմել նրանց՝ նրանց առաջարկելով փրկություն, պաշտպանություն, խաղաղություն և բարգավաճում, միայն փոքրաթիվ ու հավատարիմ մնացորդն ընդունեց Աստծո առաջարկը:

Իսկ Երեմիա՞ն: Մարդկային տեսակետից նրա կյանքն ու ծառայությունն անօգուտ էին: «Ողբացող մարգարեն» ողբալու պատճառներ ուներ: Անգամ նրանից հետո, երբ մարգարեի կանխագուշակած իրադարձությունները տեղի ունեցան, ժողովուրդը շարունակում էր մեղանչել՝ հետևելով կռապաշտությանը, բացահայտորեն մարտահրավեր նետելով մարգարեի դեմքին և արհամարհելով իրենց ուղղված Աստծո Խոսքը:

Որքա՜ն զգույշ պետք է լինենք մենք: Շնորհը շնորհ է, որովհետև այն տրվում է առանց վաստակելու, սակայն այն չի տրվում նրանց, ովքեր հրաժարվում են ընդունել այն պայմաններով, որոնցով այն տրվում է:

Միաշաբթի դեկտեմբերի 13

Քաղաքական անիշխանությունը

Կարելի էր ակնկալել, որ քաղաքի ավերումից և բաբելոնացիների կողմից լիակատար ջախջախումից ողջ ժողովուրդը դաս կքաղի: Ցավոք, բոլորը չէ, որ եզրակացություններ արեցին, և ողբերգությունը չավարտվեց:

Կարդացե՛ք Երեմիա 40.7-16-ը: Ի՞նչ լուր (կրկին) տրվեց ժողովրդին: Ո՞րն է «Մնացորդ» բառի իմաստը, որ օգտագործվում է 11-րդ համարում: _____

_____

_____

Չնայած խաղաղության և անգամ հետագա բարգավաճման լուրին (տե՛ս Երեմիա 40.12-ը)՝ բոլորը չէ, որ բավարարվեցին ստատուս-քվոյով:

Կարդացե՛ք Երեմիա 41-ը: Ի՞նչ նոր խնդիրների է բախվում «Մնացորդը» ներկայումս: _____

_____

Թեև սպանության պատճառները նշված չեն, բայց այն փաստը, որ դա արվել էր թագավորական ընտանիքին պատկանող ինչ-որ մեկի կողմից և թագավորի պալատականների օգնությամբ (տե՛ս Երեմիա 41.1-ը), ենթադրում է, որ վերնախավին պատկանող այդ մարդիկ մինչև հիմա համաձայն չէին այն մտքին, որ ընտրյալ ժողովուրդը պետք է հնազանդվի բաբելոնյան տիրակալությանը: Քանի որ Գոդոդիան նշանակված էր բաբելոնյան թագավորի կողմից (տե՛ս Երեմիա 40.5-ը), այդ մարդիկ, հնարավոր է, նրան դավաճան-խամաճիկ էին համարում, ով անհավատարմություն էր դրսևորել ժողովրդի հանդեպ, և, հետևաբար, պետք է մեռներ իր պալատականների հետ միասին:

Այս գլուխն ուսումնասիրելիս մենք տեսնում ենք, որ այժմ այդ մնացորդը հայտնվել էր նոր սպառնալիքի առջև՝ բաբելոնացիներից վախը, ովքեր հնարավոր է, չիմանալով տեղի ունեցածի մանրամասները, կփորձեն վրեժ լուծել Գոդոդիայի և բաբելոնյան զինվորների մահվան համար (տե՛ս Երեմիա 41.3-ը):

Իսմայելի և նրա մարդկանց մեղքը վախ առաջացրեց նրանց մեջ, ովքեր ոչ մի ընդհանուր բան չունեին այդ մեղքերի հետ: Սա մեզ ի՞նչ է ասում այն մասին, որ մեր անհնազանդության պատճառով մենք կարող ենք ցավ և

տառապանք պատճառել ուրիշ մարդկանց, ովքեր ոչ մի ընդհանուր բան չունեն մեր մեղքերի հետ:

Երկուշաբթի դեկտեմբերի 14

Աստծո ղեկավարությունը որոնելիս

Կարդացե՛ք Երեմիա 42-ը: Ի՞նչ համոզիչ լուր է գրի առնված այստեղ բոլոր նրանց համար, ովքեր Աստծո առաջնորդությունն են որոնում աղոթքում: _____

_____

_____

Բաբելոնացիներից զգուշանալով՝ մարդիկ գտնում են Երեմիային և նրան խնդրում են աղոթել Աստծո առաջնորդության մասին: Նրանք, հավանաբար, վերջապես համոզվել էին, որ Երեմիան իսկապես Աստծո մարգարեն է, և որ ամեն բան, ինչ նա ասում է իրենց Աստծո անունից, կատարվում է:

Նրանք նաև խոստացան կատարել այն ամենը, ինչ իրենց կհրամայի Տերը: Թվում է, թե մեր առջև մարդիկ են, ովքեր դաս են քաղել և այժմ ոչ միայն ցանկանում են իմանալ, թե որն է Աստծո կամքը, այլ նաև պատրաստ են կատարելու այն: «Թե բարի, թե չար, մենք պիտի լսենք մեր Տեր Աստծո ձայնին, որի մոտ քեզ ուղարկում ենք, որպեսզի մեզ համար լավ լինի մեր Տեր Աստծո ձայնին լսելով» (Երեմիա 42.6). սա հավատի հզոր հանգանակ է: Տեղի ունեցած ամեն բանից հետո սա միանգամայն ժամանակին քայլ էր:

Ուշադրությո՛ւն դարձրեք զուգահեռին Երեմիայի առավել վաղ լուրերի հետ. *մի՛ վստահեք օտարերկրյա պետություններին: Ապավինեցե՛ք Աստծուն, և Նա ձեզ կտա բարօրություն, և երբ կգա ժամանակը, Նա փրկություն կգործի: Միայն Տերը, և ուրիշ ոչ ոք չի պարգևում փրկությունը: Օտարերկրյա պետությունները չեն օգնել ձեզ և այժմ էլ չեն օգնելու:*

Աստված պետք է նախագուշացներ նրանց, որովհետև Նա գիտեր նրանց սրտերի մտադրությունները. Նա գիտեր, որ նրանք մտածում են Եգիպտոս վերադառնալու մասին (ուշադրությո՛ւն դարձրեք խորհրդանիշներին, որ օգտագործվում են այստեղ), որպեսզի այնտեղ անհրաժեշտ պաշտպանություն ձեռք բերեն: Այդպիսով, Տերը նրանց շատ հստակ և որոշակի հրամաններ տվեց՝ չանել դա, որովհետև այդպիսի ընթացքը կործանման կհասցնի իրենց:

Եվ կրկին նրանք պետք է ընտրություն կատարեին, ընտրություն, որի առջև կանգնում է յուրաքանչյուրը. կյանքն ու խաղաղությունը հավատի և Հիսուսին հնազանդվելու միջոցով, կամ տառապանքներն ու մահը՝ հավատի բացակայության և հնազանդության բացակայության պատճառով: Անկախ հանգամանքներից՝ մեզանից յուրաքանչյուրին վերջին հաշվով անհրաժեշտ կլինի ընտրություն կատարել: Ի տարբերություն այն մարդկանց՝ մենք միշտ չէ, որ այդքան որոշակի և այդքան հստակ արտահայտված նախազգուշացումներ ենք ստանում, բայց մեզ նույնպես որոշակի նախազգուշացումներ են տրված Տիրոջ կողմից:

Կյա՞նք, թե՞ մահ, օրհնությո՞ւն, թե՞ անեծք: Ի՞նչ ընտրություն եք դուք կատարում ամեն օր. դեպի կյա՞նք, թե՞ դեպի մահ:

Երեքշաբթի դեկտեմբերի 15

Վերադարձ դեպի Եգիպտոս

Եթե դուք չեք կարդացել այս պատմության շարունակությունը, ապա Երեմիա մարգարեի գրքի 42-րդ գլուխը կարող է միանգամայն հրապուրիչ լինել: Ինչպե՞ս կվարվի ժողովուրդը: Նրանք կվարվե՞ն ըստ հավատի՝ հավատ, որը բացահայտվում է հնազանդության մեջ, և կմնա՞ն Հուդայում: Թե՞ կկրկնեն այն նույն սխալները, որ արվել են անցյալում, և, հստակ «Այսպես է ասում Տերը»-ին հետևելու փոխարեն՝ կվարվեն իրենց կամակորության համաձայն՝ չնայելով գալիք փորձությունների մասին Տիրոջ նախազգուշացումներին, որ սպասվում են նրանց, եթե նրանք վերադառնան Եգիպտոս: Այս նախազգուշացումները շարադրված են 42-րդ գլխի վերջին գլուխներում:

Կարդացե՛ք Երեմիա 43.1-7-ը: Ի՞նչ ընտրեցին նրանք: ____

_____

_____

Երբ Աստծո Խոսքը չի համապատասխանում մեր մտադրություններին, մենք, որպես կանոն, կասկածում ենք, որ այն Աստծուց է բխում: Նման եզրակացության եկան նաև այս մարդիկ և ղեկավարները: Ըստ երևույթին, Իսրայելում փոխվել էին միայն հանգամանքները, իսկ ժողովրդի մտածելակերպը նույնն էր մնացել: Նրանք մոռացան իրենց երդումը և որոշեցին իրենց ցասումը թափել Երեմիա մարգարեի գլխին: Բայց չցանկանալով բացահայտ հարձակվել՝ նրանք

մեղադրում են Բարուքին՝ մարգարեի ընկերոջն ու գրագրին, որ նա մարգարեի ցասումն է բերել իրենց վրա:

Կարդացե՛ք Ելից 16.3 և Թվոց 16.13-ը: Ի՞նչ զուգահեռներ կան այն բանի, ինչ ժողովուրդն ասաց Երեմիային, և նրա միջև, ինչ նրանց նախնիներն ասում էին Մովսեսին: _____

_____

_____

Մարդու էությունն այնպիսին է, որ նա միշտ փնտրում է որևէ մեկին, որպեսզի նրան մեղադրի իր խնդիրների մեջ, միշտ իր ցանկությունները կատարելու պատրվակ է որոնում: Այդպիսով, Բարուքին մեղադրեցին իր բոլոր հայրենակիցներին բաբելոնացիների ձեռքով սպանելու կամ էլ նրանց աքսորելու ցանկության մեջ: Երեմիան 43.1-7-ը չի ասում, թե ինչու էին մարդիկ այդպես մտածում, ճիշտ այնպես, ինչպես Սուրբ Գիրքը չի բացատրում, թե ինչու էր հրեա ժողովուրդը համարում, որ Մովսեսը որոշել է իրենց սպանել անապատում, եգիպտոսից դուրս գալուց հետո: Հույզերին ու կրքերին գերի լինելով՝ մարդիկ չեն կարող առողջ դատել: Որքա՜ն կարևոր է սեփական կրքերն ու հույզերը Տիրոջը ենթարկելը:

Որքա՞ն հաճախ ենք մենք թույլ տալիս, որ մեր կրքերն ու հույզերն ազդեն մեր դատողության վրա, կամ մենք անգամ մերժենք հստակ «այսպես է ասում Տերը»-ը: Մենք ինչպե՞ս կարող ենք պաշտպանվել հույզերից ու կրքերից: (Տե՛ս Բ Կորնթացիս 10.5-ը):

Չորեքշաբթի դեկտեմբերի 16

Գերեվարվածները

Կարդացե՛ք Երեմիա 43.8-13-ը: Տերն ի՞նչ ասաց Երեմիայի միջոցով: _____

_____

Տափնասը՝ Եգիպտոսի հյուսիսարևելյան սահմանին գտնվող մի քաղաք, ծանրակշիռ պաշտպանիչ ամրություններ ուներ, այնտեղ էին ապրում մեծ թվով հրեա վերաբնակներ:

Այստեղ կրկին Տերը Երեմիային հրամայում է մարգարեությունը խորհրդանշորեն պատկերել գործողություններով: Չնայած խոսքերի ուժին՝ գործողությունների թողած տպավորությունն անջնջելի է լինում:

Մենք չգիտենք, թե հատկապես ինչ կերպ պետք է Երեմիան քարերը թաղեր փարավոնի տան մուտքի մոտ: Իրավիճակը, սակայն, հստակ էր. անգամ մեծազոր փարավոնը չի կարող համեմատվել Տիրոջ հետ, իսկ Նա Իր Խոսքը կկատարի այնպես, ինչպես ասել է: Փախստականները, ովքեր մտածում էին, թե պաշտպանություն և անվտանգություն կգտնեն Եգիպտոսում, սխալվում էին ճիշտ նույն կերպ, ինչպես և նրանք, ովքեր ավելի վաղ համարում էին, որ պաշտպանություն և անվտանգություն կգտնեն, երբ Եգիպտոսը կգա իրենց մոտ (Երեմիա 37.7,8): Եգիպտական աստվածները, լինելով այլասերված երևակայության արդյունք, անօգուտ էին: Այդ աստվածներն իրենցից հեթանոսական գարշություններ էին ներկայացնում, որոնք մարդկանց պահում էին ծայրաստիճան անգիտության պայմաններում: Հրեաները, ճիշտ այնպես, ինչպես և մենք, պետք է իմանային, որ մեր միակ ճշմարիտ պաշտպանությունն ու անվտանգությունը Տիրոջը հնազանդությունն է:

«Երբ անձնուրացությունը դառնա մեր կրոնի մի մասը, մենք կկարողանանք հասկանալ և կատարել Աստծո կամքը, մեր աչքերը կօծվեն աչքերի դեղով այնպես, որ մենք կկարողանանք տեսնել Աստծո օրենքի գեղեցկությունը: Մենք կտեսնենք, որ միակ անվտանգ ուղին հնազանդության ուղին է: Աստված Իր ժողովրդից հաշիվ կպահանջի ճշմարտության այն լույսի համար, որ պարգևվել էր նրան: Նրա օրենքի պահանջները արդար և խելամիտ են, և Աստված մեզանից ակնկալում է այդ պահանջների կատարում՝ Քրիստոսի շնորհի օգնությամբ» (Է. Ուայթ, Ռևյու ընդ Հերալդ, 1890 թվականի փետրվարի 25):

Խորհեցե՛ք նաև հետևյալ խորհրդանիշի մասին. հրեաները, ցանկանալով անվտանգություն ձեռք բերել, վերադարձան Եգիպտոս: Ինչպիսի՞ հեգնանք: Հոգևոր իմաստով ի՞նչ եղանակներ կան՝ ենթարկվել «եգիպտոս վերադառնալու» գայթակղությանը՝ որոնելով ինչ-որ բան, ինչը, մեր կարծիքով, չենք կարող ունենալ Տիրոջ հետ:

Հինգշաբթի դեկտեմբերի 17

Բացահայտ անհնազանդություն

Կարդացե՛ք Երեմիա 44.1-10-ը: Գերիներն ինչո՞վ են զբաղվում Եգիպտոսում: _____

_____

Եգիպտական գերության ժամանակ Երեմիան բախվում է այն նույն խնդրին, որ ժողովուրդն ուներ Հուդայում: Այն ժամանակ նրա լուրը նախատեսված էր ղեկավարների համար, իսկ այժմ այն նախատեսված էր հասարակ մարդկանց համար, ովքեր գտնվում էին անազատության մեջ և կատարում էին նույն մեղքերը, որ ժողովրդին բերել էին պատուհասի:

Ի՞նչ ապշեցուցիչ պատասխան տրվեց Երեմիային, երբ նա նրանց դիմեց հանդիմանությամբ: (Երեմիա 44.15-19):

_____

_____

_____

Ապշեցնում է նրանց խստասրտությունն ու նրանք տիրած խաբեությունը: Նրանք փաստորեն նայում էին Երեմիայի աչքերին և բացահայտորեն անտեսում էին «Տիրոջ անունից» ասված խոսքերը:

Հիմնավորումը պարզ էր. Այն հեռավոր օրերին՝ մինչև Հովսիայի բարեփոխումը, երբ նրանք նշանակալի չափով ներծծվել էին հեթանոսական աստվածներին երկրպագելու ոգով, անգամ խունկ էին ծխում «երկնքի աստվածուհու» համար և անուշահոտություններ էին հեղում նրա համար, գործերը լավ էին: Նրանք նյութապես ապահովված էին և ապրում էին անվտանգության մեջ: Իսկ Հովսիայի բարեփոխումներից հետո, որոնք չափազանց ուշացած էին և կիսատ, նրանց վրա հասավ պատուհասը: Եվ այժմ նրանք հարցնում են, թե ինչու իրենք պետք է ականջ դնեն Երեմիային և նրա բոլոր նախազգուշացումներին:

Երեմիայի պատասխանը (Երեմիա 44.20-30) հետևյալն էր. *Ո՛չ, դուք չեք հասկանում: Հենց այն պատճառով, որ դուք կատարում էիք այդ բոլոր արարքները, ձեզ վրա թափվեցին դժբախտությունները: Ավելին, ձեր համառ հրաժարվելը վերափոխվելուց նշանակում է, որ է՛լ ավելի խոշոր պատուհասներ են գալու. և այն անվտանգությունը, որ դուք մտածում էիք ունենալ Եգիպտոսում, խաբեություն և կեղծիք է, ինչպես և հեթանոսական աստվածները, որոնց դուք երկրպագում եք: Ի վերջո, դուք կիմանաք ճշմարտությունը, բայց արդեն չափազանց ուշ կլինի:*

Ի՞նչ կարելի է ասել, երբ մեղքի և անհավատության մեջ թաղված մարդիկ լավ են ապրում, իսկ քրիստոնյաներն անցնում են սոսկալի փորձությունների միջով: Ինչպե՞ս ճիշտ վարվել այս իրականության մեջ:

Ուրբաթ **դեկտեմբերի 18**

Հետագա ուսումնասիրության համար

Երեմիա մարգարեի ողջ գրքի միջով, ինչպես և ողջ Աստվածաշնչով, կարմիր թելի նման անցնում է բարու և չարի թեման: Որպես քրիստոնյաներ՝ մենք ընդունակ ենք բարին տարբերելու չարից, որովհետև Աստված բազմիցս սահմանել է այդ հասկացությունները: (Տե՛ս, օրինակ, Հռոմեացիս 7.7, Միքիա 6.8, Հեսու 24.15, Մատթեոս 22.37-39, Երկրորդ Օրինաց 12.8-ը): Դե, իսկ եթե դուք չե՞ք հավատում Աստծուն: Ինչպե՞ս բարին տարբերել չարից: Հրապարակախոս աթեիստ Սեմ Հարրիսը առաջարկել է հետևյալը: Նա գրել է «բարոյական բնանկար» գիրքը, որտեղ պնդում է, որ բարին և չարը կարող են և պետք է հասկացվեն միայն գիտության տեսակետից: Այսինքն՝ նույն կերպ, ինչպես գիտությունը օգնել է մեզ՝ հասկանալու տարբերությունը ուժեղ միջուկային ուժերի և թույլ միջուկային ուժերի միջև, նա պետք է օգնի մեզ՝ ճիշտը տարբերելու սխալից և բարին՝ չարից: Նա նույնիսկ ենթադրում է, որ գիտությունը կկարողանա մի գեղեցիկ օր ազատվել չարից: «Խորհեցե՛ք, թե ինչ կարող էր տեղի ունենալ, եթե մենք դեղատոմս գտնեինք մարդկային չարիքի դեմ: Պատկերացրե՛ք, որ մարդկային ուղեղում համապատասխան փոփոխությունները կարող են արվել էժան, անցավ և անվտանգ կերպով: Հոգեկան շեղումների բուժումը հնարավոր կդառնա սննդային հավելումների շնորհիվ՝ D վիտամինի նման: Չարիքն այժմ կդառնա լոկ սննդային անբավարարություն» (Բարոյական բնանկար, Simon & Schuster, Inc., Kindle Edition, 109): Այն գիտնականների մեծամասնությունը, ովքեր չեն հավատում Աստծուն, դժվարություններ կունենան՝ մտածելով, թե գիտությունը կարող է լուծել այս խնդիրները, սակայն եթե չհավատանք Աստծուն, ապա էլ որտե՞ղ կարելի է գտնել այդ լուծումները:

Հարցեր քննարկման համար

1. «Մեզանից է կախված, թե ինչպես ենք մենք ընդունում Տիրոջ պայմանները» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հատոր 1, 118): Ինչո՞ւ սխալ է համարելը, որ շնորհը տրվում է առանց պայմանների: Պայմանները և գործերը կամ արժանիքներն Աստծո առջև՝ նույն բանը չեն: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել տարբերել գործերով փրկության մասին կեղծ ուսմունքը (օրինամոլություն) և կեղծ ուսմունքն այն մասին, որ փրկությունը պայմանական չէ (էժանագին շնորհ):

2. Խորհեցե՛ք հինգշաբթի օրվա դասի վերջի բարդ հարցի մասին: Պատկերացրե՛ք, որ ինչ-որ մեկն ասում է. «Ես չեմ հավատում Հիսուսին, ես անգամ չեմ հավատում Աստծուն, բայց տեսե՛ք, թե որքան լավ եմ ես ապրում: Իրականում, ես կասեի, որ իմ կյանքն ավելի լավն է, քան ձերը, թեև դուք քրիստոնյա եք»: Դուք ի՞նչ կպատասխանեիք այդպիսի մարդուն:

ԴԱՍ 13

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
19-25

ԵՐԵՄԻԱՅԻ ԴԱՍԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Երեմիա 2.13, 6.20, 7.1-10, Մատթեոս 9.12, Երկրորդ Օրինաց 6.5, Երեմիա 10.1-15, 23.1-18:

Հիշելու համարը.
«Ահա օրեր են գալիս, ասում է Տերը, որ Դավիթի համար վեր կկացնեմ արդարության Ճառավիղ և իբր թագավոր կթագավորի ու իմաստությամբ կվարվի, և իրավունք ու արդարություն կգործի երկրի վրա» (Երեմիա 23.5):

Մենք ավարտում ենք Երեմիա մարգարեի գրքին նվիրված դասերի շարքը: Դրանք շատ հետաքրքիր էին: Մենք շատ հուզիչ իրադարձություններ տեսանք, պատումը զուրկ չէր ավյունից և զգացմունքներից: Ինչպես և բոլոր մարգարեները, Երեմիա մարգարեն էլ չէր գրում անօդ տարածության մեջ. նրա լուրը Տիրոջ կողմից ուղարկված էր որոշակի ժամանակահատվածում, որոշակի վայրում և որոշակի հանգամանքներում ապրող ժողովրդի համար:

Ու թեև Երեմիայի կյանքի պարագաները արմատապես տարբերվում են մեր կյանքի և շատ ուրիշ սերունդների կյանքի պարագաներից, ովքեր կարդացել են Երեմիա մարգարեի գիրքը, այնտեղ շարադրված կարևորագույն սկզբունքները արդիական են Աստծո ժողովորդի յուրաքանչյուր սերնդի համար:

Դրանք այնպիսի ճշմարտություններ են, ինչպիսիք հավատարմությունն Աստծուն և հնազանդությունը Նրա պատվիրաններին, ճշմարիտ կրոնը՝ սրտի կրոնը, ի տարբերություն ունայն և մեռած ծեսերի, որոնք մարդկանց թողնում են ինքնահանգստացման կեղծ վիճակում, մարդկանց պատրաստակամությունը՝ հանդիմանություններ լսել, անգամ եթե դրանք չեն համապատասխանում իրենց ցանկություններին, ճշմարիտ վերածնունդն ու վերափոխումը, Տիրոջը և Նրա խոստումներին, ոչ թե մարդուն ապավինելը...

Ցանկը կարելի է շարունակել: Այս շաբաթ եկե՛ք դիտարկենք այն դասերից մի քանիսը, որ մենք կարող ենք քաղել Իր ժողովրդի

հանդեպ Աստծո սիրո այս հայտնությունից՝ անգամ սպառնալից նախազգուշացման պայմաններում, թե ինչի կարող են հանգեցնել նրանց գործողությունները:

Միաշաբթի **դեկտեմբերի 20**

Երեմիայի Տերը

Մենք՝ որպես հավատացյալ մարդիկ, հասկանում ենք, որ մեծ պայքարի կենտրոնում կարևոր հարց է դրված. ո՞րն է Աստծո բնավորությունը: Ո՞վ է Աստված իրականում: Նա դժնի բռնակա՞լ է, ինչպիսին Նրան ներկայացնում է սատանան, թե՞ սիրող ու հոգատար Հայր, Ով միայն բարին է ցանկանում մեզ: Սրանք իսկապես ողջ տիեզերքի ամենակարևոր հարցերն են: Ի վերջո, ի՞նչ տեղի կունենար մեզ հետ, եթե Աստված լիներ ոչ թե բարի, սիրող ու անձնազոհ, այլ բռնակալ ու դաժան: Եթե այդպիսի Աստված պետք է ունենանք, ավելի լավ է առհասարակ Աստված չունենալ: Այդ պատճառով այս հարցերը շատ մեծ կարևորություն ունեն: Բարեբախտաբար, մենք ունենք պատասխաններ, որոնք ամենից լավ ներկայացվել են խաչի վրա:

«Երբեք չի մոռացվի, թե ինչպես Նա, Ում ստեղծագործ զորությունն արարել և այժմ էլ կյանքի է կոչում անհամար աշխարհներ՝ ողջ անհուն տիեզերքում, Աստծո Սիրելին, երկնքի Վսեմությունը, Ում սիրով երկրպագում են քերովբեները և սերովբեները, խոնարհվեց, որպեսզի բարձրացնի ընկած մարդուն. ինչպես Նա Իր վրա կրեց մեղքի ողջ մեղավորությունն ու ամոթը. բաժանվեց Հորից, երբ Հայրը Նրանից ծածկեց Իր երեսը, մինչև որ կործանվող աշխարհի ցավը կոտրեց Նրա սիրտը և Գողգոթայի խաչի վրա Նրան զրկեց կյանքից: Երբեք չի մոռացվի, թե ինչպես բոլոր աշխարհների Արարիչը, բոլոր ճակատագրերը Կատարողը Իրենից ցած դրեց փառքը և Իրեն խոնարհեցրեց՝ մարդու հանդեպ սիրուց մղված. դա մշտապես կապշեցնի և կհիացնի տիեզերքին» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 651):

Աստծո էությունն ու բնավորությունն ինչպե՞ս են բացահայտվում Երեմիա մարգարեի գրքի տեքստերում: Այս համարները մեզ ի՞նչ են ասում Նրա մասին:

Երեմիա 2.13 _____

Երեմիա 5.22 _____

Երեմիա 11.22 _____

Երեմիա 31.3 _____

Երեմիա 3.7 _____

Ահա՛ այն բազմաթիվ կերպարներից ու արտահայտություններից մի քանիսը, որոնք օգտագործվում են Երեմիա մարգարեի գրքում, որոնք մեզ համար բացահայտում են մեր Աստծո էությունն ու բնավորությունը: Նա կյանքի Աղբյուրն է, ամենակարող Արարիչը, արդարության Աստվածը, Աստված, Ով սիրում է մեզ և մեզ կոչ է անում կրկին ու կրկին ապաշխարել մեր մեղքերի համար և թողնել՝ մեզ կործանման տանող ճանապարհները:

Աստծո սիրո ի՞նչ ապացույցներ եք դուք վերապրել:

Երկուշաբթի դեկտեմբերի 21

Ծեսերն ու մեղքը

Երեմիա մարգարեի գրքում Տերը հրեաներին դրդում էր հեռանալ սառը, մեռյալ, բայց միևնույն ժամանակ լավ կազմակերպված ծեսերից, որոնք սկսել էին գերիշխել հավատի նկատմամբ, ծեսեր, որոնք, իրենց հավատի համաձայն, ծածկում էին իրենց մեղքերը:

Ինչպես ավելի վաղ ասվեց (արժե կրկնել), դեպքերի ճնշող մեծամասնության դեպքում Երեմիան ղեկավարների, քահանաների և մարդկանց հետ էր, ովքեր վստահ էին, որ Աստծո հետ իրենց հարաբերությունները ճիշտ են ի սկզբանե, քանի որ իրենք ընտրյալ ժողովուրդ են՝ Աբրահամի զավակները, ուխտի ժողովուրդը: Որքա՜ն տխուր մոլորություն է, որից մենք՝ որպես Աբրահամի սերունդներ, պետք է զգուշանանք (Գաղատացիս 3.29):

Երեմիա մարգարեի ո՞ր լուրն է բովանդակվում հետևյալ համարներում: Եվ, որ ամենակարևորն է, այստեղ շարադրված սկզբունքներն ինչպե՞ս կարելի է կիրառել Տիրոջ հետ մեր առօրյա կյանքում: (Երեմիա 6.20, 7.1-10): ___

_____

_____

_____

Կարդացե՛ք Երեմիա 7.9,10-ը: Եթե դուք երբևէ ցանկանաք տեսնել իրավիճակներ, որոնք համապատասխանում են «էժանագին շնորհ» եզրույթին, ապա դրանք կիրառելի են այս հանգամանքներում: Մարդիկ հաճույքով և գիտակցաբար մեղանչում են, իսկ հետո *գալիս են տաճար, «երկրպագում են» ճշմարիտ Աստծուն և ներում են խնդրում իրենց մեղքերի համար:* Աստված չի հայհոյվում: Եթե այդ մարդիկ

չփոխեն իրենց կենսակերպը, հատկապես՝ իրենց վերաբերմունքը իրենց միջավայրում եղած թույլերի նկատմամբ, ապա նրանք կտրուկ քննադատության կհանդիպեն:

Ի՜նչ խաբեություն էր տիրել նրանց մտքերին: Նրանք համարում էին, որ իրենց կազմակերպված կրոնը՝ իր ծեսերով հանդերձ, բավական է, որպեսզի ծածկի իրենք մեղքերը, այնպես որ կարելի է շարունակել մեղանչել:

Ինչո՞վ են տարբերվում Երեմիայի նախազգուշացումներն ու Մատթեոս 9.12-ում գրի առնված Հիսուսի խոսքերը: Ինչո՞ւ է այդքան կարևոր այդ տարբերությունը տեսնելը:

Երեքշաբթի դեկտեմբերի 22

Սրտի կրոնը

«Ուրեմն մեզանից ամեն մեկն իր անձի համար պիտի հաշիվ տա Աստծուն» (Հռոմեացիս 14.12):

Երեմիա մարգարեի գրքի մեծ մասը նախատեսված է ողջ ժողովրդի համար: Նա կրկին ու կրկին խոսում է Իսրայելի ու Հուդայի մասին ընդհանրացված՝ որպես Աստծո «որթի» (Երեմիա 2.21), որպես Տիրոջ «սիրեցյալի» (Երեմիա 11.15, 12.7), որպես Աստծո «բաժնի» (Երեմիա 12.7-9), որպես Նրա «խաղողի այգու» (Երեմիա 12.10), որպես Նրա «հոտի» (Երեմիա 13.17): Անկասկած, Երեմիա մարգարեի գրքում մենք պատկերացում ենք ստանում այդ ժողովրդի հավաքական բնույթի մասին:

Իհարկե, Նոր Կտակարանում եկեղեցին կրկին ու կրկին հասկացվում է հավաքական իմաստով (տե՛ս Եփեսացիս 1.22, 3.10, 5.27):

Սակայն փրկությունը անձնական և ոչ թե հավաքական փորձառություն է: Մենք խմբով չենք փրկվում: Նոր Կտակարանի եկեղեցու նման՝ հրեա ժողովուրդը բաղկացած էր անհատներից, և հենց այդ անձնային մակարդակում են վեր հանվում իսկապես կարևոր հարցերը: Երկրորդ Օրինաց 6.5 նշանավոր համարը՝ «...Եվ սիրիր քո Եհովա Աստծուն բոլոր սրտովդ, բոլոր հոգովդ և բոլոր զորությունովդ», թեև ուղղված էր ողջ ժողովրդին, գրի է առնված եզակի թվի երկրորդ դեմքով: Այսինքն՝ դերանունն օգտագործվում է եզակի թվով. Աստված դիմում էր յուրաքանչյուրին անհատապես: Ի վերջո, մեզանից յուրաքանչյուրն անձամբ ստիպված կլինի իր համար հաշիվ տալ Աստծուն:

Երեմիա մարգարեի գրքում ներկայացված է նույն ճշմարտությունը:

Հետևյալ համարներն ի՞նչ են ասում Տիրոջ հետ անձնական, անհատական ընթացքի կարևորության մասին:

Երեմիա 17.7 _____

Երեմիա 17.10 _____

Երեմիա 29.13 _____

Երեմիա 9.23,24 _____

Թեև Աստվածաշունչը ինչպես Հին, այնպես էլ Նոր Կտակարանում պատմում է Աստծո եկեղեցու հավաքական կերպարի մասին, ճշմարիտ հավատը յուրաքանչյուր մարդու՝ տղամարդու կամ կնոջ գործն է, Տիրոջը նվիրաբերման պտուղը, կյանքի անձնական ընտրությունը՝ հավատով և հնազանդությամբ:

Անկասկած, մեզանից յուրաքանչյուրը անձնական պատասխանատվություն է կրում իր սեփական կյանքի համար, սակայն մենք վստա՞հ ենք, որ անում ենք մեզանից կախված ամեն բան՝ ուրիշներին քաջալերելու և ոգևորելու համար:

Չորեքշաբթի դեկտեմբերի 23

Կուռքերի դարաշրջանի մայրամուտը

Ո՞րն էր ժողովրդի կատարած ամենախոշոր մեղքերից մեկը, որը Երեմիան մշտապես հանդիմանում էր: (Երեմիա 10.1-15): _____

_____

_____

_____

Հետաքրքիր է, որ այս տեքստերում մարգարեն ցույց է տալիս ոչ միայն կուռքերին երկրպագելու ունայնությունը, անօգուտ ու անմիտ լինելը, այլև նրանց հակադրում է կենդանի Աստծուն: Այդ կուռքերն անզոր են, անօգուտ, ունայն ու կեղծ. ինչպիսի՜ հակադրություն Տիրոջ հետ, Ով արարել է երկինքն ու երկիրը: Նա կլինի հավիտյան, այն դեպքում, երբ կուռքերը կանհետանան ընդմիշտ: Ուրեմն, ո՞ւմ պետք է երկրպագենք և նվիրենք մեր ողջ կյանքը. նրա՞ն, ինչը թույլ, կեղծ, անտեղի ու անզոր է, թե՞ Տիրոջը, Ում ուժն ու զորությունն այնքան մեծ են, որ Նա ստեղծել ու պահպանում է տիեզերքը: Պատասխանն ակնհայտ է:

Սակայն, չնայած պատասխանի ակներևությանը, մենք գտնվում ենք կռապաշտության գիրկն ընկնելու վտանգի առջև: Թեև այսօր մենք չենք երկրպագում այն նույն կուռքերին, որոնց երկրպագում էին Երեմիայի ժամանակներում, մեր ժամանակակից կյանքը լի է կեղծ աստվածներով: Ժամանակակից կուռքերը նրանք են, ինչ մենք սիրում ենք Աստծուց ավելի շատ. այն, ինչին մենք «երկրպագում ենք» (իսկ երկրպագությունը միայն երգեցողությունն ու աղոթքները չեն), դառնում է մեր աստվածը, և մենք վերածվում ենք կռապաշտների:

Ի՞նչը կարող է ձեզ համար կուռք դառնալ այսօր: Հնարավոր է՝ դրանք թվային սարքերն են, փողը, փառքը և անգամ ուրիշ մարդիկ: Կազմե՛ք հնարավոր կուռքերի ցանկը, իսկ հետո հարցրե՛ք ինքներդ ձեզ. ի վերջո, ի՞նչ իրական փրկություն են դրանք առաջարկում: _____

_____

_____

_____

Իհարկե՛, բանականությամբ մենք հասկանում ենք, որ այս իրերից ոչ մեկը արժանի չէ երկրպագության: Մենք գիտենք, որ վերջնական արդյունքում այս աշխարհի առաջարկած ոչ մի բան չի կարող բավարարել մեր հոգու կարիքները և, իհարկե, չի կարող փրկել մեզ: Մենք գիտենք, որ այդ բոլոր առարկաները, եթե մենք զգույշ չլինենք, եթե չնայենք Հիսուսին և հիշենք այն, ինչ Նա արել է մեզ համար, մեզ հեշտությամբ կտանեն դեպի ժամանակակից կռապաշտություն, որի դեմ այդքա՜ն ջանադրաբար հանդես էր գալիս Երեմիան:

Հինգշաբթի դեկտեմբերի 24

Մնացորդը

«Հուդայի ուրացության վերջին տարիներին մարգարեների կոչերը, թվում է, քիչ կարեկցանք էին առաջ բերում մարդկանց մեջ, և երբ քաղդեական զորքը երրորդ և վերջին անգամ պաշարեց Երուսաղեմը, հույսը մարեց յուրաքանչյուր մարդու սրտում: Երեմիան կանխագուշակել էր քաղաքի կատարյալ ավերում՝ բնակիչներին համառորեն աղաչելով հանձնվել, ինչի համար, վերջիվերջո, հայտնվեց բանտում: Բայց Աստված անլուր հուսահատության մեջ չլքեց հավատարիմ մնացորդին, որը դեռ գտնվում էր քաղաքում: Անգամ այն ժամանակ, երբ Երեմիան գտնվում էր նրանց խստագույն հսկողության ներքո, ովքեր

ծաղրում էին նրա կոչերը, նա նոր հայտնություն ստացավ ներելու և փրկելու երկնքի ցանկության մասին, և այդ ցանկությունն այն ժամանակից մինչև մեր օրերը մխիթարության անհատնում աղբյուր է Աստծո եկեղեցու համար» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 466):

Անգամ գերակշիռ ուրացության և կործանման պայմաններում Աստված միշտ ունի հավատարիմ, թեկուզ և փոքրաթիվ ժողովուրդ: Թեև, ինչպես և շատ մարգարեների գրքերում, Երեմիա մարգարեի գրքում էլ ուշադրության մեծ մասը հատկացված է ուրացության և դավաճանության հարցերին (որովհետև հենց դրանից էր Տերը ցանկանում փրկել Իր ժողովրդին), ողջ աստվածաշնչյան պատմության ընթացքում Տերն ունեցել է հավատարիմ մնացորդ: Այդպես շարունակվելու է մինչև ժամանակի վերջը (տե՛ս Հայտնություն 12.17):

Մնացորդի հայեցակարգն ինչպե՞ս է արտահայտված Երեմիա 23.1-8-ում: Դա ինչպե՞ս է վերաբերում նորկտակարանյան ժամանակներին: (Տե՛ս նաև Երեմիա 33.14-18-ը):

_____

_____

_____

5-7-րդ համարներում աստվածաբանները միշտ մեսիական մարգարեություն են տեսել՝ մարգարեություն Աստծո հավատարիմ ժողովրդի փրկության մասին: Իսկապես, բաբելոնյան գերությունից հետո մնացորդը վերադարձավ, սակայն այդ վերադարձը փառավոր չէր: Սակայն Աստծո մտադրությունները կկատարվեն Դավթի ցեղի Սերնդի միջոցով, «արդար Ճյուղի» միջոցով, Թագավորի, Ով մի գեղեցիկ օր թագավորելու է ողջ երկրին:

Այս մարգարեությունը մասնակիորեն կատարվեց Հիսուսի առաջին գալստյան ժամանակ (տե՛ս Մատթեոս 1.1, 21.7-9, Հովհաննես 12.13-ը): Բայց այն լիովին կկատարվի երկրորդ գալստյան ժամանակ (տե՛ս Դանիել 7.13,14-ը), երբ բոլորը, ովքեր հավատարիմ են Աստծուն՝ Նրա ճշմարիտ մնացորդը, հավիտյան կապրի խաղաղության և անվտանգության մեջ: Փրկությունը, որը սկզբում խորհրդանշորեն ներկայացվեց Եգիպտոսից ելքի միջոցով, կլինի վերջնական, լիակատար ու հավերժական:

Դուք ինչի՞ն եք ապավինում: Ինչպե՞ս կարող ենք սովորել ավելի շատ վստահել Աստծո խոստումներին և դրանց վերջնական կատարմանը մեր կյանքում: Մենք ուրիշ ի՞նչ ունենք բացի դրանցից:

Հետագա ուսումնասիրության համար

Շատ տարիներ առաջ Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու ծառայող Ու. Դ. Ֆրազին մի քարոզ է կարդացել, որը կոչվում էր «Հաղթողները և պարտվողները»: Այնտեղ նա քննարկում էր զանազան աստվածաշնչյան կերպարների կյանքը, նրանց աշխատանքն ու ծառայությունը և հարց էր տալիս նրանցից յուրաքանչյուրի մասին. «Նա հաղթո՞ղ էր, թե՞ պարտվող»: Օրինակ՝ նա քննարկում էր Հովհաննես Մկրտչի կյանքը, ով միայնակ կյանքով ապրում էր անապատում: Հովհաննեսը սակավաթիվ հետևորդներ ուներ Հիսուսի համեմատ, Ով գալիս էր իր հետևից: Ավելին, Հովհաննեսը իր վերջին օրերն անցկացրել էր բանտում, որտեղ, երբեմն նրան հաղթում էին կասկածները, և, վերջիվերջո, նա գլխատվեց (Մատթեոս 14): Այս ամենի թվարկումից հետո հովիվ Ֆրազին հարց է տալիս. «Հովհաննեսը հաղթո՞ղ էր, թե՞ պարտվող»:

Իսկ ի՞նչ կասեք Երեմիա մարգարեի մասին: Որքանո՞վ էր հաջող նրա կյանքը: Նա շատ էր տառապել և չէր վախենում այդ մասին խոսելուց: Բացի հազվադեպ բացառություններից, թվում է՝ քահանաներին, մարգարեներին, թագավորներին ու հասարակ ժողովրդին ոչ թե պարզապես դուր չէր գալիս այն, ինչ ասում էր մարգարեն, այլև վրդովվեցնում էր: Նրան անգամ սեփական ազգի դավաճան էին համարում: Վերջիվերջո, վրա հասան ավերումն ու կործանումը, որոնց մասին նա նախազգուշացնում էր իր ողջ կյանքում՝ ժողովրդի կողմից նրա խոսքը մերժվելու պատճառով: Նրան նետել էին կեղտոտ փոսը՝ հուսալով, որ նա այնտեղ կմահանա: Նա ողջ մնաց՝ վկա դառնալու համար իր ժողովրդի սոսկալի աքսորին և Երուսաղեմի ու տաճարի ավերմանը: Այսպիսով, մարդկային տեսակետից Երեմիա մարգարեի ծառայությունը հաջող չէր: Ինչ-որ չափով կարելի է պնդել, որ նրա կյանքը խղճուկ էր ու աննշան:

Հարցեր քննարկման համար

1. Ո՞վ էր Երեմիան՝ հաղթո՞ղ, թե՞ պարտվող: Ինչո՞ւ եք դուք այդպես համարում: Եթե դուք պնդում եք, որ նա հաղթող էր, ապա դուք ի՞նչ չափանիշներով եք գնահատում նրա կյանքը, և ինչո՞ւ: Ի՞նչ չափանիշներ է անհրաժեշտ օգտագործել, որպեսզի փորձենք հաս-

կանալ, թե ինչն է ճիշտ, և ինչը՝ սխալ, ինչ է բարին և չարը, հաջողությունն ու անհաջողությունը:

2. Երեմիան ինչպե՞ս հանդես եկավ որպես նախակերպար՝ Հիսուսի կյանքի և ծառայության համար: Ի՞նչ զուգահեռներ գոյություն ունեն:
3. Այս շաբաթ ավելի վաղ մենք դիտարկում էինք «էժանագին շնորհի» միտքը՝ համոզմունք, որ որոշակի կրոնական ծեսերի կատարումը բավարար է մեղքից փրկվելու համար: Ի՞նչ է ճշմարիտ շնորհը՝ ի տարբերություն էժանագինի, ոչինչ չարժեցողի և անգամ խաբուսիկի. որի մասին նախազգուշացնում է մարգարեն:

Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2015 թվականի չորրորդ եռամսյակ

ԵՐԵՄԻԱ

Իմրե Տոկիկս

Գլխավոր խմբագիր՝	*Պավել Սարգսյան*
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝	*Մերինե Աթոյան*
Վերստուգող՝	*Ալվարդ Մադոյան*
Գրական խմբագիր՝	*Գեղեցիկ Մարտիրոսյան*
Համակարգչային ձևավորող՝	*Կորյուն Կակոյան*